

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՂԱԲԱԲՅԱՆ ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԺԲ.00.04 – Դատական իրավունք «դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
--------------------------	----------

ԳԼՈՒԽ 1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ	13
--	-----------

1.1. Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի իրավական կարգավորումը խորհրդային ժամանակաշրջանում և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակման փուլում	13
--	----

1.2. Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի միջազգային իրավական կարգավորումը	24
---	----

ԳԼՈՒԽ 2. ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒԹՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒՅՈՒՆՆԵՐԸ.....	37
-----------------------------------	-----------

2.1. Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները.....	37
---	----

2.2. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթում ապացուցման ենթակա հանգամանքների առանձնահատկությունները.....	61
--	----

2.3. Քննչական գործողությունների կատարմանը անչափահասի մասնակցության առանձնահատկությունները	78
--	----

ԳԼՈՒԽ 3. ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒԹՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒՅՈՒՆՆԵՐԸ.....	95
-----------------------------------	-----------

3.1. Անչափահասների վերաբերյալ գործերով պաշտպանի իրավական վիճակի կարգավորման առանձնահատկությունները.....	95
--	----

3.2. Անչափահասների վերաբերյալ գործերով օրինական ներկայացուցչի իրավական վիճակի կարգավորման առանձնահատկությունները	110
---	-----

ԳԼՈՒԽ 4. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՍԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ	125
--	------------

4.1. Անչափահասների նկատմամբ իրականացվող քրեական գործով վարույթը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը	125
4.2. Դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները որպես քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու դատավարական հիմք.....	146
ՎԵՐՋԱԲԱՆ	172
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	180
ՀԱՎԵԼՎԱԾ 1.	195
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	196

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը; Հայաստանի Հանրապետությունում շարունակվող դատաիրավական բարեփոխումների հիմնական խնդիրը՝ ինչպես անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, այնպես էլ հանցագործությունների արդյունավետ բացահայտման կառուցակագերի ստեղծումը: Նշված խնդիրներն արդիական են բոլոր հանցագործություններով, այդ թվում նաև անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերով: Նախնական քննության մարմինները անչափահասների վերաբերյալ գործերով վարույթը պետք է իրականացնեն այնպես, որպեսզի մի կողմից լուծեն անչափահասների կողմից հանցագործությունների կանխման, նրանց ուղղմանն ու դաստիարակման խնդիրները, իսկ մյուս կողմից՝ ապահովեն նշված կատեգորիայի անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով հաստատված «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնների (Պեկինյան կանոնների) 1.4. հոդվածի համաձայն՝ «Անչափահասների նկատմամբ արդարադատությունը պետք է յուրաքանչյուր երկրի ազգային զարգացման ընթացքի հիմնական բաղադրիչ մասը հանդիսանա՝ բոլոր անչափահասների համար սոցիալական արդարությունը բազմակողմանիորեն ապահովելու շրջանակներում, այսպիսով միաժամանակ օժանդակելով երիտասարդության պաշտպանությանը և հասարակության մեջ ապահովելով խաղաղ կարգ ու կանոն»: Այստեղ մասնավորապես սահմանված է, որ անչափահասների նկատմամբ վարույթի հատուկ կարգը հիմնվում է, առաջին հերթին, անչափահասների տարիքային, սցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկությունների վրա, որոնք պահանջում են լրացուցիչ երաշխիքներ նրանց իրավունքների իրացման համար:

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման 91-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում կան դրույթներ, որոնք անհամատեղելի են առաջադեմ հասարակություններում անչափահասների գոր-

ծերով արդարադատության ասպարեզում ընդունված պրակտիկային: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության գործող օրենսգրքում անչափահասներին, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրերում պահելու համար սահմանված են նույն ժամկետները, ինչ չափահասների դեպքում, ինչը տարբեր վտանգներ է ներառում՝ հաշվի առնելով անչափահասների առանձնակի խոցելիությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը գտնվում է վերանայման փուլում՝ ժամանակն է վերջնական լուծում տալ այս հիմնախնդրին»:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած գոյություն ունեցող միջազգային իրավական ակտերի, տարբեր երկրներում անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները տարբեր են և դա պայմանավորված է այդ երկրների իրավական համակարգերի ինքնատիպությամբ: ՀՀ քրեադատավարական գործող օրենսդրության և դրա հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ դրանք չեն համապատասխանում միջազգային իրավական չափորոշիչներին և փաստացի վտանգում են ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը:

Միաժամանակ, պետք է ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծը¹ անչափահասների վերաբերյալ գործերով նախատեսում է այնպիսի կառուցակարգեր և երաշխիքներ, որոնք որակապես տարբերվում են ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքից: Կարծում ենք, որ Նախագծում տեղ գտած կարգավորումները կարող են վերացնել այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք առկա են այսօր:

Վերոգրյալը վկայում է անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունների ուղղությամբ գիտական հետազոտությունների անհրաժեշտության և հրատապության մասին: Ընդ որում՝ պետք է ընգծել, որ նման հետազոտություններ պետք է իրականացնել բարեփոխումների ուղղվածությունը և ուղին որոշելու նպատակով, հակառակ դեպքում այն որևէ արդյունք չի տա:

Հերագորության թեմայի գիտական մշակվածության աստիճանը:

¹ Այսուհետև՝ Նախագիծ:

Խորհրդային ժամանակաշրջանից մինչ այսօր բազմաթիվ հետազոտություններ են նվիրվել քրեական դատավարությունում անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի առանձնահատկություններին: Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի առանձնահատկություններն ուսումնասիրվել են հայտնի դատավարագետներ՝ Գ.Ն. Վետրովայի, Բ.Բ. Բուլատովի, Օ.Խ. Գալիմովաի, Ն.Ի. Գուկովսկու, Ա. Ի. Դոլգովայի, Կ.Բ. Կալինովսկու, Գ.Ն. Մինկովսկու, Է.Բ. Մելնիկովայի, Վ.Վ. Շիմանովսկու, Ա.Ս. Լանդոյի, Գ.Պ.Սարկիսյանցի, Մ.Ս.Ստրոգովիչի, Գ.Ս.Ղազինյանի, Ս.Ա.Դիլբանդյանի, Հ.Հ. Ղուկասյանի, Ա.Ս.Ղամբարյանի, Ա.Ռ. Հարությունյանի, Ա. Թաթոյանի, Դ.Մ. Մելքոնյանի, Ռ.Ն. Մելիքյանի, Ս.Ռ. Մարաբյանի, Դ. Թումասյանի և այլոց կողմից:

Քրեադատավարական նոր օրենսդրության ընդունման նախաշեմին քրեական դատավարությունում անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունների հետազոտությունների անհրաժեշտությունը դարձավ ավելի արդիական: Կարծում ենք, որ հարկավոր են քրեական դատավարությունում անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի հիմնախնդիրների մասին նոր, համակարգային հետազոտություններ, որոնց արդյունքում պետք է ստեղծվեն այնպիսի օրենսդրական կառուցակարգեր, որոնք կապահովեն նշյալ գործերով արդյունավետ քննության հնարավորություն:

Հեղազոտության օբյեկտը օրենքով կարգավորված հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նախնական քննության փուլում անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի ընթացքում:

Հեղազոտության առարկան Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում անչափահասների վերաբերյալ գործերով դատավարական ձևի առանձնահատկությունների վերաբերյալ տեսական պատկերացումներն են, ինչպես նաև օրենսդրական կարգավորման օրինաչափությունները, բովանդակությունը, խնդիրներն ու հեռանկարները:

Արենախոսության հեղազոտման նապատակը և խնդիրները – Սույն ատենախոսության հետազոտության նպատակը անչափահասների վերաբերյալ քրեական գոր-

ծերով վարույթի ընթացքում առկա հիմնախնդիրների բազմակողմանի ուսումնասիրությունն է, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված հիմնավոր գիտական առաջարկությունների մշակումը, որոնք ուղղված են նշված վարույթի արդյունավետ իրավական կարգավորմանը:

Հետազոտության մատնանշված նպատակները կանխորոշել են փոխկապակցված և փոխալսմանավորված հետևյալ տեսական և գործնական խնդիրների շրջանակը.

- ցույց տալ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի ծագումը, կայացումը և զարգացումը,
- վերլուծել անչափահասների վերաբերյալ գործերով վարույթը կարգավորող միջազգային իրավական նորմերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության մեջ դրանց արտացոլվածության աստիճանը,
- ներկայացնել անչափահասների վերաբերյալ գործերով ապացուցման առարկայի նշանակությունը և առանձնահատկությունները,
- ցույց տալ անչափահասների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկություններն ու դրանց արդյունավետությունը,
- վերլուծել անչափահասների վերաբերյալ գործերով դատավարության մասնակիցների կարգավիճակի առանձնահատկությունները,
- ուսումնասիրել քննչական գործողություններին անչափահասների մասնակցության առանձնահատկությունները,
- որոշել անչափահասների նկատմամբ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հիմնական առանձնահատկությունները,
- ձևակերպել առաջարկություններ, որոնք ուղղված կլինեն անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի իրավակարգավորումների կատարելագործմանը և դրա կիրառման արդյունավետության բարձրացմանը:

Արեւնախոսության մեթոդաբանական հիմքը հասարակական գործընթացների և իրավական երևույթների ճանաչողության տեսության ժամանակակից դրույթներն են, դիալեկտիկական փիլիսոփայության դրույթները, ճանաչողության համագիտական մեթոդները՝ վերլուծությունը, համադրումը, համակարգային մոտեցումը, ինդուկցիայի և

դեդուկցիայի տրամաբանական հնարքները: Թեմայի մշակման ընթացքում օգտագործվել են նաև մասնակի-գիտական մեթոդներ՝ պատմական, իրավահամեմատական, իրավատրամաբանական:

Արենախոսության տեսական հիմքը կազմել են միջազգային ակտերը, իրավունքի տեսության և պատմության, ինչպես նաև քրեական իրավունքի և քրեական դատավարության ոլորտի գիտական աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ-իրավական և փորձառական հիմքը կազմել են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ դատական օրենսգիրքը, «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, ատենախոսությունում քննարկվող հարցերին վերաբերող միջազգային-իրավական ակտերը, ինչպես նաև առանձին հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի վճիռները, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1694-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության մասին 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 175-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հետազոտության փորձառական հիմքը կազմում են 2015-2017 թթ. ընկած ժամանակահատվածում այն վիճակագրական տվյալներ, որոնք արտացոլում են հանրապետությունում անչափահասների գործերով նախաքննության մարմինների և դատարանի գործունեության արդյունքները²: Հեղինակի կողմից ուսումնասիրվել են անչափահաս-

² ՀՀ քննչական կոմիտեի վերլուծական տվյալների հիման վրա՝ 2015 թվականի անչափահասների գործերով դատարան ուղարկված գործերի վիճակագրությունը հետևյալն է՝ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 97 գործ, դատարան ուղարկված գործերով անչափահասների թիվը՝ 145 անձ, ոչ արդարացնող հիմքերով կարճված գործերով, գործի մասերով և մերժված նյութերով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասների թիվը՝ 19 անձ: 2016 թվականի անչափահասների գործերով դատարան ուղարկված գործերի վիճակագրությունը հետևյալն է՝ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 107 գործ, դատարան ուղարկված գործերով անչափահասների թիվը՝ 136 անձ, ոչ արդարացնող հիմքերով կարճված գործերով, գործի մասերով և մերժված նյութերով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասների թիվը՝ 46 անձ: Ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումներում

ների կողմից կատարված հարյուրից ավելի քրեական գործեր: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան: Հատուկ մշակված հարցաթերթիկի միջոցով հարցում է արվել մոտ 100 քննիչների և դատավորների:

Աշխատանքը պատրաստելիս օգտագործվել են նաև թեմայի վերաբերյալ այլ գիտնականների կողմից կատարված փորձառնական հետազոտության տվյալները, ինչպես նաև ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեին (2012թ.) ուղղված ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը, Հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված «Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում» հաշվետվության արդյունքները:

Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրության շրջանակներում առաջին գիտական համալիր հետազոտությունն է նվիրված մինչդատական վարույթում անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի առանձնահատկություններին:

Աշխատանքի նորույթն արտահայտվում է նաև նրանում, որ հետազոտվել են մինչդատական վարույթում անչափահասների վերաբերյալ գործերով ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները և առանձնացվել են նշված գործերով քննության արդյունավետության բարձրացման ուղիները:

Պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները.

1) Միջազգային իրավական ակտերի վերլուծությունը հնարավորություն է տվել հեղինակին վեր հանել այն հակասությունները, որոնք առկա են անչափահասների վերաբերյալ քրեական գործերով սահմանված միջազգային չափանիշների և ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրության միջև: Քրեական դատավարության նոր օրենսդրության ընդունման նախաշեմին այդ հակասությունների առանձնացումը և դրանց վերացմանն ուղղված առաջարկությունները շատ կարևոր են:

2) Աչափահասների նկատմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցներն առանձնանում են իրենց բարդությամբ և խստությամբ, այս հանգամանքը

2017թ. ընթացքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 162 քրեական գործ, որից 104-ը՝ Երևան քաղաքում, իսկ 58-ը՝ մարզերում: Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քննված 162 քրեական գործերից 99-ը կամ 61,1%-ն ուղարկվել է դատարան, որից 58-ը՝ Երևան քաղաքում, իսկ 41 -ը՝ մարզերում:

քնականաբար ենթադրում է դրանց գիտական խորը ուսմանասիրություն և օրենսդրական հստակ կարգավորում: Այսպես՝ անչափահասի ազատության սահմանափակման մասին ցանկացած որոշում պետք է ընդունվի վարույթի բոլոր հանգամանքների մանրամասն քննարկումից հետո՝ սահմանափակումը հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով: Քրեադատավարական օրենսդրության մեջ իրենց կարգավորումը պետք է ստանան հետևյալ կարևոր դրույթները՝ անչափահասին ազատությունից զրկելու բացառիկությունը, օրինական ներկայացուցչին այդ մասին հայտնելը, կալանքի կիրառման ժամկետների առանձնահատկությունը:

3) ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում անչափահասների վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը համահունչ չէ Պեկինյան կանոններում տեղ գտած չափանիշներին: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը հանգել է այն եզրակացության, որ անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման առարկան պետք է լրացնել: Նշված պահանջներից ելնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նշված գործերով պետք է պարզվեն հետևյալ հանգամանքները՝

1. անչափահասի տարիքը /ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը/,
2. անչափահասի սոցիալական, ընտանեկան վիճակի կրթության և դաստիարակության պայմանները,
3. հոգեկան զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները,
4. անչափահասի վրա տարիքով ավագ անձանց ազդեցությունը,
5. ենթադրյալ հանցանքի կատարման պատճառները և դրան նպաստող պայմանները:

4) Յուրաքանչյուր արդարադատության խնդիրներից ելնելով՝ անչափահասների հետ կատարավոր հարցաքննության կատարման դատավարական կարգի վերաբերյալ հեղինակը քննարկել է այն առանձնահատկությունները, որոնք կապահովեն անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

5) Պաշտպանը պարտավոր է տեղեկացնել իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին նրանց որդեգրած դիրքորոշման բոլոր հնարավոր բա-

ցասական հետևանքների մասին և միջոցներ ձեռնարկել, որպեսզի նրանք վերանայեն այդ դիրքորոշումը՝ փոխարինելով այն իրենց ավելի ձեռնտու դիրքորոշմամբ: Եթե դա չի հաջողվում, նա իրավունք ունի իրավիճակից ելնելով կամ համաձայնել իր պաշտպանյալի դիրքորոշման հետ՝ ենթարկվելով նրա կամքին և համարելով դա նրա շահերին չհակասող, կամ առաջ տանել սեփական դիրքորոշումը, որը կհամապատասխանի անչափահաս մեղադրյալի շահերին:

6) Քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչի իրավական վիճակի կարգավորումը պետք է բարելավել, մասնավորապես ոչ միայն ընդարձակելով նրա իրավունքները, այլև ապահովելով դրանց իրականացումն ապահովող երաշխիքներ: Կարծում ենք, որ նրա իրավական վիճակը պետք է նույնացնել պաշտպանի կամ ներկայացուցչի վիճակին: Մասնավորապես, պետք է ընդարձակել նրա հնարավորությունները՝ քրեական դատավարության տարբեր փուլերում մասնակցելու ապացուցման գործընթացին:

7) Անչափահասների նկատմամբ դաստիարակչական միջոցների կիրառման արժեքն առաջին հերթին կլինի այն, որ դրանով կդրվեն ոչ թե հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասների նկատմամբ պատժիչ ներգործության, այլ դաստիարակչական ներգործության հիմքերը:

Անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության միջոցների կիրառման արդյունավետությունը անմիջականորեն կախված է այդ ինստիտուտի պատշաճ կարգավորումից: Առանց նման ինստիտուտի արդյունավետ կիրառման, անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելն անիմաստ է, որովհետև զուրկ է սոցիալապես նշանակալի նպատակից:

8) Յուլենյալ արդարադատության խնդրի իրակացման համար պետք է կատարվեն սոցիալական ուսումնասիրություններ և ներկայացվեն գործի դատական քննության ընթացքում: Դատարանը անչափահասի գործով արդարադատություն իրականացնելիս անպայման պետք է հետազոտի անչափահասին վերաբերող փաստական հանգամանքները, օրինակ, անչափահասի սոցիալական և ընտանեկան շրջապատը, դպրոցում՝ նրա ուսման, դաստիարակության և այլ հանգամանքները, և դրանք հաշվի առնել արարքի և անձի հասարակական վտանգավորությունը գնահատելիս և պատիժ նշա-

նակելիս:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը.

Ատենախոսությունում տեղ գտած հետևությունները, հեղինակի կարծիքով, կարող են էական ներդրում ունենալ քրեական դատավարության իրավունքի զարգացման համար: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել քրեական դատավարությունում անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի հիմնախնդիրների ուսումնասիրության համար:

Ատենախոսությունում տեղ գտած առաջարկությունները կարող են օգտագործվել՝

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխման ընթացքում,
- անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի արդյունավետության բարձրացման համար մեթոդական ուղեցույցներ մշակելիս,

- ԲՈՒՀ-ում անչափահասների հանցագործությունների քննության վերաբերյալ մասնագիտական հատուկ դասընթացներ դասավանդելիս, ինչպես նաև իրավապահայան մարմինների աշխատակիցների վերապատրաստման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և դրանց ներդրումը պրակտիկայում: Աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են ստացել հեղինակի վեց գիտական հոդվածներում: Հետազոտության թեմային վերաբերող առանձին հարցեր և հիմնախնդիրներ ներկայացվել են ատենախոսի զեկույցներում և հաղորդումներում, որոնք կազմակերպվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի կողմից: Ատենախոսը, գիտական հետազոտության առարկան կազմող շատ դրույթներ ներկայացրել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող հանձնաժողովի քննարկմանը:

ԳԼՈՒԽ 1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

1.1. Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի իրավական կարգավորումը խորհրդային ժամանակաշրջանում և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակման փուլում

Խորհրդային կարգերի հաստատմամբ բավականին փոփոխություն նախատեսվեց անչափահասների վերաբերյալ հանցագործությունների քննության դատավարական կարգի մեջ: Այսպես, 1918 թ. հունվարի 14-ին, երբ Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակվեց «Անչափահասների գործերով հանձնաժողովների մասին» Ժողկոմ-խորհի դեկրետը (այսուհետև՝ կրճատ 1918 թ. դեկրետ), որը վարույթի այդ տեսակի առանձնահատկությունների սահմանմամբ առաջին փաստաթուղթն էր, սկիզբ դրվեց խորհրդային յուլենալ արդարադատության³ մոդելին⁴:

Դեկրետի առանձնահատկություններից մեկն այն էր, որ ամբողջովին վերացվեցին յուլենյալ դատարանները, անչափահասների հանցավոր արարքներին վերաբերող բոլոր գործերը փոխանցվեցին անչափահասների գործերով հանձնաժողովների քննությանը:

1918 թ. դեկրետով այդ հանձնաժողովների տնօրինմանն էր հանձնված անչափահասների կողմից կատարված բոլոր տեսակի հանցագործությունների և այլ իրավախախտումների քննությունը՝ նրանց նկատմամբ կիրառելով բացառապես դատարական կարգի բնույթի միջոցներ: Այդ հանձնաժողովները գտնվում էին Հանրային խնամակալության ժողովրդական կոմիսարիատի ենթակայության ներքո և կազմված էին նշյալ ժողկոմատի, ինչպես նաև լուսավորության և արդարադատության ժողովրդական ժողկոմատների ներկայացուցիչներից:

1920թ. հունիսի 19-ին հրապարակվեց Անչափահասների գործերով հանձնաժո-

³ Պեկինյան կանոնների անգլերեն տարբերակում օգտագործվող «Juvenile Justice» հասկացությունը հայերենում թարգմանվում է՝ որպես «անչափահասների նկատմամբ արդարադատություն» հասկացությամբ:

⁴ СУ РСФСР.-1918. – N 16.- էջ 227:

ղովներին ուղղված հրահանգը (այսուհետ կրճատ՝ 1920թ. հրահանգ)⁵, որը մշակել էին երեք գերատեսչություններ՝ լուսավորության, առողջապահության և արդարադատության:

Չնայած այն բանին, որ 1918 թ. դեկրետով վերացվեցին անչափահասների գործերով դատարանները, այնուամենայնիվ նախատեսվեցին անչափահասների վերաբերյալ գործերը դատարանների քննությանը հանձնելու հնարավորություն: Իհարկե, հիմնական նպատակը դաստիարակչական միջոցների կիրառումներ էր, բայց որոշակի դեպքերում նրանց նկատմամբ կիրառվում էին քրեական պատժի միջոցներ:

Դատարանի կողմից գործը քննվում էր այն դեպքում, երբ անչափահասի նկատմամբ առողջարարական-դաստիարակչական միջոցներ կիրառելն անբավարար էր, կամ մանկատներից անչափահասների պարբերաբար փախուստի դիմելու, շրջապատի մարդկանց համար անչափահասի ազատության մեջ մնալը ակնհայտորեն վտանգավոր լինելու դեպքերում:

1918թ. դեկրետի 10-րդ հոդվածի համաձայն՝ 14 տարեկանից բարձր անչափահասների գործերը պետք է ուղարկվեին ժողովրդական դատավորին անչափահասին ձերբակալելու պահից սկսած 24 ժամվա ընթացքում: Դատավորը երեք օրվա ընթացքում պետք է կատարեր անհրաժեշտ քննչական գործողություններ գործի փաստական կողմի վերաբերյալ, պարզեր անչափահասի դերը հանցագործության մեջ (եթե այն կատարվել էր մեծահասակների հետ հանցակցությամբ), որից հետո նա պարտավոր էր ներկայացնել զեկույց հանձնաժողովին քննության արդյունքների վերաբերյալ: Անչափահասների գործերով հանձնաժողովը մասնակցում էր նման գործերի դատական քննությանը և կայացնում վերջնական որոշում:

Անչափահասների գործերով հանձնաժողովների նիստերը դռնբաց էին, թույլատրելի էր մամուլի ներկայությունը, սակայն արգելվում էր հրապարակել անչափահասների անունները:

Անչափահասների վերաբերյալ գործերով որոշ առանձնահատկություններ մտցվեցին «Հանրորեն վտանգավոր գործողությունների համար մեղադրվող անչափահասների մասին» դեկրետի վերջնական տարբերակի մեջ, որը հաստատվեց ՌԽՖՍՀ Ժող-

⁵ СУ РСФСР. - 1920. - N 68. - էջ 308:

կոմխորհի կողմից 1920 թ. մարտի 4-ին⁶:

Վերոնշյալ դեկրետը հաստատեց անչափահասների գործերով դատարանների և բանտարկության վերացումը: Նրանց կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքների վերաբերյալ գործերը նախկինի պես պետք է քննության առնել անչափահասների գործերով հանձնաժողովը և միայն այն դեպքում, եթե 14-18 տարեկան անչափահասների գործերը քննելիս հանձնաժողովը հաստատում էր անչափահասի նկատմամբ բուժական-մանկավարժական ներգործության միջոցներ կիրառելու անհնարինությունը, գործն ուղարկում էր դատարան:

1920թ. դեկրետի առանձնահատկություններից մեկն այն էր, որ որպես դատարակչական միջոց անչափահասներին տեղավորում էին հատուկ կացարաններում՝ ռեֆորմատորիաներում: Տվյալ դեպքում անվերապահ պայման էր դատավորի կողմից գործի նախնական և դատական քննություն անցկացնելը: Այն անչափահասների առնչությամբ, որոնք զարգացման որոշակի շեղումներ ունեին, դեկրետը սահմանել էր հետևյալը. «Հանրորեն վտանգավոր գործողությունների համար մեղադրվող բարոյապես անլիարժեք անչափահասների դատարակությունը, ուսուցումը և բուժումը, ինչը բուժամանկավարժական խնդիր է, իրականացնում են լուսավորության և առողջապահության ժողովրդական կոմիսարիատները համապատասխան առողջարարական-դատարակչական հիմնարկներում, ուր անչափահասների հարցերով հանձնաժողովներն ուղարկում են այդպիսիներին: Հարկ եղած դեպքում նման անչափահասները կարող են ենթարկվել առանձնապես խիստ ռեժիմի և մեկուսացման առողջապահության ժողովրդական կոմիսարիատի հատուկ բուժական հիմնարկներում»:

1923 թ. մայիսի 25-ին ընդունվեց ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ 1922թ. ՌԽՖՍՀ քր.դատ.օր.)⁷, իսկ արդեն մի քանի ամիս անց՝ 1923 թ. փետրվարի 25-ին՝ ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգիրքը նոր խմբագրությամբ (այսուհետ՝ 1923 թ. ՌԽՖՍՀ քր.դատ.օր.)⁸:

1923 թվականի ՀԽՍՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանվեց հետևյալ կանոնը, որ տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահասների կող-

⁶ СУ РСФСР. - 1920. - №13. - էջ 83:

⁷ СУ РСФСР. - 1922. - №22-21. - էջ 230:

⁸ СУ РСФСР. - 1923. - №7. - էջ 106:

մից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը դատարանի կողմից կարող էին քննվել միայն անչափահասների հանձնաժողովի որոշմամբ: Կարևոր էր նաև այն կանոնը, որ անչափահասների վերաբերյալ գործերով պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

Դատական բռնաճնշումների և պատժիչ միջոցների խստացման ընդհանուր միտումը հանգեցրեց նաև անչափահասների հանցավորության նկատմամբ քաղաքականության փոփոխության: Նշյալ ժամանակաշրջանում ընդունվեցին ԽՍՀՄ արդարադատության ժողկոմատի, ԽՍՀՄ գերագույն դատարանի և ԽՍՀՄ դատախազության բազմաթիվ հրահանգներ, ղեկավար ցուցումներ, հրամաններ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ:

Այդ փաստաթղթերի շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի՝ «Անչափահասների շրջանում հանցավորության դեմ պայքարի միջոցների մասին» 1935թ. ապրիլի 7-ի որոշումը (այսուհետ՝ Ապրիլի 7-ի որոշում)⁹: Այդ որոշման ներածությունում շեշտվում էր անչափահասների շրջանում հանցավորությունն արագորեն վերացնելու անհրաժեշտության մասին և դա մեծապես կանխորոշեց պատժիչ քաղաքականության միտումը անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության ժամանակ:

1935թ. լուծարելով անչափահասների գործերով հանձնաժողովները և հիմնելով մասնագիտացված ժողովրդական դատարաններ՝ անչափահասների գործերը քննելու համար, կառավարությունը երեք տարի անց սրանք էլ է լուծարում, իսկ այդ գործերի քննությունը փոխանցում շրջանային ժողովրդական դատարաններին: Դրանցից յուրաքանչյուրում անչափահասների գործերը քննելու համար նշանակվում է տեղամասային դատավորներից մեկը:

Կատարված փոփոխությունների արդյունքում կամաց-կամաց վերացվում էին այն առանձնահատկությունները, որոնք բնութագրական էին յուրվեճալ արդարադատությանը: Սա նշանակում է, որ անչափահասների գործերի քննությունը հետզհետե ավելի նմանվեց գործերի ընդհանուր քննությանը:

Հետպատերազմյան առաջին տարիներին անչափահասների գործերով դատա-

⁹ Собрание законодательства СССР.- 1935. – №19.-էջ 155.

կան պրակտիկայի համար ուղենիշ դարձավ ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի՝ «Անչափահասների մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1947 թ. հունիսի 4-ի հրամանագրերն ի կատար ածելու մասին» 1948 թ. փետրվարի 17-ի N /2/Մ որոշումը¹⁰: Մասնավորապես, ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումը դատական մարմիններին մատնանշում էր այն, որ 12-16 տարեկան անչափահասների կողմից աննշան չափի գողությունների դեպքում դատարանները պետք է քննության առնեն քրեական գործը դադարեցնելու հարցը՝ քրեական պատժի միջոցներ կիրառելու և մեղադրյալներին ուղղիչ աշխատանքային գաղութներ ուղարկելու աննպատակահարմարությունից ելնելով: Իսկ այն դեպքերում, երբ 12-16 տարեկան անչափահասների նկատմամբ հարուցված գործը ենթակա չէր կարճելու, դատարանը կարող էր հարկ եղած դեպքերում, մեղմացուցիչ հանգամանքներ ի հայտ գալիս, նշանակել ավելի մեղմ պատիժ:

1958 թվականին ընդունվեց ԽՍՀՄ քրեական դատավարության հիմունքները, որը հիմք հանդիսացավ խորհրդային միութենական հանրապետությունների կողմից քրեական դատավարության նոր օրենսգրքերի ընդունման համար: Հիմունքներում առանձնացվեցին անչափահասների գործերով վարույթին վերաբերող հետևյալ գաղափարները: Մասնավորապես, ա/ պաշտպանի պարտադիր մասնակցությունը հետաքննությանը և նախաքննությանը, բ/ քրեական գործի կարճումը՝ նյութերն անչափահասների հանձնաժողովին հանձնելով:

1961թ. ընդունվեց ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որի 36-րդ գլուխը նվիրված էր անչափահասների գործերի վարույթին¹¹: Նախկին օրենսդրության համեմատ այն առանձնանում էր մի շարք ժողովրդավարական գաղափարներով, իսկ անչափահասների վարույթի հետ կապված այն գնահատվում էր, որպես մարդասիրության առանձնահատուկ դրսևորում¹²:

ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 392-րդ հոդվածից մինչև 404-րդ հոդվածները նվիրված էին անչափահասների գործերով վարույթին, չնայած օրենսգրքի այլ հոդվածներում նույնպես հանդիպում ենք որոշակի առանձնահատկությունների:

¹⁰ Сборник постановлений Пленумов Верховного Суда СССР (1924-1952 гг.) - М.: Юридическое изд-во НКЮ СССР, 1956. - էջ 115-116:

¹¹ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի տեղեկագիր 1961թ., թիվ 7, հոդված 42:

¹² См. у Мельникова Э. Б. Правосудие по делам несовершеннолетних: История и современность.- М., Наука, 1990, էջ 56:

Որպես առանձնահատկություն պետք է առանձնացնել հետևյալը՝

- սահմանվեց դոնփակ դատական քննություն 16 տարեկանը չդարձած անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով (հոդված 12),

- ամրագրվեց մինչև տասնչորս տարեկան, իսկ քննիչի հայեցողությամբ նաև տասնչորսից մինչև տասվեց տարեկան անչափահասների հարցաքննությունների ժամանակ մանկավարժի (ՀԽՍՀ քր. դատ. օր. հոդվ. 150, մաս 1), ծնողների և մյուս օրինական ներկայացուցիչների (ՀԽՍՀ քր. դատ. օր. հոդվ. 150, մաս 2, հոդված 399), ուսումնադաստիարակչական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության նորմերը (ՀԽՍՀ քր. դատ. օր. հոդվ. 400, 401),

- նախատեսվեց անչափահաս ամբաստանյալին նիստերի դահլիճից հեռացնելը որոշակի հանգամանքներում (ՀԽՍՀ քր. դատ. օր. հոդվ. 402),

- թույլատրվեց դատարանի կողմից անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելը և դրանք վերացնելը (ՀԽՍՀ քր. դատ. օր. հոդվ. 404):

Անչափահասների գործերը քննելիս ժողովրդական դատարանի առջև խնդիր էր դրվում դաստիարակելու անչափահասներին և կանխելու նրանց կողմից նոր հանցագործությունների կատարումը: Անչափահասների գործերով դատավարությունը լուծում էր քրեական դատավարության ընդհանուր խնդիրներ:

Անչափահասի գործում ապացուցման ենթակա հանգամանքները առաջին հերթին հանցագործության դեպքն էր, մեղադրյալի մեղավորությունն ու հանցագործության շարժառիթները, քրեական պատասխանատվության աստիճանի վրա ազդող հանգամանքները, հանցագործության հետևանքով հասցված վնասի բնույթն ու չափը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնք, համաձայն՝ ՀԽՍՀ քր. դատ. օր.-ի 54 հոդվածի, դատարանը պարտավոր է պարզել յուրաքանչյուր քրեական գործով:

Դրանից զատ՝ անչափահասների գործերով դատական քննության ժամանակ, համաձայն ՀԽՍՀ քր. դատ. օր. 393 հոդվածի, պետք էր պարզել.

- 1) անչափահասի տարիքը (ծննդյան օրը, ամսաթիվը, տարեթիվը),

- 2) անչափահասի առողջության և ընդհանուր զարգացման վիճակը: Եթե տվյալ-

ներ կան անչափահասի այնպիսի մտավոր հետամնացության մասին, որը կապված չէ հոգեկան հիվանդության հետ, պետք է նաև պարզել, թե նա կարող էր արդյոք լիովին գիտակցել իր գործողությունների նշանակությունը և որքանով կարող է ղեկավարել դրանք,

3) անչափահասի ինքնության բնութագիրը,

4) անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները,

5) այն հանգամանքները, որոնք բացասաբար են ազդել անչափահասի դաստիարակության վրա հանցագործությունը կատարելուն նպաստած պատճառներն ու պայմանները,

6) անչափահասին հանցավոր գործունեության մեջ ներգրաված չափահաս մեծահասակ դրդիչների և այլ անձանց առկայությունը:

Յուսմանալ արդարադատության խնդիրներից ելնելով շատ կարևոր էր օրենսգրքում ամրագրված այն դրույթը, որը վարույթն իրականացնող մարմինն պարտավորեցնում էր մատնանշված հանգամանքները պարզելու համար որպես վկաներ հարցաքննել անչափահասի ծնողներին և այլ անձնաց, որոնք կարող են տեղեկություններ տալ անչափահասի անձի վերաբերյալ:

Խորհրդային քրեական դատավարության օրենսդրությունն առանձնանում էր նաև նրանով, որ հանցավորության դեմ պայքարին ներգրավելու հարցում մեծ տեղ էր հատկացվում հանրությանը: Այսպես, ՀԽՍՀ քր. դատ. օր. 401 հոդվածի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում դատարանն իրավունք ունի դատական նիստին հրավիրելու ուսումնական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որտեղ սովորում կամ աշխատում է անչափահասը, ինչպես նաև ամբաստանյալի ծնողների, խնամակալի կամ հոգաբարձուի աշխատանքի վայրի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1967 թ. հունիսի 3-ի հրամանագրով վերականգնվեցին անչափահասների գործերով հանձնաժողովները¹³: Համաձայն նշյալ որոշման՝ անչափահասների գործերով հանձնաժողովներին վերապահվում էին հետևյալ խնդիրները.

¹³ Ведомости Верховного Совета РСФСР. -1967. - №23. -էջ 536:

- անչափահասների խնամակալությունը, իրավախախտումները կանխելուն ուղղված աշխատանքների կազմակերպումն ու նրանց իրավունքների պաշտպանությունը,
- պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ջանքերի համախմբումը անչափահասների հանցավորության կանխման ոլորտում,
- անչափահասների իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը,

-ՆԳՆ-ի հիմնարկներում և հատուկ ուղղիչ հիմնարկներում անչափահասներին պահելու պայմանների և դաստիարակչական աշխատանքների վերահսկողությունն իրականացնելը:

Այդ հանձնաժողովները ստեղծվեցին շրջաններում, քաղաքներում, երկրամասերում, մարզերում, ԽՍՀՄ հանրապետություններում՝ գործադիր իշխանություններին առընթեր:

ՀԽՍՀ քր. դատ. օր.-ում անչափահասների՝ առանց բացառության բոլոր գործերի քննության ժամանակ ամրագրված էր դատախազի ու պաշտպանի պարտադիր մասնակցությունը, ինչը կարծում ենք, որ երաշխիք էր անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման համար:

Գործը քննելիս դատավորը պարտավոր էր ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ անչափահասին դատական նիստի կանչելը պետք է ունենար բացառիկ բնույթ և իրականացվեր միայն օրինական ներկայացուցչի միջոցով և միայն հարցաքննության համար: ՀԽՍՀ քր. դատ. օր.-ում օրինական ներկայացուցիչների իրավունքները քրեական դատավարությունում բավականին լայն էին ու բազմազան, սակայն անչափահասների գործերով դատավարության էական թերությունը օրինական ներկայացուցչի մասնակցության ժամանակամիջոցի սահմանափակումն էր. նախաքննության ժամանակ նա մասնակցում էր միայն անչափահաս մեղադրյալի կողմից գործի բոլոր նյութերին ծանոթանալու պահից սկսած և կանչվում էր դատական քննության:

Վերը նշված իրավական կարգավորումը պահպանվեց մինչև 1998 թվականի գործող քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը: Աշխատանքում առավել մանրամասն կներկայացվեն քրեական դատավարություն գործող օրենսդրության իրավական կարգավորման առանձնահատկությունները, սակայն պատմական համեմատության մեջ կարող ենք ասել, որ այն էապես չտարբերվեց նախկին օրենսդրական կարգավոր-

րումից: Այն ժողովրդավարական գաղափարները, որոնք ընկած են յուվենյալ արդարադատության հիմքում՝ իրենց ամբողջական արտացոլումը չստացան քրեական դատավարության գործող օրենսգրքում: Սա պետք է համարել քրեական դատավարության գործող օրենսգրքի էական թերություններից մեկը:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագիծի հայեցակարգը մշակելիս՝ բազմաթիվ այլ ինստիտուտների շարքում խնդիր էր դրված փոփոխել նաև անչափահասների վերաբերյալ վարույթը, այսինքն այն համապատասխանացնել միջազգային չափորոշիչներին:

Վերոնշյալ նախագծում էապես փոփոխվեց անչափահասների գործերով վարույթի կարգավորման առանձնահատկությունները, մասնավորապես՝ սահմանվեց, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անչափահասի դաստիարակության, բնակության, կրթության կամ աշխատանքի բնականոն պայմաններն ապահովելու, ինչպես նաև ոչ իրավաչափ ներգործությունից նրան առավելագույնս զերծ պահելու համար:

Նախագծով առաջին անգամ սահմանվեց անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի արագությունը և առանձնացումը, որը ենթադրում է՝ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ ցանկացած վարույթ պետք է ի սկզբանե քննվի արագ և առանց անհարկի ձգձգումների:

ՀՀ քր. դատ. օր.-ի Նախագիծն ընդհանուր առմամբ հիմնված է ժամանակակից իրավակիրառ գործունեության պահանջների ու իրողությունների վրա, մասնավորապես Պեկինյան կանոնների և միջազգային այլ ակտերի վրա: Նախագծի առանձնահատկությունները կներկայացվեն անչափահասների գործերով վարույթի առանձին հարցերի համեմատական վերլուծության ներքո: Իհարկե, Նախագիծը բավականին առաջադիմական է, սակայն քանի դեռ չունենք անչափահասների գործերով առանձին դատարաններ, հետևաբար յուվենյալ արդարադատության մասին լիարժեք հետևություն անելը դժվար է¹⁴:

¹⁴ Թեև պետք է նշել, որ առանձին մասնագիտացված դատավորներ ունենալը ևս միջազգային չափանիշների համատեքստում է, մասնավորապես ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման 94-րդ կետի՝ չնայած, որ Երեխայի իրավունքների կոմիտեն Հայաստանին ուղղված հանձնարարականներում նշել է անչափահասների գործերով մասնագիտացված դատարաններ ունենալու անհրաժեշտությունը, այն նաև ընդունել է, որ այն դեպքերում, երբ անչափահասների գործերով դա-

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում յուվենալ արդարադատության կազմակերպական կառուցվածքը հնարավոր է երկու տարբերակով.

1) ստեղծել ինքնուրույն մասնագիտացված դատարաններ անչափահասների համար՝ որպես մասնագիտացված դատարաններ,

2) ընդհանուր իրավասության դատարաններում առանձնացնել դատավորների, որոնք մասնագիտանում են անչափահասների գործերով:

Իհարկե այս երկու տարբերակներն էլ ունեն իրենց առավելությունները և թերությունները: Առաջին տարբերակի դեպքում մենք ունենում ենք առաձին դատարաններ, որոնք կոնկրետանում են անչափահասների գործերով հանցագործությունների քննության մեջ: Նշված դատարանների առկայությունը առավել իրատեսական է դարձնում այն խնդիրների իրականացումը, որոնք դրված են յուվենալ արդարադատության առջև, որի մասին է վկայում նաև համաշխարհային փորձը: Դրանով է պայմանավորված շատ երկրներում նման դատարանների ստեղծումը, որոնք արդեն ունեն տասնամյակների պատմություն: Այսօր մեզ համար այն անընդունելի է կապված տնտեսական ծախսերի հետ, մասնավորապես՝ յուվենալ դատարանների համար համապատասխան շենքերի, սարքավորումների հատկացման և այլ դժվարություններով:

Երկրորդ տարբերակն ավելի ընդունելի է, քանի որ այն առանձնանում է ավելի խնայողականությամբ և ներկա իրավիճակում կիրառելու իրատեսականությամբ, սակայն դրա ներուժը բավականին թույլ է, քանի որ դասական յուվենալ դատարանի՝ որպես համալիր հաստատության ամենաուժեղ կողմերը կմնան չափահասված, մինչդեռ դրա խնդիրն է համախմբել իր ենթակայության ներքո պետական և հասարակական մարմինները, որոնք կոչված են պաշտպանելու երեխաների իրավունքները, բացահայտելու և վերացնելու նրանց կողմից հանցագործություններ կատարելու պատճառները, ցուցաբերելու նրանց սոցիալական, հոգեբանական և բժշկական օգնություն և, բացի այդ, վերահսկողություն սահմանելու անչափահասների գործերով մինչդատական վարույթի նկատմամբ:

Յուվենալ արդարադատության հիմնական պաշտպաններից մեկը՝ Է. Բ. Մելնիկո-

տարաններ ունենալը գործնական նկատառումներից ելնելով նպատակահարմար չէ, անչափահասների վերաբերյալ գործերը քննելու համար մասնագիտացված դատավորների նշանակումը կարող է երաշխավորել, որ նրանց նկատմամբ պատշաճ վերաբերմունք կցուցաբերվի:

վան, առաջարկում է իր հայեցակարգը՝ առանձնացնելով յուվենալ արդարադատության կազմակերպման և գործառության մի շարք առանձնահատուկ հատկանիշներ, ինստիտուտներ, մեթոդներ: Նա, հիմնվելով նախահեղափոխական Ռուսաստանում երեխաների հարցերով դատարանի պատմության վրա, ընդունում է անչափահասների գործերի քննության դատական կարգի ինքնատիպությունը: Նրա կարծիքով՝ յուվենալ արդարադատության յուրահատուկ սկզբունքներն են՝ 1) արդարադատության առավելապես պաշտպանողական ուղղվածությունը՝ պատժի պարտադիր մեղմացումը հենց միայն անչափահասության փաստից ելնելով, դատավարության գաղտնիության պահանջը անչափահասների բոլոր գործերով, 2) դատավարության սոցիալական հագեցվածությունը՝ ոչ իրավաբանական գիտելիքների լայն կիրառությունը անչափահասների գործերով քրեական դատավարությունում, 3) դատական գործընթացի առավելագույնս անհատականացումը¹⁵:

Յուվենալ արդարադատության համակարգ ստեղծելու վերաբերյալ դատավարական գրականության մեջ հանդիպում ենք նաև այլ կարծիքների, որոնք ընդհանրության մեջ խնդիր են տեսնում ստեղծել այնպիսի արդյունավետ համակարգ, որը պետք է շաղկապի դատարանի և մյուս շահագրգիռ պետական և ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը¹⁶:

Հասկանալի է, որ յուվենալ դատարանների ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում պահանջում է նախապես լուծում տալ բազմաթիվ բարդ հարցերի, մասնավորապես անհրաժեշտ են օրենսդրի կամքը, ֆինանսական ապահովումը, կադրերի պատրաստվածությունը:

Յուվենալ դատարանների հարցերը քննելիս, պարտադիր չէ խոսել ինքնուրույն դատական հաստատությունների ստեղծման մասին, բավական է դատավորների մասնագիտացումը: Կարծում ենք, որ Հայաստանի արդի պայմաններում ամենաընդունելի տարբերակը յուվենալ արդարադատության վերաստեղծման սկզբնական փուլում ըն-

¹⁵ Տե՛ս **Мельникова Э. Б.** Ювенальная юстиция: Проблемы уголовного права, уголовного процесса и криминологии: Учеб. пособие. - М.: Дело, 2000. - էջ 112:

¹⁶ Տե՛ս **Карнозова Л. М.** Ювенальная юстиция в России: какой ей быть? // Юридический консультант. - 2005. - № 5.-էջ 17, **Воронова Е. Л.** Система защиты прав несовершеннолетних в регионах Российской Федерации: проблемы, тенденции, перспективы// Вопросы ювенальной юстиции. - 2006.- №3. -էջ 55, **Предеина И.В.** Правовые и теорические основы развития ювенальной юстиции в России :дисс...канд. юрид. наук. - Саратов, 2005,- էջ 28:

հանուր իրավասության դատարանների համակարգում մասնագիտացված դատավորների առանձնացումն է, որի իրավական հիմքերն արդեն դրված են: «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից կարող է ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների և այլն) գործեր»:

Ինչպես իրավագետները, այնպես էլ պրակտիկները միանշանակ ընդունում են, որ անհրաժեշտ է անչափահաս իրավախախտների և բարդ կենսավիճակում գտնվող անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու ապահովման նպատակով ստեղծել անչափահասների գործերով մասնագիտացում, որը կապահովի նշյալ կատեգորիաների անչափահասների խնդիրների լուծումը և կաջակցի դատարանի գործունեությանը: Նախագիծն էական խթան է Հայաստանի Հանրապետությունում յուլենալ արդարադատության հայեցակարգի ընդհանուր դրույթների և սկզբունքների ամրագրման համար:

Գնահատելով անչափահասների հարցերով հայաստանյան արդարադատության իրավական կարգավորման էվոլյուցիան, կարծում ենք, որ Նախագիծն իրավական հիմք է ստեղծում Հայաստանի Հանրապետությունում յուլենալ արդարադատության սեփական մոդել ստեղծելու համար:

1.2. Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի միջազգային իրավական կարգավորումը

Անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը միշտ էլ եղել է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Այդ մասին են վկայում միջազգային իրավական այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են անչափահաս անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Միջազգա-

յին իրավական կարգավորմամբ հիմք դրվեց «յուվենալ»¹⁷ արդարադատությանը՝ որպես արդարադատության ինքնուրույն տեսակի: Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար անչափահասների վերաբերյալ արդարադատությունը մեր պետության ազգային իրավական համակարգի զարգացման գործընթացի անբաժան մասն է, որը պահանջում է բավարար միջոցներ, որպեսզի անչափահասների վերաբերյալ արդարադատությունն իրականացվի միջազգային հանրության կողմից մշակված սկզբունքներին համապատասխան:

Անչափահաս անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնահարցերն արդիական են ցանկացած հասարակությունում, որովհետև նույնիսկ ամենաժողովրդավարական հասարակությունում հանդիպում ենք հանցավորության աճի, իսկ սա նշանակում է, որ այդ խնդիրները պետք է լուծվեն առավել ընդհանուր իրավական կարգավորմամբ: Անկասկած այդ խնդիրներն առավել շատ են այն երկրներում, որտեղ տնտեսական, սոցիալական անբարենպաստ վիճակը հանգեցրել է անչափահասների շրջանում հանցավորության աճի:

Միջազգային հանրության կողմից անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հիմնահարցերը բարձրացվել են դեռևս 20-րդ դարի սկզբին և մինչև այսօր դրանք առանձին ուսումնասիրության առարկա են: Այդ մասին են վկայում այն փաստաթղթերը, որոնք ընդունվել են միջազգային տարբեր կառույցների կողմից և կարգավորում են ինչպես երեխաների ընդհանուր պաշտպանության, այնպես էլ քրեական արդարադատության ոլորտում նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցերը:

Անչափահասների իրավունքների պաշտպանության հետ կապված ուշադրության է արժանի 1924 թվականի Ազգերի լիգայի կողմից ընդունված Ժնևյան հռչակագիրը, որը երեխաների պաշտպանությանը նվիրված առաջին միջազգային փաստաթուղթն է:

Չնայած «յուվենալ» արդարադատության միջազգային իրավական կարգավորմանը, այն մնում է՝ որպես անչափահասների գործերով ներպետական արդարադատություն: Միջազգային հանրությունը մտահոգ է տարբեր երկրներում անչափահասների

¹⁷ Պեկինյան կանոնների անգլերեն տարբերակում օգտագործվող «Juvenile Justice» հասկացությունը հայերենում թարգմանվում է՝ որպես «անչափահասների նկատմամբ արդարադատություն» հասկացությամբ:

հանցավորության աճով, ինչպես նաև քրեական գործերի քննության ընթացքում անչափահաս անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ: Ճիշտ է, անչափահասների գործերով միջազգային դատական ատյաններ չկան, բայց «յուվենալ «արդարադատության վերաբերյալ ընդունված միջազգային փաստաթղթերը՝ սկիզբ դրեցին ազգային օրենսդրության մեջ անչափահասների գործերով նվազագույն կանոնների ամրագրմանն ու կիրառմանը¹⁸:

Անչափահասների գործերով արդարադատության հիմնահարցերն առավել համակարգային և ամբողջական ուսումնասիրության են արժանացել այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի կողմից ստեղծվեցին հատուկ կենտրոններ, հանձնաժողովներ և փորձագիտական խմբեր: ՄԱԿ-ի ոչ կառավարական այդպիսի կառույցների մեջ պետք է առանձնացնել՝ ՄԱԿ-ի Վիեննայի կենտրոնը, երեխաների օգնության ՄԱԿ-ի միջազգային ֆոնդը (UNICEF) և այլ կազմակերպություններ:

Նշված կազմակերպություններն ակտիվորեն օգնում են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, նրա քարտուղարությանը և հետազոտական կենտրոններին: Նշված կառույցների կողմից կատարվեցին հսկայական աշխատանք, որի արդյունքում նախապատրաստվեցին մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք կարգավորում են անչափահասների իրավական վիճակին վերաբերող հարցերը: Նշված մարմիններն իրենց գործունեությամբ նաև հիմք դրեցին նշված ոլորտում միջազգային ակտիվ համագործակցության:

Անչափահասների իրավական վիճակի միջազգային իրավական կարգավորումը վկայում է անչափահասների վերաբերյալ քրեական գործերի քննության իրավական ընդհանուր կարգավորման անհրաժեշտության մասին: Միջազգային հանրությունը հավասարապես մտահոգված է քրեական արդարադատության ոլորտում անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության խնդիրներով: Հարկ է նշել, որ պակաս կարևոր չէ նաև այս ոլորտում տարբեր պետությունների միջև փոխադարձ փորձի ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս տարածելու այս կամ այն ինստիտուտը: Սա արդարացիորեն կարելի է համարել անչափահասների գործերով արդարադատության իրականացման միջազգային համագործակցության առա-

¹⁸ Ст'ю Мельникова Э.Б. Ювенальная юстиция: Проблемы уголовного права, уголовного процесса и криминалистики: Учебное пособие, М., 2000, էջ 163:

ջին մակարդակը:

Այսօր ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման շեմին կարևոր է ոչ միայն միջազգային փաստաթղթերում տեղ գտած գաղափարների ընդունումը, այլև այլ երկրների փորձի ուսումնասիրությունը: Աշխարհում տեղի ունեցող գործընթացները միջազգային հանրությանը ստիպում են մշակել համապատասխան փաստաթղթեր, որոնք կարգավորում են յուրմենալ արդարադատության ոլորտում առաջացող հարաբերությունները:

Յուրմենալ արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության համար առանձնահատուկ նշանակություն ունեն ՄԱԿ-ի կողմից կազմակերպվող կոնգրեսները, որոնք նվիրված են անչափահասների հանցագործությունների կանխարգելմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը: Հատկանշական է, որ այդ կոնգրեսները ՄԱԿ-ը կազմակերպում է հինգ տարին մեկ անգամ, իսկ առաջին կոնգրեսը հրավիրվել է 1955 թվականին Ժնևում:

Ազգային յուրմենալ արդարադատության համակարգի արդյունավետ կարգավորումն առաջին հերթին բխում է միջազգային իրավական փաստաթղթերից, որոնցում առավել ընդհանուր լուծում են ստացել այն հարցերը, որոնք կապված են անչափահասների կրթության, դաստիարակության, սոցիալական զարգացման և բերեկեցության ապահովման հետ:

Ճիշտ է, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել են մի շարք միջազգային պայմանագրեր՝ նվիրված անչափահասների պաշտպանությանը, սակայն անչափահասների վերաբերյալ քրեական արդարադատության ոլորտում նշանակալի տեղաշարժ՝ կապված միջազգային փաստաթղթերում տեղ գտած կանոնների կամ սկզբունքների գործող օրենսդրական ամրագրման հետ դեռևս չկա: Ուշադրության է արժանի նաև այն, որ հայրենական քրեադատավարական գրականության մեջ քիչ են այն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են անչափահասների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը¹⁹: Վերը նշվածը վկայում է ոչ թե այն մասին,

¹⁹ Ս.Ա. Դիլբանդյան Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2011, էջ 337-394; Ս. Ռ. Մարաբյան Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի ընդհանուր բնութագիրը և առանձնահատկություններն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, Նախագծի,

որ քրեական արդարադատության ոլորտում խնդիրներ չկան կամ դրանք շատ քիչ են, այլ այն մասին, որ պետության կողմից պատշաճ ուշադրություն չի հատկացվել քրեական արդարադատության ոլորտում անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Անչափահասների իրավական վիճակին վերաբերող միջազգային փաստաթղթերը բավականին շատ են, սակայն այդ համակարգում պետք է առանձնացնել հետևյալ հիմնական ակտերը.

1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.):

2. Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիան, որն ընդունվել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի հունիսի 23-ին:

3. Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նվազագույն չափորոշիչ կանոնները /Պեկինյան կանոններ/, որը հաստատվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով:

4. Անչափահասների շրջանում հանցավորության կանխման համար Միավորված ազգերի կազմակերպության ղեկավար սկզբունքները, որն ընդունվել է Էր Ռիադում 1988 թվականին ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսում:

5. Ազատությունից զրկված անաչափահաս անձանց վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնները, որը հաստատվել է 45/113 14 դեկտեմբերի 1990 թվականի բանաձևում և կոչվում են (Հավանայի կանոններ):

Նշված միջազգային պայմանագրերում ամրագրված կանոններն ու սկզբունքները վերաբերում են քրեական գործերով անչափահասների իրավական վիճակին և քրեական գործերի քննության առանձնահատկություններին: Անչափահասների իրավական վիճակը կարգավորող միջազգային պայմանագրերում սահմանված է պահանջ այն մա-

միջազգային իրավական ակտերի համեմատական վերլուծություն) // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնահարցերին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2014, էջ 519-561, Արթուր Ղամբարյան, Դավիթ Թումասյան Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար), Երևան, 2015թ. 144 էջ:

սին, որ անդամ պետություններն անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման իրենց ազգային օրենսդրությունը, քաղաքականությունն ու գործելակերպը պետք է համապատասխանեցնեն միջազգային պայմանագրերում տեղ գտած գաղափարներին:

Միջազգային պայմանագրերում իրենց ամրագրումն է ստացել այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են՝

- անչափահասների նկատմամբ քրեական գործերով արդարադատության նպատակները,
- անչափահասների նկատմամբ քրեական գործերով քննության արագությունը,
- անչափահասի հասկացությունը,
- ձերբակալման կամ կալանքի տակ գտնվող անչափահասների նկատմամբ վարվեցողության կանոնները,
- լիազոր մարմիններին ներկայացվող պահանջները:
- անչափահասների նկատմամբ քրեական գործերով մինչդատական վարույթում քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումը,
- անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանների պարզումը:

Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերը նշված գաղափարներն իրենց առավել ամբողջական ամրագրումն են ստացել Պեկինյան կանոններում, որոնք իրենց մեջ մարմնավորում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Տնտեսական, սոցիալական ու մշակութային կանոնների մասին միջազգային դաշնագրում, ինչպես նաև մարդու իրավունքների մասին մյուս միջազգային փաստաթղթերում երիտասարդության իրավունքների պաշտպանությանը վերաբերող գաղափարները:

1. Անչափահասների նկատմամբ քրեական գործերով արդարադատության նպատակները: Պեկինյան կանոնների համաձայն՝ անչափահասների վերաբերյալ արդարադատության համակարգն առաջին հերթին ուղղված է անչափահասի բարեկեցության ապահովմանը, որպեսզի անչափահաս իրավախախտների վրա ազդեցություն

գործող ցանկացած միջոց միշտ համաչափ լինի ինչպես իրավախախտի անհատական առանձնահատկություններին, այնպես էլ իրավախախտման հանգամանքներին (հոդված 5.1):

Պեկինյան կանոններում որպես նպատակ առաջին հերթին առանձնացվում է անչափահասների *բարեկեցության ապահովումը*: Պեկինյան կանոններից հետևում է, որ բարեկեցության ապահովումը բոլոր իրավական համակարգերի հիմնական նպատակն է, ինչպես այն համակարգերի՝ որոնցում անչափահաս իրավախախտների գործերով զբաղվում են ընտանեկան գործերով դատարանները կամ վարչական մարմինները, այնպես էլ այն իրավական համակարգերի, որոնք ավելի շատ հակված են անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելուն: Անչափահասի բարեկեցությանը պետք է հրավիրել հատուկ ուշադրություն, քանի որ այն կօգնի խուսափել պատժիչ սանկցիաներից:

Երկրորդ նպատակը «համաչափության սկզբունքի» պահպանումն է, որը հայտնի է որպես պատժի միջոցների օգտագործման սահմանափակման միջոց: Այս սկզբունքի կիրառումը կախված է իրավախախտման ծանրությունից, այսինքն արարքին համարժեք հատուցումից: Անչափահասների նկատմամբ ունեցած վերաբերմունքը ենթադրում է, որ նրանց մոտ պետք է բարձրացնել արժանապատվության զգացմունքը, ամրապնդել մարդու իրավունքների և այլոց ազատությունների նկատմամբ ունեցած հարգանքը, հաշվի առնել երեխայի տարիքը և հանրությանը ծառայելու նրա ցանկությունը:

Երիտասարդ իրավախախտների արարքների նկատմամբ հակազդեցություն ունենալիս պետք է հաշվի առնել ոչ միայն իրավախախտման ծանրությունը, այլև անձի առանձնահատկությունները: Իրավախախտի անհատական առանձնահատկությունները (օրինակ՝ սոցիալական ստատուսը, ընտանեկան դրությունը, պատճառած վնասը և իրավախախտի անձի հետ կապված այլ գործոններ) պետք է ազդեցություն ունենան պատասխան գործողությունների համարժեքության վրա (օրինակ՝ ուշադրություն պետք է դարձնել իրավախախտի կողմից զոհին պատճառած վնասի փոխհատուցման ցանկությանը, աղքատ կամ տղայի լիարժեք և օգտակար կյանք վարելու կամքին):

Երիտասարդ իրավախախտի բարեհաջողության ապահովմանն ուղղված պատասխան գործողությունները կարող են նմանապես դուրս գալ անհրաժեշտության

սահմաններից և դրանով վնաս հասցնել կոնկրետ երիտասարդի հիմնական իրավունքներին, ինչը նկատվում է անչափահասների նկատմամբ արդարադատության որոշ համակարգերում: Այդ դեպքում պետք է ապահովել պատասխան գործողության համարժեքությունը, հաշվի առնելով իրավախախտման հանգամանքների առանձնահատկությունները, իրավախախտի, ինչպես նաև տուժածի անձը:

1. Անչափահասների նկատմամբ քրեական գործերով քննության արագությունը: Քրեական գործերով քննության արագությունը այն համընդհանուր գաղափարներից է, որն իր ամրագրում է ստացել բազմաթիվ միջազգային փաստաթղթերում և կիրառվում է ոչ միայն անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով, այլև ցանկացած հանցագործության քննության²⁰, քանի որ յուրաքանչյուր մեղադրյալ ունի ողջամիտ ժամկետներում դատարանի առջև կանգնելու իրավունք: Անչափահասների գործերով վարույթում այս պահանջն առավել կարևոր է, որովհետև հակառակ դեպքում կարող է սպառնալիքի տակ հայտնվել այն ողջ դրականը, ինչին կարելի է հասնել դատական քննության և դատավճռի կայացման միջոցով:

Անչափահասների նկատմամբ քրեական գործերի արագ քննության կանոնն իր ամրագրումն է ստացել Պեկինյան կանոնների 20.1 կետում, համաձայն որի՝ անչափահասի վերաբերյալ ցանկացած գործ սկզբից ևեթ պետք է քննվի արագ, թույլ չտալով անհարկի ձգձգումներ: Կարծում ենք, որ յուրաքանչյուր ժողովրդավարական երկրի քրեադատավարական համակարգի համար այն առաջնահերթ խնդիր է²¹:

2. Անչափահասի հասկացությունը: Ըստ Պեկինյան կանոնների՝ անչափահաս է համարվում նա, ով իրավախախտման համար գործող իրավական համակարգի շրջանակներում կարող է ենթարկվել պատասխանատվության այն ձևով, որը տարբերվում է մեծահասակի նկատմամբ կիրառվող պատասխանատվության ձևից, ընդ որում անչափահասը պետք է կասկածվի իրավախախտման կատարման համար կամ հաստատվել է, որ նա է կատարել այն (2.2):

²⁰ Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում առաջին անգամ վարույթի ողջամիտ ժամկետն առանձնացվել է՝ որպես սկզբունք: Այսպես, Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում:

²¹ Միաժամանակ, պետք է նշել, որ առաջին անգամ Նախագծի 418-րդ հոդվածում առանձին պահանջ է ներկայացվում անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի արագությանը: Մասնավորապես, նախագծում ամրագրված է, որ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամկետները երկարացվել չեն կարող:

Պեկինյան կանոնների համաձայն՝ այն իրավական համակարգերում, որոնցում ընդունվում է «անչափահասների քրեական պատասխանատվության տարիք» հասկացությունը, այդպիսի տարիքի ստորին սահմանը չպետք է առավել ցածր տարիքային մակարդակ ենթադրի, հաշվի առնելով զգացմունքային, հոգեկան և մտավոր հասունության գործոնները:

3. Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի սահմանները, կախված պատմական և մշակութային առանձնահատկություններից, միանգամայն տարբեր են: Ժամանակակից մոտեցման կիրառումը կայանում է երեխայի՝ քրեական պատասխանատվության հետ կապված բարոյահոգեբանական ասպեկտները կրելու ընդունակությունների որոշման մեջ, այսինքն՝ բացահայտ հակահասարակական վարքագծի համար երեխային պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը որոշվում է անհատական ընդունակությունների, անչափահասի ըմբռնման և ընկալման կարողությամբ: Եթե քրեական պատասխանատվության տարիքային սահմանը չափից ավել ցածր է կամ ընդհանրապես չի սահմանված, ապա պատասխանատվության գաղափարը դառնում է անիմաստ: Դրա համար, ինչպես նշված է մեկնաբանություններում²², պետք է ջանքեր գործադրել խելամտորեն որոշելու ցածրագույն տարիքային այն սահմանը, որը կարող է կիրառվել միջազգային մասշտաբով²³:

4. Ձերբակալման կամ կալանքի տակ գտնվող անչափահասների նկատմամբ վարվեցողության կանոնները: Պեկինյան կանոններում հատուկ ուշադրություն է հատկացվում անչափահաս անձանց ձերբակալմանը և կալանավորմանը, քանի որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ՝ էապես սահմանափակվում են նրանց իրավունքներն ու ազատությունները: Պեկինյան կանոնների ընհանուր գաղափարախոսությունն այն է, որ անչափահասի նկատմամբ ձերբակալում և կալանավորում պետք է կիրառել որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակահատվածի համար, իսկ հնարավորության դեպքում այն փոխարինել ավտերնատիվ այլ միջոցներով, օրինակ՝ դաստիարակչական հսկողության հանձնելու, ինչպես ընտանիքում, այն-

²² ՄԱԿ-ի Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նվազագույն չափորոշիչ կանոններն իրենց մեջ ներառում են ոչ միայն հոդվածներ, այլև դրանց մեկնաբանությունները:

²³ Այս կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 416-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դրույթները կիրառվում են այն անձանց վերաբերյալ վարույթներով, ում տասնութ տարին չի լրացել ձերբակալման կամ մեղադրանք ներկայացնելու պահին:

պես էլ դաստիարակչական հաստատություններում:

Պեկինյան կանոններից հետևում է, որ մինչև դատական քննությունը ազատությունից զրկված յուրաքանչյուր անչափահաս պետք է պահվի մեծահասակներից առանձին և իրավունք ունենա հաղորդակցվել իր ընտանիքի հետ (13.4): Անչափահասի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը կարևոր է, որովհետև չի կարելի թերագնահատել անչափահասի նկատմամբ «քրեական ազդեցությանն վտանգավորությունը»:

Քանի որ անչափահասի բարեկեցության ապահովումը յուվենալ արդարադատության հիմնական նպատակ է, հետևաբար ազատությունից զրկվելու ողջ ընթացքում պետք է ապահովվել անչափահասների խնամքը, պաշտպանությունը, անհրաժեշտ անհատական, սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական օգնությունը, ինչպես նաև կրթության, պրոֆեսիոնալ պատրաստության ասպարեզներում օգնությունը, որոնք կարող են պահանջվել տարիքը, սեռը և անձը հաշվի առնելով:

5. *Լիազոր մարմիններին ներկայացվող պահանջները:* Պեկինյան կանոններում առանձնահատուկ պահանջներ են ներկայացվում վարույթն իրականացնող մարմինների պրոֆեսիոնալ պատրաստվածությանը, ինչն ապահովում է յուվենալ արդարադատության խնդիրների պատշաճ իրականացումը: Պեկինյան կանոնների 12.1, 22.1 և 22.2 կանոնների համաձայն՝ իրենց պարտականությունները լավագույն ձևով կատարելու համար ոստիկանության ծառայողները, որոնք հաճախակի կամ բացառապես զբաղվում են անչափահասների հանցագործությունների կանխումով պետք է հատուկ հրահանգավորվեն և նախապատրաստվեն: Իրավապահայան մարմինների աշխատակիցները պետք է պատրաստ լինեն իրենց աշխատանքում հաշվի առնել անչափահասների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև իմանան և կիրառեն այն ծրագրերը, որոնք նախատեսված են անչափահասների հետ վարվեցողության համար, որպեսզի անչափահասի և արդարադատության համակարգի միջև ընդհարում չլինի²⁴:

²⁴ ՀՀ քննչական Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններում և ստորաբաժանումներում 2017թ. մայիսի 5-ից առկա է եղել անչափահասների գործերով մասնագիտացված 21 քննիչ: Ներկայումս անչափահասների գործերով մասնագիտացված քննիչներ չկան Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, Շիրակի, Արագածոտնի, Լոռու և Արարատի մարզային քննչական վարչություններում: Անչափահասների գործերով քննության առանձնահատկություններին նվիրված թեմաներով քննիչների վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել ՀՀ արդարադատության ակադեմիայում:

Այդ նպատակով խոշոր քաղաքներում պետք է ստեղծվեն ոստիկանական հատուկ ստորաբաժանումներ, որոնք անհրաժեշտ են ոչ միայն կանոններում տեղ գտած սկզբունքների պահպանման ապահովման, այլև անչափահասների կատարած հանցագործությունների կանխման և դրանց դեմ մղվող պայքարի առավել արդյունավետ ապահովման, ինչպես նաև անչափահաս իրավախախտների նկատմամբ ունեցած վարվելաձևի բարելավման համար:

Որակավորման ապահովումը անչափահասների վերաբերյալ գործով անաչառ և արդյունավետ արդարադատության իրականացման անհրաժեշտ տարր է: Դրա համար պետք է բարելավվել լիազոր մարմինների անձնակազմի ճիշտ ընտրությունը, մասնագիտական պատշաճ պատրաստությունը և վերապատրաստումը: Նշված պայմանների ապահովումը կնպաստի նրանց կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարմանը: Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս՝ անաչառության հասնելու նպատակով պետք է խուսափել քաղաքական, սոցիալական, սեռական, ռասայական, կրոնական, մշակութային կամ ցանկացած ուրիշ հիմքով անչափահասների գործերով արդարադատության համակարգի ընտրության, անձնակազմի նշանակման և առաջխաղացման գործում ցանկացած խտրականությունից: Պետք է նշել, որ ՄԱԿ-ի 6-րդ Կոնգրեսում հատուկ ուշադրություն հատկացվեց քրեական արդարադատության համակարգում կին աշխատակիցների ապահովմանը, նրանց ընտրության, պատրաստության, ինչպես նաև առաջխաղացման աջակցմանը:

6. Մինչդարական վարույթում անչափահասների նկատմամբ քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումը: Պեկինյան կանոնների 11.1 կանոնի համաձայն՝ անչափահաս իրավախախտների վերաբերյալ գործերի քննության ժամանակ իշխանության իրավասու մարմինները հնարավորության սահմաններում չպետք է դիմեն գործի պաշտոնական քննության: Ոստիկանությունը, դատախազությունը, անչափահասների գործերով վարույթ իրականացնող մյուս մարմինները պետք է լիազորված լինեն, այդպիսի գործերով որոշում ընդունել իրենց հայեցողությամբ, առանց գործերի պաշտոնական լսումների: Կանոններում զարգացվում է այն գաղափարը, որ շատ դեպքերում լավագույն արդյունքներ է տալիս իշխանության իրավասու մարմինների կողմից չմիջամտելը: Այսինքն, լավագույն արդյունք կարող է տալ գործի կար-

ճումը ամենասկզբում, առանց այն այլընտրանքային (սոցիալական) մարմիններին փոխանցելու: Դա հատկապես վերաբերում է ոչ լուրջ խախտումներին, երբ ընտանիքը, դպրոցը և ոչ պաշտոնական սոցիալական հսկողություն իրականացնող այլ ինստիտուտները ձեռնարկել են կամ մտադիր են ձեռնարկել ներգործության պատշաճ միջոցներ:

Կանոններում նաև սահմանված է, որ այդպիսի կարճում թույլատրվում է միայն անչափահասի համաձայնությամբ (11.3), սակայն այդպիսի համաձայնությունը չպետք է ընդունվի անվերապահորեն, քանի որ երբեմն այն կարող է անչափահասի կողմից տրվել հուսահատ վիճակում: Կանոնում ընդգծվում է, որ գործի կարճման բոլոր մակարդակներում ստիպողականությունն ու ահաբեկումը պետք է հասցնել նվազագույնի: Անչափահասները չպետք է զգան, որ նրանց նկատմամբ գործադրվում է ճնշում (օրինակ՝ դատական քննությունից խուսափելու համար), կամ չպետք է ենթարկվեն ճնշման՝ այս կամ այն ձևով գործերը կարճելու համաձայնություն ստանալու նպատակով:

7. Անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանների պարզումը:

Պեկինյան կանոններից հետևում է, որ պետությունը պետք է ձգտի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան անչափահասի համար ապահովել բովանդակալից կյանքի պայմաններ՝ կյանքի այն փուլում, երբ անչափահասն առավել հակված է ոչ ճիշտ վարքագծի, և բարերար ազդեցություն կունենա հանցագործությունների և իրավախախտումների հնարավորությունից առավել չափով զերծ անձի զարգացման և կրթություն ստանալու համար:

Պեկինյան կանոններն իրավապահպան մարմիններին պարտավորեցնում է բոլոր դեպքերում, բացառությամբ մանր իրավախախտումներից, մինչև իշխանության իրավասու մարմնի կողմից որոշման կայացումը, ուսումնասիրել անչափահասի շրջապատն ու պայմանները, որոնցում նա ապրում է, ինչպես նաև իրավախախտման կատարման հանգամանքները, այն հաշվով, որպեսզի աջակցեն իշխանության իրավասու մարմնին՝ գործով ողջամիտ դատական որոշման կայացմանը (16.1):

Մեկնաբանություններում առաջ է քաշվում այն գաղափարը, որ նշված խնդրի իրականացման համար պետք է կատարվեն սոցիալական ուսումնասիրություններ և ներկայացվեն գործի դատական քննության ընթացքում: Դատարանը անչափահասի

գործով արդարադատություն իրականացնելիս անպայման պետք է իմանա անչափահասին վերաբերող համապատասխան փաստերի մասին, օրինակ, անչափահասի սոցիալական և ընտանեկան շրջապատի, դպրոցում՝ նրա ուսման, դաստիարակության և այլ հանգամանքների մասին: Կարծում ենք, որ ճիշտ կլիներ, այդպիսի ծառայություններ ստեղծել նաև մեր իրավական համակարգում, որոնք կարող են էական աջակցություն ցույց տալ դատարանների անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս:

Միջազգային փաստաթղթերում տեղ գտած այս և մյուս դրույթները կոչված են նպաստելու ազգային իրավական համակարգերում անչափահասների գործերով վարույթի այնպիսի արդյունավետ կարգի սահմանմանը, որը կապահովի քրեական դատավարությունում անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանությունը: Այդ հիմնադրույթները համադրելով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած՝ անչափահասների գործերով վարույթի իրավական կարգավորման հետ, կարող ենք ասել, որ անչափահասների իրավունքների և ազատությունների ոչ արդյունավետ պաշտպանության հիմնական պատճառը քրեադատվարական գործող օրենսդրության անկատարությունն է: Սրանից հետևում է, որ քրեադատվարական նոր օրենսգրքում անչափահասների գործերով վարույթի կարգավորման հիմքում պետք է դնել միջազգային փաստաթղթերում տեղ գտած չափորոշիչները:

**ԳԼՈՒԽ 2. ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒԹՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒՅԾՈՒՆՆԵՐԸ**

***2.1. Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ դատավարական
հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները***

Քրեական դատավարության խնդիրների իրականացումը ենթադրում է դատավարական հարկադրանքի կիրառում, որովհետև քրեական վարույթի մասնավոր մասնակիցները միշտ չէ, որ պատշաճ իրականացնում են օրենքով սահմանված իրենց պարտականությունները: Ենթադրյալ հանցագործության համար ձերբակալված անձը կամ մեղադրյալը շատ հաճախ փորձում են խուսափել քրեական պատասխանատվությունից կամ խոչընդոտել գործի քննությանը: Քրեական դատավարությունում կիրառվում են այնպիսի հարկադրանքի միջոցներ, որոնք էապես սահմանափակում են անձի իրավունքներն ու ազատությունները: Ճիշտ է, դատավարական հարկադրանքի միջոցները երաշխիք են քրեական դատավարության խնդիրների իրականացման համար, բայց որպես դատավարության անմիջական խնդիր օրենսդիրն առանձնացնում է նաև այն, որ ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման /<< քր. դատ. օր-ի հոդված 2, մաս 2, կետ 3/: Քրեական դատավարության օրենսգրքում երկու կարևոր խնդիրների առանձնացումը վկայում է հանրային և մասնավոր շահերի փոխհարաբերակցության մասին:

Հաշվի առնելով այդ շահերի հարաբերակցության կարևորությունը Նախագծում խնդիրները ստացան այլ կարգավորում, մասնավորապես սահմանված է՝ քրեական դատավարության օրենսգրքի նպատակն է անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը: Այդ նպատակների իականացմամբ պայամանավորված Նախագիծը սահմանում է անձի իրավունքները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների շրջանակը և դրանց կիրառման իրավա-

չափությունն ապահովող երաշխիքները:

Նախագծով դատավարական հարկադրանքի միջոցները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ձերբակալում, խափանման միջոցներ, գույքի արգելադրում, հոգեկան կամ խանգարում ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցներ և դատավարական սանկցիաներ: Ինչպես տեսնում ենք հարկադրանքի միջոցների դասակարգման հարցում Նախագիծը էապես տարբերվում է ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքից, որում առանձնացված են դատավարական հարկադրանքի երեք տեսակ՝ ձերբակալում, խափանման միջոցներ և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ: Օրենսդրական գործող կարգավորումն անկասկած չի արտացոլում քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված դատավարական գործողությունների իրական էությունը: Այսպես, օրինակ ոչնչով արդարացված չէ գույքի վրա կալանք դնելը մտցնել քննչական գործողությունների համակարգի մեջ, որովհետև նշված դատավարական գործողության նպատակը ապացույցների ձեռքբերումը կամ դրանց ստուգումը չէ:

Նախագիծն առանձնանում է ոչ միայն դատավարական հարկադրանքի միջոցների ճիշտ դասակարգմամբ, այլև նոր հարկադրանքի միջոցների նախատեսմամբ և դրանց առավել մանրամասն կարգավորմամբ:

Աչափահասների նկատմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցներն առանձնանում են իրենց բարդությամբ և խստությամբ, այս հանգամանքը բնականաբար ենթադրում է դրանց գիտական խորը ուսումնասիրություն և օրենսդրական հստակ կարգավորում: Պատահական չէ, որ անչափահասների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման հարցերը ուսումնասիրվել են ինչպես դատավարական հարկադրանքի միջոցների ինստիտուտի, այնպես էլ անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունների հետ կապված²⁵: Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ, այդ թվում նաև հայրենական, բավարար ուշադրություն է դարձվել դատավարական հարկադրանքի միջոցների ուսումնասիրութ-

²⁵ См. у Николёк В.В. Уголовный процесс по делам несовершеннолетних: Лекция.- Омск: Юридический институт МВД России, 1998, էջ 69, Петрухин И.Л. Неприкосновенность личности и перинуждение в уголовном процессе. М., 1989, էջ 256, Капинус Н.И. Процессуальные гарантии прав личности при применении мер пресечения в уголовном процессе: Дисс. д-ра юрид. наук. М., 2001, էջ 547, Турнова Л.К. Современные проблемы применения мер пресечения в уголовном процессе: Дисс. д-ра юрид. наук. М., 2002, էջ 419:

յանը, սակայն Նախագծի կարգավորումները պահանջում են դրանց գիտական նոր հետազոտություն: Նախագծի հիմքում ընկած է այն գաղափարախոսությունը, որ անհրաժեշտ է սահմանափակել անձին ազատությունից զրկելու դեպքերը:

Հաշվի առնելով անչափահասների տարիքային առանձնահատկությունները և քրեական դատավարական հարկադրանքի միջոցների խստությունը՝ նշված գաղափարը Նախագծում ստացավ ուղղակի ամրագրում: Ողջունելի է այն, որ Նախագծում առանձին հոդված է նվիրված անչափահասների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմանը /Նախագիծ հոդված 421/, որում առանձնացված են մի քանի կարևոր դրույթներ, որոնք արժանի են ուշադրության, մասնավորապես՝ անչափահասին ազատությունից զրկելու բացառիկությունը, օրինական ներկայացուցչին այդ մասին հայտնելը, կալանքի կիրառման ժամկետների առանձնահատկությունը և այլն: Նախագծում բավականին հստակ են կարգավորված անչափահասների նկատմամբ ձերբակալման և կալանքի կիրառման առանձնահատկությունները, ինչը հնարավորություն է տալիս՝ խուսափել այլ տարածական մեկնաբանություններից, որոնք կարող են սահմանափակել անչափահաս անձի իրավունքներն ու օրինաչափ շահերը:

Այսպես՝ անչափահասի ազատության սահմանափակման մասին ցանկացած որոշում պետք է ընդունվի վարույթի բոլոր հանգամանքների մանրամասն քննարկումից հետո՝ սահմանափակումը հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով /Նախագծի 421-րդ հոդված մաս 1-ին /: Սա այն կարևոր պահանջներից մեկն է, որը տեղ է գտել անչափահասին վերագրվող հանցանքի վարույթների վերաբերյալ միջազգային պայմանագրերում: Այս կապակցությամբ նաև պետք է ընդգծել, որ Նախագծի նշված հոդվածում արտացոլված են այն նվազագույն չափորոշիչները, որոնք ամրագրված են միջազգային պայմանագրերում, ինչպես նաև անհիմն և անօրինական սահմանափակումներից անձի պաշտպանության երաշխիքները:

Ըստ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի և Պեկինյան կանոնների 13-րդ հոդվածի՝ մինչև դատարան կալանքի տակ պահելը կիրառվում է միայն որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակաընթացի համար, կալանքի տակ պահելը հնարավորին չափ փոխարինվում է այլ ընտրանքային միջոցներով, ինչպիսիք են՝ մշտական հսկողությունը, դաստիարակչա-

կան ակտիվ աշխատանքը ընտանիքում կամ դաստիարակչական հաստատությունում կամ ուղղիչ տանը տեղավորելը, կալանքի տակ պահվող անչափահասները պետք է պահվեն մեծահասակներից առանձին:

Անչափահաս անձի նկատմամբ կարող են կիրառվել այն նույն հարկադրանքի միջոցները, ինչպես որ մեծահասակների նկատմամբ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ նրանք իրենց ոչ պատշաճ վարքագծով կարող են խոչընդոտել քրեական վարույթի իրականացմանը:

Նախագծով սահմանված անձին ազատությունից զրկելու հիմքերը և պայմանները ընդհանուր են բոլորի համար, սակայն հաշվի առնելով անչափահաս անձանց տարիքային առանձնահատկությունները՝ նախատեսվում են որոշակի վերապահումներ: Աչափահասների գործերով արդարադատության նպատակը ոչ թե անչափահասի նկատմամբ դատավարական հարկադրանք կիրառելն է, այլ այլընտրանքային այնպիսի միջոցների, որոնք կարող են նրա համար ունենալ դաստիարակչական նշանակություն: Սա նշանակում է, որ հարկադրանքի միջոցները, որոնք կիրառվում են անչափահաս մեղադրյալի նկատմամբ՝ նույնպես պետք է հետապնդեն այդ նպատակները:

Ըստ Նախագծի 6-րդ հոդվածի 44-րդ կետի՝ ձերբակալումը առանց դատարանի որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված անձի ազատության իրավունքի սահմանափակումն է: Նախագծում տեղ գտած նշված ձևակերպումը, կարծում ենք, որ չի արտացոլում ձերբակալման էությունը որպես դատավարական հարկադրանքի ինքնուրույն միջոցի: ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում սահմանված են անձին ազատությունից զրկելու հիմքերը, իսկ ձերբակալումը որպես գործընթաց ունի իր խնդիրները, հիմքերը, պայմանները և դատավարական կարգը, որոնք բնութագրում են նրա էությունը և այն առանձնացնում դատավարական հարկադրանքի այլ միջոցներից: Ձերբակալումը անձի կողմից ենթադրյալ հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով արգելանքի տակ կարճաժամկետ պահելն է:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի Նախագծում առանձնացվում են ձերբակալման չորս տեսակ՝ 1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում, 2) ազատության

մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար, 3) խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ, 4) վարույթի մասնավոր մասնակիցների (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև փորձագետի, թարգմանչի, վկայի՝ սույն օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումն ապահովելու համար (կարճաժամկետ ձերբակալում): Այդպիսի կարգավորումն արդարացված է և համապատասխանում է անձին ազատությունից զրկելու եվրոպական կոնվենցիայով նախատեսված հիմքերին: Այն առվել որոշակի է դարձնում քրեական դատավարությունում անձին կարճաժամկետ ազատությունից զրկելու դեպքերը և օրենքով նախատեսված երաշխիքները հավասարապես կիրառում բոլորի համար:

Անչափահասի նկատմամբ կիրառվում են ձերբակալման նույն հիմքերը և պայմանները, ինչպես չափահասների: Նախագծի 109-րդ հոդվածի համաձայն՝ անձը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կարող է ձերբակալվել, եթե՝

1) նա բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո.

2) ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի.

3) տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր.

4) առկա են հանցանքի կատարմանը անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր, և միաժամանակ նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ նրա ինքնությունը պարզված չէ:

Քրեական հետապնդման մարմինն անչափահասի ձերբակալման մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել նրա օրինական ներկայացուցչին: Նախագծի հեղինակները, արդարացիորեն հաշվի առնելով անչափահասների տարիքային առանձնա-

հատկությունները, ձերբակալված անչափահաս անձի համար օրենքով սահմանված իր գտնվելու վայրի մասին այլ անձանց տեղյակ պահելու իրավունքի սահմանափակում չեն կիրառում²⁶:

Նախագծից կարելի է եզրակացնել, որ անձը կարող է ձերբակալվել ցանկացած ենթադրյալ հանցագործության համար, այսինքն նաև այն դեպքում, երբ տվյալ հանցագործության համար չի նախատեսվում ազատազրկում: Այդպիսի սահմանափակում նախատեսում է գործող օրենսգիրքը, ինչը, մեր կարծիքով, երաշխիք է ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար՝ անձին ազատությունից չզրկելու: Միաժամանակ քրեական վարույթն իրականացնող մարմինը անչափահասի ձերբակալում իրականացնելիս պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ձերբակալումը նպատակահարմար է, երբ ենթադրվում է, որ որպես խափանման միջոց նրա նկատմամբ կարող է կիրառվել կալանավորում, այլ պարագայում, կարծում ենք, որ արդարացված չէ անչափահասին ազատությունից զրկելը՝ թեկուզ շատ կարճ ժամանակահատվածով:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

Այս բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը: Ուստի անձը կարող է ձերբակալվածի կարգավի-

²⁶ 2015 թ. ՀՀ իրավապահ մարմինների կողմից ձերբակալվել է 18 անչափահաս: Ձերբակալված 18 անչափահասներից 6-ն ազատվել են արգելանքից, որոնցից՝ 4-ն արգելանքի տակ պահելու անհրաժեշտության բացակայության պատճառաբանությամբ, իսկ 2-ը՝ ձերբակալման օրենքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալու և դատարանի կողմից կալանավորման մասին որոշում չկայացնելու հիքով (2-ն էլ ազատ են արձակվել ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի կողմից): 2016թ. ՀՀ իրավապահ մարմինների կողմից ձերբակալվել է 14 անչափահաս: Ձերբակալված 14 անչափահասներից 5-ն ազատվել են արգելանքից, որոնցից՝ 2-ն արգելանքի տակ պահելու անհրաժեշտության բացակայության պատճառաբանությամբ, իսկ 3-ը՝ ձերբակալման օրենքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալու և դատարանի կողմից կալանավորման մասին որոշում չկայացնելու հիքով: 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ իրավապահ մարմինների կողմից ձերբակալվել է 7 անչափահաս:

ճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Նախքան դա՝ անձը, փաստացի արգելանքի վերցվելով և քրեական հետապնդման մարմին բերվելով, դեռևս ձերբակալվածի կարգավիճակ չի կարող ունենալ, մինչդեռ նրան արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բերելու հիմքը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածն է՝ զուգորդված նրա փախուստը կանխելու նպատակով: Ընդ որում, այստեղ կասկածի հիմնավորվածության աստիճանն է՛լ ավելի ցածր է, քան ձերբակալման դեպքում:

Քրեական դատավարության գործող օրենսգրքից հետևում է, որ ձերբակալումը հնարավոր է քրեական գործ հարուցելուց հետո, մինչդեռ Նախագիծը սահմանում է ավելի երաշխավորված պաշտպանություն, այսինքն՝ անձը ձերբակալված է փաստացի արգելանքի վերցվելու պահից: Այսինքն դատավարական ձերբակալումը հնարավոր է նաև մինչև քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելը: Դրանով լուծվում է քրեական դատավարության գործող օրենսգրքով սահմանված՝ հանցագործության մեջ կասկածվող անձին բերման ենթարկելու իրավական կարգավորման հետ կապված օրենսդրության մեջ և պրակտիկայում առաջացած խնդիրները, չնայած ՀՀ վճռաբեկ դատարանը՝ Գագիկ Միքայելյանի վերաբերյալ գործով կայացված իր նախադեպային որոշմամբ փորձեց լուծել օրենսդրության մեջ առկա բացը²⁷:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ ներառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդատական վարույթում «ձերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանականորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ²⁸:

²⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի Գագիկ Միքայելյանի վերաբերյալ որոշումը:

²⁸ Տե՛ս նույն տեղը:

Բերմանը հարաբերական ինքնուրույնություն տալու օրենսդրի մոտեցման մասին է վկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասը, որը նախքան քրեական գործի հարուցումը թույլատրելի գործողությունների շարքում ամրագրում է նաև «հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում ... բերման ... ենթարկվելը»:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, գտնում է, որ բերվածի իրավական վիճակը համապատասխանում է «քրեական մեղադրանքի» ներկայացման Կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմանը: Վճռաբեկ դատարանը քրեական դատավարության գործող օրենսգրքի իրավական կարագավորման անկատարությունից ելնելով՝ որպես նախադեպ սահմանեց հետևյալը, որ բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից),

գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից),

դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից):

Նշված իրավական դիրքորոշմամբ Վճռաբեկ դատարանը վերացրեց այն բացը կամ հակասությունը, որն առկա էր ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և Կոնվենցիայի միջև: Պետք է նշել, որ 2018թ. հունվարի 16-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած փոփոխությունների հետևանքով, այդ հիմնական իրավունքներն ամրագրվեցին քրեադատավարական օրենսդրության մեջ(ՀՀ քր. դատ. օր-ի 129-րդ հոդվածի 3-րդ մաս):

Նախագծում տեղ գտած կարագավորումը, կարծում ենք, որ վերացնում է ձերբակալման երկու կառուցակարգերի միջև եղած տարբերությունը, սահմանում դրա տե-

սակները, ինչպես նաև դրա կիրառման իրավաչափության ընդհանուր երաշխիքները:

Անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա անչափահասի ձերբակալման դեպքում կայացվում է ձերբակալման որոշում և կազմվում է համապատասխան արձանագրություն: Այս պահանջն ընդհանուր է նաև չափահաս անձանց ձերբակալման համար: Ձերբակալման այս տեսակի համար առանձին որոշման կայացումը նորույթ է, որովհետև գործող օրենսգիրքը որոշման կայացում չի նախատեսում: Մեր կարծիքով, առկա կարգավորումը լիարժեք չէ, որովհետև ձերբակալման արձանագրությունը ոչ թե հիմքն է տվյալ դատավարական հարակադրանքի միջոցի կիրառման համար, այլ ամրագրում է դրա կիրառման գործընթացը:

Անչափահաս անձի ձերբակալման դեպքում վարույթն իրականացնող մարմինը նրան և նրա օրինական ներկայացուցչին անհապաղ պետք է տեղեկացնեն օրենքով նախատեսված հետևյալ դատավարական իրավունքները՝

1) փաստացի ազատությունից զրկվելու պահին բանավոր, իսկ հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահին նաև գրավոր տեղեկացվել սույն հոդվածով նախատեսված նվազագույն իրավունքների և պարտականությունների մասին.

2) իմանալ իրեն ազատությունից զրկվելու պատճառը.

3) պահպանել լռություն.

4) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին.

5) հրավիրել փաստաբան.

6) իր պահանջով ենթարկվել բժշկական զննման /Նախագծի հոդված 110, մաս 2/:

ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով սահմանված է ձերբակալման ընդհանուր ժամկետ 72 ժամ: Հիմք ընդունելով ձերբակալման համար սահմանված ընդհանուր ժամկետը, միաժամանակ Նախագծում ձերբակալման առանձին տեսակների առանձնահատկություններից ելնելով սահմանված են տարբեր ժամկետներ: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալվածին պետք է մեղադրանք ներկայացվի և նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը լուծելու համար մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 60 ժամվա

ընթացքում: Մնացած 12 ժամը նախատեսված է դատարանում ձերբակալվածի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցի լուծման համար, իսկ 72 ժամը անցնելուց հետո ձերբակալված անձը ենթակա է ազատ արձակման, եթե նրա նկատմամբ չի ընտրվել կալանքը որպես խափանման միջոց:

Հաշվի առնելով անչափահասի տարիքային առանձնահատկությունները՝ Նախագծի 421 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք կատարած լինելու՝ անմիջակայնորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալված անչափահասի նկատմամբ կալանք, տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու անհրաժեշտության դեպքում նա պետք է դատարան ներկայացվի ձերբակալման պահից 48 ժամվա ընթացքում: Եթե ձերբակալված անչափահասը դատարան ներկայացնելու պահից 12 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի համեմատությամբ՝ այդպիսի կազավորումը զգալի առաջընթաց է, սակայն այն դեռևս չի բխում Պեկինյան կանոններից (10.2), որում ուղղակի սահմանված է, որ դատարանը կամ այլ իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը անչափահասի ազատման հարցը քննարկում են անհապաղ: Անչափահաս անձանց շահերի պաշտպանությունից ելնելով, կարծում ենք, որ պետք է սահմանել ոչ թե 48, այլ՝ 24 ժամ²⁹:

Անչափահաս անձանց նկատմամբ կիրառվող տարածված հարկադրանքի միջոցներից են խափանման միջոցները, որոնց կիրառման համար օրենքով սահմանված հիմքերն ու պայմանները ընդհանուր են բոլորի համար անկախ նրանց տարիքից:

Քանի որ Նախագծով կասկածյալը որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ վերացված է, հետևաբար խափանման միջոցները կիրառվում են միայն մեղադրյալի նկատմամբ:

Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ կալանք կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նա խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները: Ամեն

²⁹ Պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

դեպքում, անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել որպես *ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակահատվածի համար*: Օրենսդրական նշված կարագավորումը համահունչ է անչափահասների վերաբերյալ միջազգային պայմանագրերում տեղ գտած պահանջներին³⁰:

Նախագծով անչափահաս անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառվում է այն դեպքում, երբ նրանք մեղադրվում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում, իսկ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար՝ միայն այն դեպքում, երբ մեղադրյալը խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները: Այն տարբերվում է գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումից, որովհետև քրեական դատավարության գործող օրենսգրքի համաձայն՝ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է *միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի* կատարում /<< քր. դատ. օր-ի հոդված 442/: Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագիծը հնարավոր է համարում անչափահասին կալանավորել նաև ոչ մեծ ծանրության հանցագործության համար, սակայն բացառիկ դեպքում, եթե նա խախտել է իր նկատմամբ մինչ այդ կիրառված խափանման միջոցի պայմանները: Նշված բացառիկ պայմանը վերաբերում է նաև միջին ծանրության հանցագործությունների համար կալանքի կիրառմանը: Ճիշտ է, նշված կարագավորումը էապես սահմա-

³⁰ 2015թ. դատարան է ներկայացվել անչափահաս մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 18 միջնորդություն, որոնցից 12-ը բավարարվել է, իսկ 6-ը մերժվել: Կալանավորված 12 անչափահասներից 1-ի նկատմամբ՝ մինչդատական վարույթում կալանավորումը փոփոխվել է այլ խափանման միջոցով, 4-ի նկատմամբ՝ վերացվել է դատարանի կողմից, որոնցից 3-ը փոխարինվել է գրավով, իսկ 1-ը՝ այլ հիմքով: 2016թ. դատարան է ներկայացվել անչափահաս մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 18 միջնորդություն, որոնցից 14-ը բավարարվել է (այդ թվում՝ 1 հետախուզվող անչափահասի նկատմամբ), իսկ 4-ը մերժվել: Կալանավորված 14 անչափահասներից 2-ի նկատմամբ՝ մինչդատական վարույթում կալանավորումը փոփոխվել է այլ խափանման միջոցով, իսկ 3-ի կալանավորումը դատարանի կողմից փոխարինվել է գրավով: 2016թ. ժամանակահատվածում դատարան է ներկայացվել անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 6 միջնորդություն, որոնք բոլորն էլ բավարարվել են (այդ թվում՝ 1 հետախուզվող անչափահասի նկատմամբ), Կալանավորված 6 անչափահասներից 5-ի նկատմամբ՝ մինչդատական վարույթում կալանավորումը վերացվել է դատարանի կողմից, որոնցից 1-ը փոխարինվել է գրավով, իսկ 4-ի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժվել է: 2017թ. ժամանակահատվածում 11 անչափահաս մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը, որից 2-ը փոխարինվել է գրավով, 17-ի նկատմամբ ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին, իսկ 171-ը հանձնվել են ծնողի հսկողությանը:

նափակում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած անչափահաս անձի իրավունքները, սակայն այն բխում է քրեական դատավարությունում հանարային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:

Անչափահաս անձանց նկատմամբ կալանքի կիրառման մյուս առանձնահատկությունը վերաբերում է դրա ժամկետներին, քանի որ միջազգային փաստաթղթերում սահմանված է, որ անչափահասի նկատմամբ ազատությունից զրկումը պետք է լինի հնարավորինս ամենակարճ ժամանակահատվածում: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում այս կապակցությամբ որևէ առանձնահատկություն նախատեսված չէ և դատավարական գրականության մեջ հանդիպում ենք դրա արդարացի քննադատության³¹: Դատավարական գրականության մեջ հանդիպում ենք նաև հակառակ կարծիքի, որ չի կարելի անչափահասների կալանքի ժամկետները սահմանափակել: Նշված հեղինակները գտնում են, որ կալանքի տակ պահելու ժամկետները պետք է կախված լինեն գործի հանգամանքներից, այդ թվում գործի բարդությունից և ոչ թե մեղադրյալի տարիքից: Բացի դրանից անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման ենթակա հանգամանքները շատ են և դրանց ապացուցման համար պահանջվում է ավելի երկար ժամանակ³²:

Այդպիսի մոտեցման հետ անկասկած դժվար է համաձայնվել, որովհետև չափահասների և անչափահասների համար անազատության մեջ մնալու միևնույն ժամկետը՝ չի բխում անչափահասների գործերով արդարադատության նպատակներից: Անչափահաս անձին երկար ժամանակ անազատության մեջ պահելը չի բխում անչափահասի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքից, բացի դրանից կալանքի պայմանները կարող են բացասական ազդեցություն ունենալ անչափահասի վրա և նրա համար առաջացնել հոգեկան ծանր ապրումներ: Կալանքը որպես խափանման միջոց ոչ միայն պետք է կիրառել ծայրահեղ դեպքում, այլև ամենակարճ ժամանակահատվածի համար: Իրականում չի կարող անչափահաս և չափահաս մեղադրյալների համար սահմանվել կալանավորման միևնույն ժամկետները: Անչափահասի նկատմամբ կալանքի կիրառու-

³¹ Ст'ю Николук В.В. Уголовный процесс по делам несовершеннолетних: Лекция.- Омск: Юридический институт МВД России, 1998. – էջ 47, Авдеев В.Н. Процессуальные сроки содержания под стражей на стадии предварительного расследования. Калининград. 1999, էջ 56-57:

³² Ст'ю Авалиани К.А. Особенности досудебного производства по уголовным делам в отношении несовершеннолетних, Дисс. канд. юрид. наук. Кемерово, 2009 էջ 123:

մը հանգեցնում է ավելի շատ բացասական հետևանքների, քան թե դրական: Այս տեսանկյունից Նախագիծը տարբերվում է ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքից, որում անչափահասների համար կալանքի առավելագույն առանձին ժամկետներ չի սահմանված, այսինքն կալանքի համար սահմանված առավելագույն ժամկետները ընդհանուր են նաև անչափահասների համար: Այս մոտեցումը քննադատվել է դատավարական գրականության մեջ այն պատճառաբանությամբ, որ անչափահասների տարիքային առանձնահատկությունը ենթադրում է՝ տարբերակում մտցնել անչափահասների նկատմամբ կալանքի կիրառման առավելագույն ժամկետների մեջ³³:

Այս մոտեցումն իր արտացոլումը ստացավ Նախագծում, որի 421-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կիրառված կալանքի կամ տնային կալանքի տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել մեկ ամիսը: Մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կիրառված կալանքի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել՝

1) երկու ամիսը՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում.

2) վեց ամիսը՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում:

Առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվող անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքը բացառիկ դեպքերում կարող է երկարացվել ևս առավելագույնը երկու ամսով:

Դատավարական գրականության մեջ բազմիցս առաջարկվել է անչափահասների նկատմամբ խափանման միջոցներ ընտրելիս հաշվի առնել հանցագործության ծանրության աստիճանը, վարույթն իրականացնող մարմնից նրա թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունները, ինչպես նաև տվյալ անձի նկատմամբ կիրառվող խափանման միջոցի արդյունավետությունը: Պետք է, ի նկատի ունենալ, որ ամենակարճ ժամանակահատվածում էլ անազատության մեջ անչափահասի

³³ St' u Авдеев В.Н. Процессуальные сроки содержание под стражей на стадии предварительного расследования: Монография. Калининград., Калининградский юридический институт МВД России, 1999г., էջ 57:

գտնվելը՝ նրա հոգեկան վիճակի վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն³⁴։ Անչափահասի նկատմամբ կալանք կիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի նրա դաստիարակության պայմանները, ինչպես նաև ծնողների հետ ունեցած հարաբերությունները։

Անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս պետք է առկա լինեն քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցների կիրառման հիմքերը, բայց միաժամանակ այդ հիմքերի հետ միասին անպայման պետք է հաշվի առնվեն այնպիսի հանգամանքեր, որոնք էական նշանակություն ունեն անձին ազատությունից զրկելու հարցի որոշման համար, մասնավորապես նրան մեղսագրվող արարքի ծանրության աստիճանը և բնույթը, նրա կոնկրետ տարիքը, այսինքն տասչորս է կամ տասնվեց տարեկան, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, նրա անձը բնութագրող հանգամանքները, հանցավոր աշխարհի հետ ունեցած կապերը, նրա վարքագիծը հանցագործություն կատարելուց հետո։ Նախագծում տեղ գտած մյուս կարևոր առանձնահատկությունը վերաբերում է խափանման միջոցի և մեղսագրվող արարքի ծանրության աստիճանի և բնույթի կապվածությանը։ Նախագիծը խափանման միջոցների կիրառման իրավաչափության պայմանների մեջ սահմանում է, որ խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝

1) մեղադրյալի փախուստը կանխելու համար.

2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար.

3) մեղադրյալի կողմից իր վրա օրենքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար։

Նույն հոդվածում այս ընդհանուր նպատակներից արվում է հետևյալ բացառությունը, որ նշված հանգամանքների հիմնավորում չի պահանջվում՝

1) առաջին անգամ տնային կալանք կիրառելու դեպքում, բացառությամբ, եթե այն կիրառվում է սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասի 2-8-րդ կետերով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցի պայմանների խախտման հիմքով.

2) սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասի 2-8-րդ կետերով նախատեսված

³⁴ Տե՛ս Աვალიანი К.А. Նույն աշխատ. էջ 115։

այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու դեպքում:

Քննչական պրակտիկայի ուսմունասիրությունը ցույց է տալիս, որ քննիչները կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս մեծամասամբ խուսափում են գործի հանգամանքներով պայմանավորված խափանման միջոցի ընտրության համար համապատասխան հիմքերի առկայությունը վկայող ապացույցներ ներկայացնելուց, այլ օգտագործում են ընդհանուր ձևակերպումներ՝ կարող է խուսափել քննությունից կամ խոչընդոտել գործի քննությանը: Այս կապակցությամբ արդիական է պրոֆեսոր Մ.Ս. Ստրոգովիչի այն մոտեցումը, որ այն մտավախությունը, որ մեղադրյալը կարող է թաքվել քննությունից և դատից, որպես հիմք կալանքի համար՝ պետք է թխի գործի հանգամանքներից և այլ բնութագրական տվյալներից և ոչ թե ընդհանուր և վերացական դատողությունից, որ անձը կարող է թաքնվել քննությունից³⁵:

Նախագիծը չբացառելով անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը, միաժամանակ ամրագրում է հետևյալը, որ ամեն դեպքում, անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց: Այդպիսի կարգավորումը ինչպես քրեական հետապնդման մարմին, այնպես էլ դատարանին պարտավորեցնում է կալանքը կիրառել միայն ծայրահեղ դեպքերում, երբ բացառվում է այլընտրանքային որևէ խափանման միջոցի կիրառումը: Իհարկե, Նախագծից չի երևում, թե ինչ պետք է հասկանալ «ծայրահեղ» ասելով կամ որ հանգամանքներն են, որոնք պետք է հաշվի առնել կալանք կիրառելիս: Ելնելով դատական պրակտիկայի ուսմունասիրությունից, կարծում ենք, որ պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝ անչափահասի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը, քրեական պատասխանատվության ենթարկվելը, մի քանի հանցագործություն կատարելը, նրա ագրեսիվ վարքագիծը հանցագործություն կատարելիս կամ դրանից հետո և այլն: Դատավարական գրականության մեջ նման հիմքեր առանձնացվել են այլ գիտնականների կողմից, այսպես՝ Ֆ. Բագաուտդինովը առանձնացնում է անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու բացառիկությունը հատառող հետևյալ հանգամանքները՝ նախկինում անչափահասի կողմից հանցագործություն կատարելը, երկու կամ ավելի հանցագործության կատարումը, անչափահասի

³⁵ Ст'ю Строгович М.С. Курс советского уголовного процесса. Т. 1, М., 1968, էջ 280:

անձնական հատկանիշներից ելնելով նրան հասարակությունից մեկուսացնելը (չսովորելը, չաշխատելը, ոստիկանությունում հաշվառման մեջ գտնվելը, թմրանյութեր օգտագործելը և այլն)³⁶:

Անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս պետք է առկա լինեն քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցների կիրառման հիմքերը /Նախագիծ հոդված 116/, բայց միաժամանակ այդ հիմքերի հետ միասին անպայման պետք է հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն անձին ազատությունից զրկելու հարցի որոշման համար: Այս տեսանկյունից պետք է համաձայնել դատավարական գրականության մեջ տեղ գտած հետևյալ մոտեցման հետ, որ անչափահասի նկատմամբ խափանման միջոցի ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք թեև քրեական դատավարության նպատակներից դուրս են, բայց ունեն կրիմինոլոգիական մեծ նշանակություն՝

- հանցավոր վարքագծի մոտիվացիան,
 - անչափահասի դերը հանցագործության կատարման մեջ,
 - հանցագործության կատարման պատճառները և պայմանները,
 - անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները,
 - անչափահասի մտավոր զարգացվածության աստիճանը, դաստիարակությունը,
 - անչափահասի վարքագիծը մինչև հանցագործություն կատարելը և դրանից հետո,
- անչափահասի վարքագիծը քննության ընթացքում³⁷:

Նախագծում իր լուծումն է ստացել մի կարևոր հարց, որը կապված է կալանքը որպես խափանման միջոց կրառելու համար՝ մեղադրյալին դատարան ներկայացնելու ժամկետների հետ: Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ սահմանված չէ, թե ձերբակալված անձը, երբ պետք է ներկայացվի դատարան: Օրենսդրական կարգավորումից հետևում է, որ մեղադրյալը դատարան կարող է ներկայացվել նաև ձերբակալման համար օրենքով սահմանված 72 ժամը լրանալու պահին: Այսօր սա լուրջ

³⁶ Տե՛ս Багаутдинов Ф. Ювенальная юстиция начинается с предварительного следствия //Российская юстиция. 2002, N 9. Էջ 44:

³⁷ Տե՛ս Трунов И.Л. Трунова Л.К. Меры пресечения в уголовном процессе, СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2003, էջ 235:

խնդիր է առաջացնում, որովհետև դատարանում կալանք կիրառելու հարցը քննարկելիս անձին ձերբակալման ժամկետն արդեն լրացել է, իսկ նման դեպքում նա պետք է անհապաղ ազատ արձակվի: Նախագծում այս հարցին տրվել է արդյունավետ լուծում, այսինքն անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա անձին ձերբակալելիս վերջինս դատարան պետք է ներկայացվի ձերբակալման պահից 60 ժամվա ընթացքում, իսկ 12 ժամը նախատեսվում է դատարանում կալանքի հարցի քննարկման համար: Նախագիծը հաշվի առնելով անչափահասների տարիքային առանձնահատկությունները՝ նախատեսում է լրացուցիչ երաշխիք՝ հանցանք կատարած լինելու՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալված անչափահասի նկատմամբ կալանք, տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու անհրաժեշտության դեպքում նա պետք է դատարան ներկայացվի ձերբակալման պահից 48 ժամվա ընթացքում: Եթե ձերբակալված անչափահասը դատարան ներկայացնելու պահից 12 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա անհապաղ ազատ է արձակվում (Նախագիծ հոդված 421): Օրենսդրական նշված կարգավորումն անկասկած բխում է անչափահաս անձի շահերից, բայց քննչական պրակտիկայում այն կարող է խնդիրներ առաջացնել, մասնավորապես այն դեպքերում, երբ անչափահասը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար: Կալանքի կիրառման համար կարևոր պայման է հիմնավոր կասկածի առկայությունը, իսկ այդ ժամանակահատվածում՝ հիմնավոր կասկածի ապացուցումը կարող է նաև՝ խնդիրներ առաջացնել:

Անչափահասի իրավունքների պաշտպանությունից ելնելով Նախագծում ուղղակի սահմանված է, որ անչափահասի ձերբակալման, կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին անհապաղ տեղեկացվում է նրա օրինական ներկայացուցիչը: Այս հանգամանքը նշանակում է, որ կալանքի հարցը քննարկելիս՝ պետք է ապահովել նաև օրինական ներկայացուցչի մասնակցությունը, քանի որ մինչև կալանքին անդրադառնալը՝ բոլոր դեպքերում պետք է քննության առարկա դարձնել ծնողների հսկողությանը հանձնելու հարցը:

Քրեական դատավարության խնդիրներից ելնելով Նախագիծը ընդարձակել է դատավարական հարկադրանքի միջոցների շրջանակը, որոնք առանձնանում են իրենց

խստության աստիճանով:

Անչափահասի նկատմամբ կալանքը կարող է կիրառվել միայն բացառիկ դեպքերում, այս հանգամանքը նշանակում է, որ անչափահասի նկատմամբ պետք է կիրառել օրենքով նախատեսված այլ խափանման միջոցներ, որոնք նույնպես կոչված են ապահովելու քրեական դատավարության խնդիրների իրականացումը: Քրեական դատավարությունում, որքան շատ են այդ այլընտրանքային խափանման միջոցները, նույնքան փոքրանում է անչափահասի նկատմամբ կալանքի կիրառման հնարավորությունները: Դրանով է պայմանավորված, որ Նախագծում գոյություն ունեցող խափանման միջոցների շարքում ավելացվել են այնպիսի խափանման միջոցներ, որոնք նորույթ են մեր դատավարության համար, այդպիսիք են՝ տնային կալանքը և վարչական հսկողության հանձնելը: Բացի դրանից պետք է համաձայնել այն մոտեցման հետ, որ ի տարբերություն մեծահասակների, անչափահաս մեղադրյալներն իրենց նկատմամբ կիրառված թեկուզ օրինական և հիմնավոր կալանքը ընդունում են ակնհայտ անարդարացի, իսկ հանցավոր միջավայրի ազդեցությունը նրանց նկատմամբ դառնում է կործանիչ³⁸:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրությամբ նախատեսված ամենամեղմ խափանման միջոցը չհեռանալու մասին ստորագրությունն է, որը Նախագծում կոչվում է բացակայելու արգելքը: Անչափահասի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով դատավարական գրականության մեջ հանդիպում ենք կարծիքի, որ 14-ից մինչև 16 տարեկան անչափահասի նկատմամբ այս խափանման միջոցի կիրառումն նպատակահարմար չէ, իսկ ավելի բարձր տարիքի անչափահասի նկատմամբ այն կարող է կիրառվել, եթե հնարավոր չէ կիրառել այնպիսի խափանման միջոց, որը կապված չէ անձին անազատության մեջ պահելու հետ: Նշված մոտեցումը պաշտպանող հեղինակները պատճառաբանում են, որ անչափահասն իր տարիքային զարգացվածության աստիճանից ելնելով չի կարող գիտակցել, որ իր վրա դրված է պարտականություն, որը չկատարելու դեպքում՝ իր նկատմամբ կարող է կիրառվել ավելի խիստ խափանման միջոց³⁹: Իրականում չբացառելով նշված խափանման միջոցի կարևորությունը, բայց այն իր նպատակին կարող է ծառայել միայն այն դեպքում, եթե համապա-

³⁸Տե՛ս Гецманова И.В. Особенности предварительного следствия по делам о преступлениях несовершеннолетних, дисс. на соиск. канд. юрид. наук, М., 2003, էջ 96:

³⁹ Տե՛ս Бояхчев В.Г., Савкин А.В., Харчиков А.В. Выявление и устранение преступного поведения несовершеннолетних на предварительном следствии, Пособие, М., 1996, էջ 38,

տասխան անձը հասկանում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի էությունն ու պարտականությունները: Հիմնականում այս խափանման միջոցի կիրառման ապահովումը դրվում է անչափահասի ծնողների, որդեգրողների վրա, ուստի այն ավելի շատ նմանվում է հսկողության հանձնելուն:

Մեր կողմից կատարված հարցումները ցույց են տալիս, որ քննիչների 70% անաչափահաս մեղադրյալների նկատմամբ խափանման միջոց կիրառելիս իրենց որոշումները հիմնավորում են ոչ թե գործի հանագամանքներից ելնելով, այլ հանցագործության ծանրության աստիճանով, մեղադրյալի անձնավորությամբ, նախկինում դատավածության առկայությամբ: Այսպես, օրինակ, թիվ ԵԱՆԴ/0010/06/17 գործով ակնհյատ էր, որ անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար հիմք էր հանդիսացել հանցանքի ծանրությունը, քանի որ անչափահասը դեպքից հետո թեև թաքնվել էր մի քանի օր, այնուհետև ինքնակամ ներկայացել էր վարույթն իրականացնող մարմնին և տվել խոստովանական ցուցմունքներ, մինչդեռ քննիչը միջնորդություն էր ներկայացրել դատարան, իսկ դատարանը բավարարել էր այն, քանի որ անչափահասը մեղադրվում էր սպանություն կատարելու մեջ⁴⁰: Թեև պետք է արձանագրել, որ ոչ բոլոր ծանր հանցագործությունների դեպքում է, որ կալանք է կիրառվում անչափահասի նկատմամբ, օրինակ, ԱՐԱԴ1/0048/01/15 գործով անչափահաս մեղադրյալը թեև կատարել էր մի քանի դրվագ բնակարանային գողություններ, որոնք ևս հանդիսանում են ծանր հանցագործություն, սակայն կալանքի հարց չէր քննարկվել⁴¹, որպիսի հանգամանքը, մեր կարծիքով, պայմանավորված է արարքի բնույթով:

Քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված խափանման միջոցների շարքում առանձնանում է երաշխավորությունը, որը լինում է երկու տեսակ՝ անձնական և կազմակերպության:

Քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձնական երաշխավորությունը անչափահասի նկատմամբ շատ քիչ է կիրառվում, որովհետև օրենսդրությամբ նախատեսված է այնպիսի խափանման միջոց, ինչպիսին է հսկողության հանձնելը: Բնականաբար հսկողության հանձնելու խափանման միջոցի առկայության պայմաններում հարց է առաջանում, թե երբ պետք է կիրառվի երաշխավորություն՝

⁴⁰Տե՛ս Թիվ ԵԱՆԴ/0010/06/17 քրեական գործ:

⁴¹Տե՛ս Թիվ ԱՐԱԴ1/0048/01/15 քրեական գործը:

հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված այն պահանջը, որ անչափահասի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս՝ նախապատվությունը պետք է տալ ծնողների հսկողությանը հանձնելուն:

Քրեադատավարական գործող օրենսդրությունը, չնայած երկու խափանման միջոցների միջև եղած ընդհանրությանը, չի սահմանափակում անչափահասի նկատմամբ երաշխավորության կիրառման հնարավորությունը: Այս հանգամանքը ենթադրում է՝ խափանման միջոցի կիրառման հարցում ճիշտ կողմնորոշում: Կարծում ենք, որ անձնական երաշխավորությունը պետք է կիրառել այն դեպքում, երբ հսկողության հանձնելը չի կարող ապահովել քրեական դատավարության խնդիրների իրականացումը:

Անձնական երաշխավորություն ընտրելու դեպքում՝ արձանագրության մեջ պետք է հստակ առանձնացվեն այն պարտավորությունները, որոնք պետք է կրեն երաշխավորներից յուրաքանչյուրը: Քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է, որ երաշխավորողների թիվը չի կարող երկուսից պակաս լինել, իսկ անչափահասի դեպքում դա կարևոր է, քանի որ նրա վարքագծին հետևելն ավելի բարդ է, քան չափահասի դեպքում, որովհետև վերջինս ավելի հստակ է գիտակցում իր պարտականությունները, և դրանց չկատարելու դեպքում նախատեսվող հետևանքները:

Գ.Ե. Օմելչենկոն այն կարծիքին է, որ անձնական երաշխավորության դեպքում, պետք է նշել միայն այն պարտավորությունները, որոնք երաշխավորն իրականում կարող է կատարել: Երաշխավորողների միջև պարտականությունների բաժանում ոչ միայն թույլատրելի է, այլև որոշակի հանգամանքներում անհրաժեշտություն: Օրինակ՝ անձնական երաշխավորողներից մեկը հնարավորություն ունի ապահովել անչափահասի ներկայությունը վարույթն իրականացնող մարմնի կանչով, իսկ նրա վարքագծի նկատմամբ ընդհանուր հսկողություն չի կարող ապահովել: Կարևորն այն է, որ երաշխավորողները համատեղ ջանքերով ապահովեն անչափահասի պատշաճ վարքագիծը և վարույթն իրականացնող մարմին նրա ներկայանալը⁴²:

Պեկինյան կանոնների 13,2 կանոնի համաձայն՝ ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել անչափահասին մշտական հսկողության, դաստիարակչական ակտիվ աշ-

⁴² St'u Омельченко Г.Е. Применение следователями органов внутренних дел мер пресечения к несовершеннолетним, НИИРПО Киевской высшей школы МВД СССР им. Ф.Э. Дзержинского, 1988, էջ 60-61:

խատանքը կամ ընտանիքում, դաստիարակչական հաստատությունում կամ ուղղիչ տանը տեղավորելը: Հսկողության հանձնելը որպես խափանման միջոց կարևորվում է, որովհետև միջազգային պայմանագրերում ուղղակի պահանջ կա այն մասին, որ մինչև անձին ազատությունից զրկելը քննարկել նրան մշտական հսկողության հանձնելու հարցերը:

Այս պահանջի իրականացումն ապահովվում է քրեադատավարական գործող օրենսդրությամբ նախատեսված այնպիսի խափանման միջոցի կիրառմամբ, ինչպիսին է հսկողության հանձնելը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 148 հոդվածի համաձայն՝ հսկողության հանձնելն այն է⁴³, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը: Քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ծնողները, խնամակալները, հոգաբարձուները կամ փակ մանկական հիմնարկները: Ինչպես տեսնում ենք, նշված խափանման միջոցի իրականացումն ապահովում են երկու խումբ սուբյեկտներ՝ առաջին՝ ծնողները, խնամակալները⁴⁴ և հոգաբարձուները, երկրորդ՝ փակ մանկական հաստատությունները: Իհարկե նպատակն ընդհանուր է՝ ապահովել՝ 1) կասկածյալի և մեղադրյալի պատշաճ վարքագիծը, 2) քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալը, 3) այլ դատավարական պարտականություններ կա-

⁴³ Նախագծում այս խափանման միջոցը կոչվում է «դաստիարակչական հսկողություն», այդպիսի վերանվանումն արդարացված է, որովհետև անչափահասի տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ նշված խնդիրների իրականացումը, ճիշտ կլիներ, ապահովել դաստիարակչական մեթոդներով:

⁴⁴ Անչափահասին խնամակալների հսկողությանը հանձնելու հետ կապված քրեական դատավարության օրենսգրքը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածին, որում սահմանված է, որ խնամակալություն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը: Ինչպես տեսնում ենք՝ խնամակալությունը սահմանվում է մինչև 14 տարեկան անչափահասի նկատմամբ, իսկ քրեական պատասխանատվությունը նախատեսվում է 14 տարին լրացած անձի համար: Պետք է նշել, որ Նախագծում այս հակասությունը վերացված է, բայց նրանում մի կարևոր նորույթ է մտցված, որը բացակայում է գործող օրենսգրքում, այսինքն այդ սուբյեկտների շարքում որդեգրողներին մտցնելը:

տարելը:

Անչափահասի նկատմամբ հսկողության հանձնելը կիրառելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը և նրանց հանձնում որոշման պատճենը, ծանոթացնում կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը, նրանց բացատրում է իրենց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչն արտացոլվում է արձանագրությունում:

Իհարկե նշված խափանման միջոցը կիրառվում է վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, բայց ծնողների, խնամակալների, հոգաբարձուների համաձայնությունը պետք է, որովհետև նրանք իրավունք ունեն նաև հրաժարվել անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց: Եթե ծնողները համաձայնություն չեն տալիս այս խափանման միջոցի կիրառման վարաբերյալ, ապա պետք է կիրառվի այլ խափանման միջոց: Օրենքը որևէ պատասխանատվություն չի նախատեսում այն բանի համար, երբ նշված անձինք հրաժարվում են հսկողություն իրականացնելու պարտավորություն կրելուց, ինչը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով: Պետք է նաև նշել, որ այս հարցի կապակցությամբ առանձին դատավարագետներ այլ մոտեցման են, գտնելով, որ հսկողության հանձնելը կիրառվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ՝ անկախ ծնողների համաձայնության⁴⁵:

Դատավարական գրականության մեջ առանձին հեղինակներ վերապահումով են մոտենում այս խափանման միջոցին, գտնելով, որ անչափահասի նկատմամբ հսկողություն իրականացնելը մտնում է ծնողների պարտականության մեջ, հետևաբար այս խափանման միջոցի կիրառման կարիքը չկա⁴⁶: Ճիշտ է, ընտանեկան օրենսդրությամբ, ինչպես նաև երեխաների մասին օրենսդրությամբ այդպիսի պարտականություն դրված է ծնողների վրա, բայց հաշվի առնելով հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի իրավական վիճակը, նրա վարքագծի բարդությունները, դժվար է ծնող-

⁴⁵ St' u Ландо А.С. Представители несовершеннолетних обвиняемых в советском уголовном процессе. Саратов. Издательство Саратовского Университета, 1977. էջ 217:

⁴⁶ Попов А.Н. Особенности предварительного расследования по делам о преступлениях несовершеннолетних: дисс. ... канд. юрид. наук. – Красноярск: Гос. ун-т, 2001, էջ 176:

ներին պարտադրել ապահովել անչափահասի պատշաճ վարքագիծը քրեական գործով վարույթի ողջ ընթացքում: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ ինչպես քրեական դատավարության գործող օրենսգրքում, այնպես էլ Նախագծում տեղ գտած կարգավորումն արդարացված է և համահունչ է միջազգային փաստաթղթերում տեղ գտած պահանջներին: Կարծում ենք, որ գործնականում քրեական վարույթն իրականացնող մարմինները պետք է առավել նշանակություն տան հսկողության հանձնելու խափանման միջոցին և պրակտիկայում առավել շատ կիրառել, որովհետև այն անչափահասի համար ունի դաստիարակչական նշանակություն:

Հսկողության հանձնել խափանման միջոցը կիրառելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ուշադրություն դարձնի ծնողների վարքագծի, նրանց ապրելակերպի ու զբաղվածության, անչափահասի նկատմամբ ունեցած ազդեցության և այլ հանգամանքերի, որոնք պետք է ապահովեն նշված խափանման միջոցի կիրառման նպատակահարմարություն ու արդյունավետությունը:

Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ որպես կալանքին այլընտրանքային խափանման միջոց առանձնացնում է գրավը: Այս հանգամանքը նշանակում է, որ նշված խափանման միջոցը կարող է կիրառվել նաև աչափահասի նկատմամբ: Դատավարական գրականության մեջ առանձին դատավարագետներ անչափահասի նկատմամբ գրավի կիրառման վերաբերյալ ունեն վերապահում՝ գնտելով, որ այն արդյունավետ չէ, որովհետև անչափահասն իր տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից ելնելով՝ իվիճակի չէ ամբողջությամբ հասկանալ այդ խափանման միջոցի էությունը, երբ գրավը մուծվում է այլ անձի կողմից, հետևաբար տվյալ խափանման միջոցի դաստիարակչական և կանխարգելիչ նշանակությունը հավասարվում է զրոյի⁴⁷: Կարծում ենք, որ նշված մոտեցումն արդարացված է, որովհետև տարիքային առանձնահատկությունը հնարավորություն չի տալիս հասկանալ տվյալ խափանման միջոցի էությունը:

Քրեական գործով վարույթի ընթացքում անչափահասի նկատմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցներից է բերման ենթարկելը, որն ի տարբերություն խափանման միջոցների կարող է կիրառվել նաև վկայի և տուժողի նկատմամբ:

⁴⁷ Ст'я Боровик О.В. Особенности досудебного производства по уголовным делам в отношении несовершеннолетних, дисс. ... канд. юрид. наук. – М., 2006, էջ 157:

Բերման ենթարկելը նշված սուբյեկտների նկատմամբ կարող է կիրառվել այն դեպքում, երբ նրանք առանց հարգելի պատճառների չեն ներկայանում վարույթն իրականացնող մարմնի կանչով: Հարգելի կարող են համարվել հետևյալ պատճառները՝ հիվանդությունը կամ այլ հանգամանքները, որոնք իրականում խոչընդոտել են վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալուն:

Բերման ենթարկելն իրականացվում է համապատասխան դատավարական գործողության կատարման համար, որի հետևանքով հնարավոր է նաև բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավորապես սահմանափակում:

Անչափահասի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով օրենքում որոշակի վերապահումներ են նախատեսվում անչափահասների համար, մասնավորապես՝ չի թույլատրվում բերման ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասին, հղի կանանց և ծանր հիվանդությամբ տառապող անձանց, բացառությամբ ծանր կամ առնանձնապես հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի (Քր. դատ. օր-ի հոդված 153, մաս 4):

Անհրաժեշտ է նշել, որ Նախագծում բերման ենթարկելը ստացել է բոլորովին այլ անվանում՝ «կարճաժամկետ ձերբակալումը» կամ «դատարան հարկադրաբար ներկայացնելը»: Երկուսի էությունն էլ կայանում է վարույթի մասնավոր մասնակցի (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի կողմից օրենքով նախատեսված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու մեջ: Այս երկու դատավարական հարկադրանքի միջոցներն էությամբ նույն են՝ ուղղակի, եթե կատարվում է դատարանում, ապա կոչվում է դատարան հարկադրաբար ներկայացնել, որի դեպքում դատարանը նշված նպատակներից ելնելով արձակում է անձին դատարան ներկայացնելու կարգադրագիր, իսկ մինչդատական վարույթում քննիչը կայացնում է անձին ձերբակալելու մասին որոշում:

Այդպիսի կարգավորումները նորույթ են, կարծում ենք, որ Նախագծի հեղինակները փորձել են բարձրացնել հարկադրանքի այս միջոցի կիրառման օրինականության ապահովման երաշխիքները: Իհարկե, կարճաժամկետ ձերբակալումը չի ենթադրում ան-

ծի նկատմամբ քրեական հետապնդման իրականացում, այլ ապահովում է վարույթի մասնավոր մասնակցի կողմից իր պարտականությունների կատարումը: Այսպիսի կարգավորումը համահունչ է նաև ՀՀ Սահմանադրությանը, որում սահմանված ձերբակալման հիմքերի մեջ նշվում է նաև օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակի մասին (ՀՀ Սահմանադրություն հոդված 27, կետ 3):

2.2. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթում ապացուցման ենթակա հանգամանքների առանձնահատկությունները

Ապացուցումը քրեական դատավարությունում բարդ գործընթաց է, որը նախևառաջ ենթադրում է գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբանում, որի նպատական է՝ քրեական դատավարության խնդիրների իրականացման ապահովումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսված են այն հանգամանքները, որոնք պետք է ապացուցվեն յուրաքանչյուր քրեական գործով և կազմում են քրեական գործով ապացուցման առարկան:

Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ ապացուցման առարկա ասելով ընդունված է հասկանալ՝ քրեական գործի ճիշտ լուծման և յուրաքանչյուր դեպքում դատավարության սկզբունքների իրականացման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների համակարգ⁴⁸:

Ապացուցումը որպես ճանաչողական պրոցես ենթադրում է այնպիսի հանգամանքների պարզաբանում, որոնք հանգեցնում են հանցագործության բացահայտման, անձի մեղավորության կամ անմեղության հաստատման: Այսինքն օրենքով նախատեսված հանգամանքների պարզաբանումը հանգեցնում է ճշմարտության բացահայտման:

Այսօր դատավարական գրականության մեջ որևէ մեկի կողմից չի վիճարկվում ապացուցման ենթակա հանգամանքների օրենսդրական ամրագրման անհրաժեշտությո-

⁴⁸ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն: (ընդհանուր մաս,), դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն Երևան, 2006թ. էջ 308:

յունը, այլ քննարկման առարկա են դրանց հստակեցման և ընդարձակման հարցերը: Առաջին անգամ քրեական գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքներն իրենց օրենսդրական ամրագրումը ստացան ԽՍՀՄ քրեական դատավարության հիմունքների 15-րդ հոդվածում /1958թ./, այնուհետև՝ ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածում /1961թ./, որի համաձայն՝ «Հետաքննություն և նախաքննություն կատարելիս և քրեական գործը դատարանում քննելիս ապացուցման ենթակա են՝

1) հանցագործության դեպքը /հանցագործության կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլ հանգամանքներ/.

2) մեղադրյալի մեղավորությունը հանցագործությունը կատարելու մեջ.

3) մեղադրյալի պատասխանատվության աստիճանի ու բնույթի վրա ազդող հանգամանքները.

4) հանցագործությամբ պատճառած վնասի բնույթը և չափը:

Բացահայտման ենթակա են նաև հանցագործության կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները»:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում ապացուցման ենթակա հանգամանքները ստացան որոշակի զարգացում: Ճիշտ է, ընդհանուր գծերով, այն նման է նախկին քրեական դատավարության վերը նշված օրենսդրական կարգավորմանը, բայց նրանում տեղ են գտել նաև առանձնահատկություններ:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն. «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական

դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով.

7) այն հանգամանքները, որոնք հիմնավորում են, որ գույքը ստացվել է հանցագործության կատարման արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից կամ օգտագործվել է կամ նախատեսվել է օգտագործել որպես հանցագործության գործիք կամ միջոց կամ ուղղվել է ահաբեկչության ֆինանսավորմանը կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215.1 հոդվածի 7-րդ մասով նախատեսված հանցագործության առարկա»:

Ինչպես տեսնում ենք ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը հաշվի առնելով ապացուցման իրավունքի տեսության զարգացումները՝ ընդարձակել և ավելի է հստակեցրել այն հանգամանքների շրջանակը, որոնք պետք է ապացուցվեն յուրաքանչյուր քրեական գործով: Մասնավորապես, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի մեջ նախատեսվեց հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշների պարզաբանումը: Նման կարգավորումն արդարացված է, քանի որ առանց հանցակազմի բոլոր տարրերի ապացուցման՝ խոսք չի կարող լինել՝ ենթադրյալ հանցագործության բացահայտման և ենթադրյալ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:

Ի տարբերություն խորհրդային քրեական դատավարության օրենսգրքի՝ գործող օրենսգրքում բացակայում է հանցագործության կատարմանը նպաստող պատճառների և պայմանների բացահայտումը, որպես ապացուցման առարկայի բաղկացուցիչ տարր: Այն ներկայում հանդիսանում է, որպես նախնական քննության պայման /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 200/, որը պարզաբանելը և համապատասխան միջոց ձեռնարկելը պարտադիր է բացառապես նախաքննության փուլում և նախաքննության մարմինների համար: Կարծում ենք այդպիսի կարգավորումը ճիշտ է, քանի որ դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող մարմին նման խնդիր չունի, իսկ ապացուցման ենթակա հանգամանքներն ընդհանուր են վարույթն իրականացնող բոլոր մարմինների համար:

Քրեադատավարական օրենսդրության հետագա զարգացումը ենթադրում է քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի ընդարձակում

և հստակեցում: Այս տեսանկյունից ուշագրավ է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած կարգավորումը, որն էապես ընդարձկել է ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը: Օրենսդրական նման կարգավորումից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմնի խնդիրը ոչ միայն հանցագործության դեպքի բացահայտումը և այն կատարած անձի մեղավորության ապացուցումն է, այլև այն հանգամանքների, որոնց պարզաբանումը կարևոր է քրեական գործով վեճի լուծման կամ արդարադատության իրականացման համար: Այս տեսանկյունից ապացուցման ենթակա հանգամանքներն առավել ընդարձակվել և հստակեցվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 102 հոդվածում, համաձայն որի՝

«Քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա են՝

- 1) դեպքը և դրա հանգամանքները /ժամանակը, տեղը, եղանակը և այլն/,
- 2) մեղադրյալի առնչությունը դեպքին,
- 3) ենթադրյալ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները,
- 4) մեղադրյալի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ,
- 5) քրեական օրենքով նախատեսված՝ պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները,
- 6) մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները,
- 7) ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը,
- 8) այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից կամ պատժից,
- 9) այն հանգամանքները, որոնցով անձը հիմնավորում է վարույթի ընթացքում իր գույքային պահանջները,
- 10) այն հանգամանքները, որոնցով վարույթի մասնակիցը կամ այլ անձը հիմնավորում է իր պահանջները»:

Կարծում ենք, որ ապացուցման ենթակա նշված հանգամանքները էական նշանակություն ունեն քրեական գործի լուծման համար և չեն կարող հանգեցնել գործի քննության անհիմն ձգձգման: Նախագծում ապացուցման ենթակա հանգամանքների մեջ առաջին անգամ առանձնացվում են մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները:

Այս կապակցությամբ պրոֆեսոր Մ.Ս. Ստրոգովիչը գրում է, որ գործի ճիշտ լուծման համար պետք է հաստատվեն և ապացուցվեն մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները, որպեսզի դատարանին պարզ դառնա, թե ինչ է իրենից ներկայացնում մեղադրյալը⁴⁹: Հետևաբար, մեղադրյալի անձը նախնական քննության ընթացքում հետազոտման ենթակա անհարաժեշտ ու բարդ օբյեկտներից է, իսկ առավել բարդ անչափա-հասի հետ կապված:

Ի տարբերություն գործող օրենսգրքի Նախագիծը սահմանում է մեկ այլ կարևոր դրույթ ևս, որ օրենսգրքով նախատեսված վարույթի առանձին տեսակների համար կարող է սահմանվել ապացուցման ենթակա հանգամանքների այլ շրջանակ:

Քրեական վարույթի առանձին տեսակների առանձնահատկություններից ելնելով՝ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված են առանձին գործերով ապացուցման ենթակա հանգամանքների առանձնահատկություններ: Այդպիսի առանձնահատկություններ սահմանված են մասնավորապես անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձանց վերաբերյալ վարույթում և անչափահասներին վերագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերով վարույթում:

Անչափահասների վերաբերյալ վարույթում ապացուցման առարկայի առանձնահատկության նախատեսումը կարևոր երաշխիք է հանցագործության հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման, ինչպես նաև վարույթի դաստիարակչական ներգործության ապահովման համար: Գ.Մ. Մինկովսկին անդրադառնալով անչափահասների վերաբերյալ գործերով ապացուցման առարկային նշում է, որ այն ներառում է բավականին մեծ քանակությամբ փաստեր, որոնց հաստատումն անհրաժեշտ է մեղադրյալի կյանքի և դաստիարակության պայմանների բնութագրման համար, քան մեծահասկաների, ավելին՝ ցանկացած գործով ապացուցման ենթակա հանգամանքներն այստեղ պարզաբանվում են առավել մանրամասն⁵⁰:

Վ.Գ. Պրոսվիրնինը անչափահասների գործերով ապացուցման առարկա ասելով հասկանում է այն հանգամանքները, որոնք ենթակա են հաստատման նշված կատեգորիայի:

⁴⁹ Ст'ю Строгович М.С. Курс советского уголовного процесса, Т. 1. М., էջ 365:

⁵⁰ Ст'ю Миньковский Г.М. Особенности расследования и судебного разбирательства дел о несовершеннолетних, М., 1959. էջ 73:

րիայի մեղադրյալների սոցիալիզացիաների առանձնահատկությունները հաշվի առնելով և անհարաժեշտ են քրեական գործի ճիշտ լուծման և քրեական դատավարության խնդիրների իրականացման համար⁵¹:

Ն.Գ. Վետրովան առանձնացնում է անչափահասների հանցագործություններով ապացուցման առարկայի երեք խումբ՝ 1/ անչափահաս անձի բնութագրական գծերը, 2/ նրա կյանքի և դաստիարակության պայմանները, 3/ չափահաս դրդիչների կամ այլ հանցակիցների առկայությունը կամ բացակայությունը⁵²:

Համաձայնելով հեղինակների հետ նշենք, որ ապացուցման առարկայի ընդարձակումը վարույթի այս տեսակի դեպքում պայմանավորված են անչափահաս անձի ֆիզիկական և սոցիալ հոգեբանական հատկանիշներով, ինչպես նաև անձի տարիքային զարգացվածությամբ պայմանավորված հանգամանքներով:

Կարծում ենք՝ ապացուցման ենթակա հանգամանքները կազմում են անչափահասների գործերով վարույթի հիմնական առանձնահատկություններից մեկը: Քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը՝ բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով պարզում է նաև անչափահասի՝

1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը),

2) կյանքի և դաստիարակության պայմանները,

3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը (<< քր. դատ. օր-ի 440 հոդված):

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով առանձնացնում է այնպիսի հանգամանքներ, որոնք բնութագրում են անչափահաս անձի սոցիալ-հոգեբանական վիճակը: Քրեական դատավարության նոր օրենսգրքի հեղինակները ելնելով քրեական դատավարության սկզբունքներից՝ անչափահաս մեղադրյալների համար նախատեսել են վարույթային լրացուցիչ երաշխիքներ:

<< քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 417 հոդվածի համաձայն՝

⁵¹ Ст'ю Просвирнин В. Г. Особенности предмета доказывания по уголовным делам несовершеннолетних.: Автореф, дисс. ... канд. юрид. наук. Волгоград, 2001, էջ 10:

⁵² Уголовно-процессуальное законодательство Союза ССР и РСФСР, էջ 298:

«Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով պարզվում են՝

6) անչափահասի տարիքը /ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը/,

7) անչափահասի սոցիալական, ընտանեկան վիճակի կրթության և դաստիարակության պայմանները,

8) հոգեկան զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները,

9) անչափահասի վրա տարիքով ավագ անձանց ազդեցությունը,

10) ենթադրյալ հանցանքի կատարման պատճառները և դրան նպաստող պայմանները»:

Ինչպես տեսնում ենք՝ Նախագծում ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը ընդարձակվել է՝ նրանում տեղ են գտել այնպիսի հանգամանքներ, որոնք բնութագրում են անչափահաս մեղադրյալի անձի բնութագրական գծերը: Այդ հանգամանքների նախատեսումը քրեական դատավարության նոր օրենսգրքում բխում է Պեկինյան կանոններից: Դրանց պարզումը կարևոր է պատասխանատվության անհատականացման, պատժի նշանակման և դաստիարակության միջոցների ընտրության համար: Ինչպես նշված է դատավարական գրականության մեջ այդ հանգամանքները պայմանավորում են անչափահասների գործերով ապացուցման առարկայի առանձնահատկությունները⁵³:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման նախադրյալներից մեկը նաև յուվենալ արդարադատության խնդիրների լուծումն է, քանի որ գործող օրենսգրքում իրենց արտացոլումը չեն գտել յուվենալ արդարադատության նվազագույն չափորոշիչները: Այդ չափորոշիչների օրենսդրական կարգավորման բացակայությունը պատճառ է անչափահասների գործերով արդարադատության ոչ արդյունավետ իրականացման: Մինչդեռ անչափահասների դաստիարակության հարցերը յուրաքանչյուր պետության առաջնահերթ խնդիրներից է: Կարևոր է նկատել, որ Նախագծում փոփոխված է մոտեցումը նաև հանցագործության կատարմանը նպաստող պատճառների և պայմանների պարզաբանման հարցում: Նախագծի 102 հոդվածում, որում սահմանված են բոլոր գործերով ապացուցման ենթակա հանգամանքները՝ նախատեսված չեն հան-

⁵³ См'и Уголовно-процессуальное право Российской Федерации. //Под. ред. П.А. Лупинской. М., Юность, 2003. էջ 668:

ցագործությանը նպաստող պատճառները և պայմանները, մինչդեռ հեղինակները հաշվի առնելով վարույթի այս տեսակի առանձնահատկությունները ապացուցման ենթակա հանգամանքների մեջ առանձնացրել են նաև այդ հանգամանքները, որոնք պարտադիր են նաև դատարանների համար:

Նախագծում մի փոքր ավելի լայն ձևակերպում է ստացել անչափահասների վրա տարիքով անձանց ազդեցության հանգամանքը, քանի որ միջազգային փաստաթղթերում և գրականության մեջ սովորաբար խոսքը վերաբերում է դրդիչներին և այլ հանցակիցներին, իսկ Նախագծում՝ օգտագործվում է «ավագ անձանց ազդեցություն» հասկացությունը, որի տակ պետք է հասկանալ բոլոր այն անձանց, ովքեր կարող էին ազդել անչափահասի վարքագծի վրա:

Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման առարկայի օրենսդրական կարգավորումը ենթադրում է ոչ թե փոփոխություն, այլ ապացուցման ընդհանուր առարկայի կոնկրետացում և մասնավորեցում:

Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման առարկայի կարգավորման զարգացումները, մեր կողմից կներկայացվեն, ինչպես գործող, այնպես էլ Նախագծի կարգավորումները⁵⁴:

1. Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման ենթակա հանգամանքներից են՝ անչափահասի տարիքը /ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը/:

Քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի սահմանման անհրաժեշտությունը կապված է անձի կողմից իր վարքագծի բնույթն ու սոցիալական նշանակությունը հասկանալու, իր ցանկությունները և մղումները հասարակական պահանջներին, վարքագծի կանոններին համադրելու և քրեական պատասխանատվության իմաստը համակողմանի ընկալելու ընդունակության հետ⁵⁵:

Քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայմաններից մեկը օրենքով սահմանված որոշակի տարիքի հասած լինելն է: Քրեական պատասխանատ-

⁵⁴ Տե՛ս Боровик О. В. Особенности досудебного производства уголовным делам в отношении несовершеннолетних, //Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, М., 2006, էջ 97:

⁵⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2012, էջ 172:

վության ընդհանուր տարիք սահմանելով տասնվեցը, իսկ առանձին հանցագործությունների համար՝ տասնչորսը՝ քրեական օրենքը հաշվի է առնում, որ անչափահասն այդ տարիքում լիովին ընդունակ է գնահատելու իր հանցավոր վարքագիծը:

Անչափահասի տարիքի որոշումն անհրաժեշտ է նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Եթե հանցագործություն կատարած անձը չի հասել քրեորեն պատժելի տարիքի, ապա դա հիմք է քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու համար:

Անչափահասի տարիքի պարզումը կարևոր է նաև կոնկրետ հանցագործությունը անչափահասի կողմից կատարելու հնարավորության հարցը լուծելու, ինչպես նաև քրեական դատավարությունում վարույթի առանձնահատկությունները կիրառելու համար: Քրեական գործով վարույթի ընթացքում օրենքով նախատեսված անչափահասների գործերով վարույթի առանձնահատուկ կարգ կիրառվում է այն դեպքում, երբ հաստատվում է, որ անձը հանցագործությունը կատարելու պահին եղել է անչափահաս, այսինքն՝ տասնչորս կամ տասնվեց տարեկանից մինչև 18 տարեկանը:

Անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի սահմանումը միշտ էլ եղել է քրեագետների քննարկման առարկա: Այս հարցը լուծելիս հիմք է ընդունվում ազգային առանձնահատկությունները, բայց կարևոր է նաև համաշխարհային փորձի ուսունասիրությունը: Պատահական չէ, որ այս խնդիրն իր համապատասխան լուծումն է ստացել միջազգային պայմանագրերում: Այսպես Պեկինյան կանոնների 4.1. հոդվածում սահմանված է. այն իրավական համակարգերում, որոնցում ընդունվում է «անչափահասների քրեական պատասխանատվության տարիք» հասկացությունը, այդպիսի տարիքի նվազագույն սահմանը չպետք է հաստատվի շատ ցածր տարիքային մակարդակով, հաշվի առնելով զգացմունքային, հոգեկան և մտավոր հասունության գործոնները:

Պեկինյան կանոնների մեկնաբանություններում անչափահասի տարիքի սահմանման հարցը ներկայացվում է հետևյալ կերպ՝ քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի սահմանները, կախված պատմական և մշակութային առանձնահատկություններից, միանգամայն տարբեր են: Ժամանակակից մոտեցման կիրառումը կա-

յանում է երեխայի՝ քրեական պատասխանատվության հետ կապված բարոյահոգեբանական ասպեկտները կրելու ընդունակությունների որոշման մեջ, այսինքն՝ բացահայտ հակասական վարքագծի համար երեխային պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը որոշվում է անհատական ընդունակությունների, աղջկա կամ տղայի ըմբռնման, ընկալման կարողությամբ: Եթե քրեական պատասխանատվության տարիքային սահմանը հաստատված է չափից ցածր մակարդակի կամ ընդհանրապես չի հաստատված, պատասխանատվության գաղափարը դառնում է անմիտ: Ընհանրապես փոխադարձ սերտ կապ կա իրավախախտման կամ հանցավոր վարքագծի համար պատասխանատվության և այլ սոցիալական իրավունքների ու պարտականությունների միջև /ինչպես ընտանեկան դրությունը, քաղաքացիական չափահասությունը և այլն/:

Դրա համար պետք է ջանքեր գործադրել նվազագույն տարիքային սահմանը խելամտորեն որոշելու համար, որը կարող է նաև կիրառվել միջազգային մակարդակով:

Պետք է նշել, որ տարիքային սահմանները կախված կլինեն և ուղիղ կախման մեջ կդրվեն յուրաքանչյուր իրավական համակարգի դրությունից, հաշվի առնելով անդամ պետությունների տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական համակարգերը: Դրա համար «անչափահաս» հասկացությունը տարիքային լայն շրջանակ է ընդգրկում, 7-ից մինչև 18 տարեկան կամ ավելի մեծ: Այդպիսի տարբերությունը անխուսափելի է, նկատի ունենալով ազգային նվազագույն չափորոշիչ կանոնների նշանակությունը :

Օրենքում ամրագրված նվազագույն տարիքային սահմանը պահանջում է ճշգրիտ որոշել հանցանք կատարած անձի տարիքը: Այս հարցը լուծվում է համապատասխան փաստափոթերի հիման վրա /ծննդյան վկայական, անձնագիր և այլն/: Տարիքը որոշվում է անձի ծննդյան օրվա ավարտման պահով, այսինքն՝ օրենքով սահմանված տարիքը համարվում է լրացած նրա ծննդյան օրվա հաջորդ օրը:

Եթե չկան համապատասխան պաշտոնական փաստաթղթեր, որոնք կարող են հաստատել անչափահաս անձի տարիքը, ապա պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն: Քրեական գործով վարույթում գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարի-

քի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ կարող են հաստատվել միայն դատաբժշկական և դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացություններով /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 108, կետ 4/:

Մեր կարծիքով, այս դեպքում սուբյեկտի ծննդյան օր է համարվում փորձագետի կողմից նշված տարվա վերջին օրը, իսկ երբ նշվում է տարիքի նվազագույն և առավելագույն սահմանները, ապա դատարանը պետք է հիմք ընդունի նվազագույնը: Եթե անձը հասել է քրեական օրենքով սահմանված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության /ՀՀ քր. օր-ի հոդված 24, մաս 3/: Նշված հոդվածից հետևում է, որ այդպիսի վիճակը նույնպես համարվում է անմեղսունակություն: Տվյալ դեպքում պատճառը ոչ թե հոգեկան հիվանդությունը կամ այլ հիվանդագին վիճակն է, այլ անչափահասի սոցիալ հոգեբանական զարգացվածության ցածր մակարդակը: Որոշ քրեագետներ այդպիսի վիճակը անվանում են տարիքային անմեղսունակություն⁵⁶: Ի տարբերություն անմեղսունակության, որը հետևանք է քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի, նշված դեպքում խոսքը վերաբերում է անչափահասի թերզարգացվածությանը, որն ամբողջությամբ չի գիտակցում իր գործողությունների /անգործության/ փաստական բնույթը և հասարակական վտանգավորությունը կամ թերզարգացվածության պատճառով ունակ չէ ամբողջությամբ կառավարել այն, բայց հոգեկան հիվանդ չէ:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի, այս պահանջն իր օրենսդրական ամրագրումն է ստացել Նախագծի 417 հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ հոգեկան խանգարումների հետ չկապված հոգեկան թերզարգացման մասին վկայող տվյալների առկայության դեպքում պետք է պարզվի նաև, թե արդյոք անչափահասը կարող էր ամբողջությամբ գիտակցել իր գործողությունների /անգործության/ փաստական բնույթը և հանրային վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

⁵⁶ Ст'а Наумов А.В. Российское уголовное право. Общая часть, М., 1997, էջ 187; Назаренко Г.В. Уголовное законодательство России: Учебное пособие, М., 1998, էջ 16:

Անչափահասների արդարադատության նման մոտեցումը հիմնավորում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որն իր 1999թ դեկտեմբերի 16-ի V-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում նշում է՝ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ հանցագործության մեջ մեղադրվող երեխայի նկատմամբ վերաբերմունքը պետք է հիմնված լինի նրա տարիքի, հասունության մակարդակի, մտավոր զգայական կարողությունների վրա՝ ներառելով նաև քայլեր, որոնք խրախուսում են նրա՝ դատարավարությունն ընթռնելու և դատավարությանը մասնակցելու կարողությունը(կետ 86)⁵⁷: Այսինքն՝ դատարանի այս դիրքորոշումից և այլ միջազգային իրավական ակտերից հստակ երևում է, որ անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել անչափահասների վերաբերյալ քրեական գործերով դատավարություններին, մասնավորապես՝ օրենսդրորեն սահմանել և գործնականում ապահովել այնպիսի ընթացակարգեր, որոնք հիմնված են անչափահաս իրավախախտի խոցելի վիճակի վրա և հնարավարություն է ընձեռնում նրան առավելագույնս ներկայացնելու իր իրավունքներն ու օրինական շահերը:

2. Անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման մակարդակը և նրա անհատականության այլ առանձնահատկությունները:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի համեմատությամբ Նախագիծը անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները պարզելու հետ մեկտեղ նախատեսում է պարզել անչափահասի հոգեկանի զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները:

Անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները պարզելը կարևոր դեր են խաղում հանցագործության դրդապատճառները, կատարվածի նկատմամբ անչափահասի առնչության հանգամանքները, հանցագործություն կատարելուն նպաստած հանգամանքները բացահայտելու գործում, օգնում են միջոցներ ձեռնարկելու այլ հանցագործությունները կանխելու նպատակով, լուծելու ծնողներին կամ դաստիարակներին հնարավոր պատասխանատվության ենթարկելու և խափանման միջոցի մասին հարցը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախաքննութ-

⁵⁷ Տե՛ս <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58594>

յան մարմինները և դատարանը պատշաճ ուշադրություն չեն դարձնում այդ հանգամանքների պարզաբանմանը: Ըստ այդմ կարծում ենք, որ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել անչափահասի կյանքի ու պայմանների այն ցանկը, որոնք պահանջվում է պարզել, ինչը կնպաստի նաև օրենքի միատեսակ կիրառմանը⁵⁸:

Այդ կապակցությամբ, մեր կարծիքով, օրենքում պետք է ամրագրել անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանների օրինակելի ցանկը, որը դասվում է անչափահասի կողմից կատարված հանցագործության վերաբերյալ քրեական գործով ապացուցման առարկային: Դրանց շարքին կարելի է դասել նաև տեսության և դատաքննչական պրակտիկայի կողմից մշակված տեղեկությունները:

1) Անչափահասի ընտանիքի վերաբերյալ տեղեկատվությունը. ծնողների ազգանունը, անունը, հայրանունը, նրանց կրթությունը, աշխատանքի վայրը, զբաղվածության բնույթն ու կենսակերպը, երեխաների թիվը ընտանիքում, ընտանիքի նյութական վիճակը, տեղեկատվություն այն մասին, թե փաստացի ով է զբաղվում անչափահասի դաստիարակությամբ, ընտանիքում ձևավորված փոխհարաբերությունները, ծնողների վերաբերմունքը անչափահասի և նրա վերաբերմունքը ծնողների նկատմամբ, տեղեկություններ անչափահասի՝ խնամակալության տակ կամ մանկական հիմնարկում գտնվելու մասին, անչափահասի հսկողությունից դուրս մնալու պատճառները, եթե այդ հանգամանքը հաստատված է:

2) Անչափահասի ուսման կամ աշխատանքի պայմանների մասին տեղեկատվությունը:

Քրեական գործով վարույթի ընթացքում անչափահասի ուսման և աշխատանքի

⁵⁸ Անչափահաս Դ. Դանիելյանի կողմից սառը զենք հանդիսացող մարտական սյուրիկեն կրելու դեպքի առթիվ 26.09.2017թ. ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդ. 4-րդ մասով հարուցված թիվ 13894217 քրեական գործը ըստ մեղադրանքի՝ Դ. Դանիելյանի մեղադրական եզրակացությամբ 2017թ. հոկտեմբերի 19-ին ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն:

2017թ. հոկտեմբերի 23-ին քրեական գործը վերադարձվել է լրացուցիչ քննության՝ անչափահաս Դ. Դանիելյանի փաստացի բնակության վայրից, համապատասխան ուսումնական հաստատությունից բնութագիր չպահանջելու, նրա կյանքի և դաստիարակության պայմանները չպարզելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 440-րդ հոդվածի պահանջները չպահպանելու պատճառաբանությամբ:

պայմանները ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսի դպրոցում է սովորել կասկածյալը կամ մեղադրյալը, որ դասարանում է սովորում անչափահասը, ինչպիսին են նրա առաջադիմությունը, վարքը, ում հետ է ընկերություն անում, ինչ հարաբերություններ ունի ուսուցիչների և աշակերտների հետ, նրա նկատմամբ դաստիարակչական բնույթի միջոցներ կիրառվե՞լ են, թե ոչ, իսկ եթե կիրառվել են, ապա ինչ արարքների համար: Եթե անչափահասն աշխատում է, ապա պետք է պարզել, թե որտեղ և որպես ինչ է աշխատում, դու՞ր է գալիս նրան իր աշխատանքը, թե՞ ոչ, որքա՞ն է աշխատավարձը, բարձրացնո՞ւմ է արդյոք որակավորումը, համատեղո՞ւմ է աշխատանքը ուսման հետ, արդյոք համապատասխանո՞ւմ են նրա աշխատանքային պայմանները աշխատանքային օրենսդրության պահանջներին: Եթե անչափահասը թողել է ուսումը, հարկավոր է պարզել դրա պատճառը, երբ է դա տեղի ունեցել, ինչպես են արձագանքել ուսումը թողնելու փաստին ուսումնական հաստատության վարչակազմը և ծնողները, ինչ միջոցներ են ձեռնարկվել նրան ուսումնական հաստատություն վերադարձնելու համար:

3) Անչափահասի շրջապատի, կապերի, հեղափոխությունների շրջանակի մասին տեղեկատվությունը. ինչպե՞ս է անչափահասն անցկացնում ազատ ժամանակը, մասնակցո՞ւմ է մարզական և այլ խմբակների, թե՞ ոչ, ովքե՞ր են նրա ընկերները և այլն:

Բացի այդ, անչափահասի անձի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար կարևոր է իմանալ՝ օգտագործո՞ւմ է նա արդյոք ոգելից խմիչքներ, թմրանյութեր և հոգեմետ նյութեր, որ տարիքից սկսած և ինչ քանակությամբ, ով է նրան սովորեցրել, որտեղից է դրան հայթայթել, նման վիճակում իրավախախտումներ կատարե՞լ է, թե ոչ:

4) Անչափահասի վարքը նախկինում:

Մանրամասն պետք է ուսումնասիրվի նաև անչափահասի վարքագիծը մինչև հանցագործություն կատարելը: Այս դեպքում էական նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները. արդյո՞ք անչափահասը նախկինում կատարել է հանցանք կամ այլ իրավախախտումներ, եթե այո, ապա երբ և ինչպիսի, ինչ հանցագործությունների համար և ինչ տարիքում, քանի անգամ և ինչ պատժի է դատապարտվել, որտեղ է կրել

պատիժը, ինչպիսի վարք է դրսևորել պատիժը կրելու ընթացքում, երբևէ հետաձգվել է նրա նկատմամբ դատավճռի ի կատար ածումը, գտնվել է արդյոք հատուկ դաստիարակչական հիմնարկներում, երբ և ինչի համար, որքան ժամանակ, ոստիկանություն բերման ենթարկվել է, այնտեղ հաշվառվա՞ծ է, ենթարկվել է վարչական պատասխանատվության:

5) *Անչափահասի վարքը հանցագործություն կատարելուց հետո* (զղջո՞ւմ է, թե՞ ոչ, շարունակո՞ւմ է նախկին կենսակերպը, թե՞ ձգտում է քավել մեղքը աշխատանքի, ուսման նկատմամբ օրինակելի վերաբերմունքով և լավ վարքով):

Բոլոր այս հանգամանքները հարկավոր է հետազոտել բազմակողմանիորեն, միմյանց հետ կապերի և ընդհանրության մեջ, այլապես հնարավոր է սխալ հետևություններ անել:

Անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները պարզվում են հենց անչափահասին, վկաներին (ծնողներին, ուսուցիչներին, հարևաններին, ընկերներին և այլ անձանց) հարցաքննելու միջոցով, ինչպես նաև քննչական այլ գործողություններ իրականացնելով՝ գործին կցելով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Հոգեկան զարգացման մեջ հետ մնալը, որը կապված չէ հոգեկան խանգարման հետ, նշանակում է զգալիորեն հետ մնալ տվյալ տարիքի համար նորմալ մտածողական, ճանաչողական գործունեության զարգացման մակարդակից, ունենալ գիտելիքների և պատկերացումների թերի պաշար, հուզականային հատկանիշների թերզարգացում և այլն: Սա կապված չէ հոգեկան հիվանդության հետ կամ ուղեղի արտացոլման գործունեության խանգարման հետ, այլ միայն հետևանք է անչափահասի մտավոր զարգացման թերհասության (մտածողական, ճանաչողական գործունեության, հուզականային հատկանիշների և այլն): Այսօրինակ թերհասությունը կարող է լինել, օրինակ, երկարատև հիվանդության հետևանք, որը հանգեցրել է իր հասակակիցների համեմատ անչափահասի հոգեկանի զարգացման դանդաղեցման: Այսպիսով, հոգեկանի թերզարգացմամբ անչափահասներին հատուկ են բնավորության գծեր, որոնք բնորոշ են ավելի փոքր տարիքային խմբի անչափահասներին, իսկ նրանց զարգացման դան-

դադումը առավելապես ժամանակավոր բնույթ է կրում⁵⁹:

Անչափահասի՝ հոգեկան խանգարման հետ չկապված հոգեկան զարգացման հետամնացության առկայության կամ բացակայության հարցը որոշելու համար, պետք է նշանակվի համալիր դատահոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն, քանի որ տվյալ դեպքում անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ հոգեբանության և հոգեբուժության ոլորտներում:

Անչափահասի նկատմամբ քրեական գործը քննելիս կարող է հարց առաջանալ արդյո՞ք հոգեկան թերզարգացության յուրաքանչյուր դեպք ներառվում է ապացուցման առարկայի մեջ: Առաջին անգամ Նախագիծը անչափահասի կատարած հանցագործության վերաբերյալ քրեական գործով որպես ապացուցման ենթակա հանգամանք նախատեսում է **«անչափահասի անձի այլ առանձնահատկությունները»**: Սակայն, Նախագծում, այդուհանդերձ, չի որոշակիացվում, թե ինչն է դրան վերաբերում: Այնուամենայնիվ, անչափահասի անձը բնութագրող հանգամանքների օգնությամբ բացահայտվում է նրա մեղավորությունը կամ անմեղությունը, ի հայտ են գալիս հանցագործությունը կատարելուն նպաստած պատճառներն ու պայմանները, հանցավոր արարքի դրդապատճառը, հստակեցվում է հարցաքննությունը վարելու ճիշտ մարտավարությունը և անչափահաս կասկածյալի (մեղադրյալի) հնարավոր գնահատականը և այլն: Դրանք օգնում են ճիշտ որոշելու պատասխանատվության բնույթն ու աստիճանը, անհրաժեշտ խափանման միջոցը և ընտրելու քրեական պատժի համապատասխան տեսակը: Կարծում ենք, որ անչափահասի անձի ուսումնասիրման խորությունը որոշելիս անհրաժեշտ է պարզել նրա առավել կայուն անձնային հատկանիշները: Ընդ որում, անչափահասի անձի զանազան բնութագրերի մեջ քննիչին և դատարանին պետք է հետաքրքրեն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են անչափահասի վերաբերյալ գործը ճիշտ լուծելու համար՝ ինչպես ճշմարտությունը բացահայտելու, այնպես էլ դատավարության առավելագույնս դաստիարակչական և կանխարգելիչ արդյունքի տեսանկյունից:

Մեր կարծիքով, անչափահասի անձնային այլ առանձնահատկությունների մեջ

⁵⁹ Նախագծում որպես առանձին հանգամանք նշվում է հետևյալը՝ հոգեկան խանգարումների հետ չկապված հոգեկան թերզարգացման մասին վկայող բավարար տվյալների դեպքում պետք է պարզի նաև, թե արդյոք անչափահասը կարող էր ամբողջությամբ գիտակցել իր գործողությունների (անգործության) փաստական բնույթը և հանրային վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

պետք է առանձնացնել նրա բնավորության և խառնվածքի յուրահատկությունները, պահանջմունքները, հետաքրքրությունները, ընդունակությունները, մտավոր, կամային և հուզական զարգացման աստիճանը, նյարդային համակարգի զարգացածությունը, տրամաբանությունը, վճռականությունը, նպատակասլացությունը, սկզբունքայնությունը, ինքնուրույնությունը, համառությունը և այլն:

Անչափահասների վերաբերյալ յուրաքանչյուր գործով պետք է բացահայտվեն և համապատասխան փաստաթղթում արտացոլվեն անչափահասի ֆիզիկական առողջության վիճակը, զգայական և ֆիզիկական կամ հոգեկան արատների առկայությունը, ինչը թույլ կտա ընտրելու առավել նպատակահարմար խափանման միջոց, ինչպես նաև որոշ դեպքերում պատասխանելու այն հարցին, թե կարո՞ղ էր արդյոք անչափահասը կատարել այս կամ այն հանցագործությունը:

Անչափահասի անձի ուսումնասիրությունը պետք է իրականացնել՝ անդրադառանալով ինչպես հանցագործությանը նախորդող, այնպես էլ դրանից հետո ընկած ժամանակաշրջանին, քանի որ անչափահասի անձնային հատկությունները կարող են փոփոխվել արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ:

Կարծում ենք, որ անչափահասի անձի ուսումնասիրությունը պետք է իրականացնել այն ծավալով, որը կբավարարի անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ արդարացնելու հարցերը լուծելու, նրա նկատմամբ քրեական պատիժ սահմանելու կամ դրանից ազատելու կամ էլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար:

3. Անչափահասի վրա տարիքով ավելի մեծ անձանց ազդեցությունը: Անհրաժեշտ է նշել, որ այս հանգամանքը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում: Անչափահասների վերաբերյալ գործերով որպես ապացուցման ենթակա պարտադիր հանգամանք այն նախատեսված է Նախագծով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված է, որ այդ հանգամանքը հաշվի է առնվում դատարանի կողմից պատիժ նշանակելիս: Կարծում ենք, որ ապացուցման առարկայի մեջ այնպիսի հանգամանքի ներառումը, ինչպիսին է ‘անչափահասի վրա տարիքով ավելի մեծ անձանց ազդեցությունը’, ավելի արդարացված է, քանի որ այս դեպքում պարզվում է անչափահասի վրա ինչպես չափահաս անձանց, այնպես էլ այլ անչափահասների (որոնք

տարիքով ավելի մեծ են) ազդեցությունը: Ընդ որում՝ այդպիսի ազդեցությունը կարող է դուրս մնալ հանցակցության քրեաիրավական հասկացության շրջանակներից, սակայն մեծ դեր խաղալ անչափահասների շրջանում հակահասարակական հայացքների առաջացման և սովորությունների ձևավորման ժամանակ (օրինակ՝ ծնողների ոչ ճիշտ դատարարականությունը, դպրոցական ընկերների, գործընկերների բացասական ազդեցությունը կամ անբարոյական պահվածքը և այլն): Վերոնշյալ հանգամանքները կարող են նաև անչափահասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն դրդել հանցագործության, և քննչական գործողություններ իրականացնելիս, ինչպես նաև քրեաիրավական բնույթի (հատկապես ազատագրկման հետ առնչություն չունեցող) միջոցներ կիրառելիս դրանք պետք է հաշվի առնել):

2.3. Քննչական գործողությունների կարարմանը անչափահասի մասնակցության առանձնահատկությունները

Քննչական գործողությունները կարևոր նշանակություն ունեն հանցագործությունների բացահայտման համար և ընկած են ապացուցողական գործունեության հիմքում: Այս հանգամանքը նշանակում է, որ «քննչական գործողություն» հասկացության գիտական ուսումնասիրությունն ու դրա օրենսդրական ճիշտ կարգավորումը՝ կարևոր երաշխիք է քրեական դատավարության խնդիրների իրականացման համար: Քննչական գործողությունների հասկացության վերաբերյալ դատավարական գրականության մեջ չկա միասնական մոտեցում: Քրեական դատավարության գործող օրենսգրքի 6-րդ հոդվածում տրված են դատավարության հիմնական հասկացությունների բնորոշումը, սակայն դրանց շարքում տեղ չի գտել քննչական գործողության բնորոշումը⁶⁰: Սա այն

⁶⁰ Պետք է նշել, որ օրենսդրական այս բացն իր լուծումն է ստացել Նախագծի 6-րդ հոդվածի 38-րդ կետում, որում նախ՝ քննչական գործողություն հասկացությունը վերանվանվել է «ապացուցողական գործողություն» հասկացության, որի տակ հասկացվում է քննիչի կամ դատարանի կողմից, ինչպես նաև հետաքննության մարմնի (քննիչի հանձնարարությամբ) կամ փորձագետի (քննիչի կամ դատարանի հանձնարարությամբ) կողմից կատարվող՝ սույն օրենսգրքով նախատեսված վարույթային գործողություն, որի արդյունքում ակնկալվում է ձեռք բերել ապացույց: Ամենից առաջ ուշադրության է արժանի անվանումը, որի բովանդակության մեջ դրված է ոչ թե սուբյեկտի գործունեությունը, այլ այն նպատակը, որին ուղղված է այդ գործողությունները: Ուշագրավ է նաև այն, որ վարույթային այդ գործողության սուբյեկտ է համարվում նաև դատարանը, քանի որ այդ գործողությունները կարող են իրականացվել նաև դատաքննության ընթացքում: Սրանով վերացվեց նաև այն տարբերությունը, որն առկա է միջդատական վարույթում և դատական քննության ընթացքում, այսինքն նույն գործողությունը՝

պատճառներից մեկն է, որ դատավարական գրականության մեջ հանդիպում ենք այդ հասկացության տարբեր բնորոշումների: Ա.Մ. Լարինի և այլոց կարծիքով՝ այն ամենը ինչ արվում է քննիչի կողմից՝ քննչական գործողություն է⁶¹: Այսպիսի ձևակերպումից հետևում է, որ չկա տարբերություն դատավարական գործողության և քննչական գործողության միջև: Մենք պաշտպանում ենք այն դատավարագետների կարծիքը, որոնք գտնում են, որ քննչական գործողությունը քրեադատավարական օրենքով կարգավորված և վարույթն իրականացնող մարմնի (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատական քննության փուլում նաև դատարան) կողմից իրականացվող որոնողական, ճանաչողական և հավաստողական օպերացիաների համալիր է, որը համապատասխանում է որոշակի տեսակի հետքերի առանձնահատկություններին, հարմարեցված է դրանցում պարունակվող ապացուցողական տեղեկությունների արդյունավետ որոնմանը, ընկալմանն ու ամրագրմանը⁶²: Համամիտ լինելով նշված կարծիքին, այնուամենայնիվ գտնում ենք, որ այն լիարժեք չէ, քանի որ մնում են հարցեր, որոնք դեռևս լուծում չեն ստացել: Այս տեսանկյունից արդարացված ենք համարում Նախագծում տեղ գտած կարգավորումը, որը քննչական գործողությունը դարձնում է ոչ թե փուլային, այլ քրեական դատավարության ընդհանուր ինստիտուտ: Սա նշանակում է, որ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված երաշխիքները հիմնականում հավասարապես կիրառվում են ինչպես մինչդատական վարությամբ, այնպես էլ դատական քննության ընթացքում:

Քննչական գործողությունների օրենսդրական արդյունավետ կարգավորումը կարևոր է, քանի որ այդ գործողությունների արդյունքում էապես սահմանափակվում են անձի իրավունքներն ու ազատությունները: Հարկ է նշել, որ այդ գործողությունները հա-

մինչդատական վարությամբ կոչվում է քննչական, իսկ դատական քննության փուլում՝ դատական, մինչդեռ դրանք բոլորն էլ անկախ դատավարության փուլից՝ ապացույցների հավաքման և ստուգման նպատակ են հետապնդում:

⁶¹ Տե՛ս Ларин А.М. Расследование по уголовному делу. Планирование, организация. М., 1970. էջ 147; Герасимов И.Ф. Некоторые проблемы раскрытия преступлений. Свердловск. СЮИ, 1975, էջ 65; Уголовный процесс России /Под ред. З.Ф. Ковриги и Н.П. Кузнецова Воронеж, ВГУ, 2003, էջ 215:

⁶² Տե՛ս Казинян Г.С., Соловьев А.Б. Проблемы эффективности следственных действий, Ереван, ЕГУ, 1987, էջ 23; Шейфер А.С. Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение, М., 2004, էջ 19; Кальницкий В.В. Следственные действия. Омск: Омская академия МВД РФ, 2003, էջ 4; Соловьев А.Б. Процессуальные, психологические и тактические основы допроса на предварительном следствии, М., 2002; Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, ԵՊՀ, Երևան, 2010, էջ 103:

վասարապես կարող են իրականացվել նաև անչափահասների հետ, քանի որ քրեադատավարական օրենսդրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում: Քննչական գործողությունների կատարմանը անչափահասների մասնակցության հարցերը միշտ էլ եղել է դատավարագետների ուշադրության կենտրոնում, իսկ օրենսդրական նոր զարգացումների պայմաններում դրանց ուսումնասիրությունը դարձել է ավելի արդիական⁶³:

Յուզենալ արդարադատության խնդիրներից ելնելով՝ անչափահասների հետ կատարվող քննչական գործողությունների կատարման դատավարական կարգի վերաբերյալ պետք է սահմանվեն այնպիսի առանձնահատկություններ, որոնք կապահովեն անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Իհարկե քննչական կամ ապացուցողական գործողությունները շատ են ու բազմատեսակ, բայց մեր կողմից կուսումնասիրվեն ամենատարածված գործողությունները՝ հարցաքննությունը և առերեսումը:

Հարցաքննությունը ամենատարածված քննչական գործողություններից է, որի ապացուցողական նշանակությունը նրանում է, որ դրա կատարման արդյունքում վարույթն իրականացնող մարմինը ստանում է ցուցմունքներ, կասկածյալից, մեղադրյալից, տուժողից, վկայից և փորձագետից: Ինչպես տեսնում ենք հարցաքննվել կարող են դատավարական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտներ, որոնց ցուցմունքները թույլատրելի են, եթե պահպանվել են դրանց ձեռք բերման օրենքով սահմանված դատավարական կարգը:

Հարցաքննությունն այն քննչական գործողություններից է, որի ընթացքում վարույթն իրականացնող մարմինը լսում է հարցաքննվողի բանավոր խոսքը, նրա հաղորդած տեղեկությունները: Ընդհանրապես անչափահաս անձի հարցաքննության համար փաստական հիմք է՝ նրա կողմից քրեական գործի հանգամանքների մասին տեղեկություններ ունենալը, իսկ իրավաբանական հիմք է՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից, անչափահաս անձին հարցաքննության կանչելը կամ այդ նպատակով նրան բերման ենթարկելը:

⁶³ Ландо А.С. Представители несовершеннолетних обвиняемых в советском уголовном процессе. Саратов, 1977, էջ 81; Сафин Н.Ш. Допрос несовершеннолетнего подозреваемого в советском уголовном судопроизводстве (процессуальный и криминалистический аспекты проблемы), Казань, 1990, էջ 120:

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի առաջին հարցաքննության համար՝ փաստական հիմք է ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքը կատարած լինելու մասին քննիչի և հետաքննության մարմնի մոտ հիմնավոր կասկածի առկայությունը: Անչափահաս մեղադրյալի առաջին հարցաքննության համար իրավաբանական հիմք է՝ նրան որպես մեղադրյալ ներգավելու մասին որոշումը ներկայացնելը և որպես մեղադրյալ հարցաքննելը: Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությունը հնարավոր է միայն քրեական գործ հարուցելու մասին որոշման առկայության դեպքում, որովհետև առանց այդ որոշման՝ նշված սուբյեկտները չեն կարող լինել:

Օրենքը տարիքային առանձնահատկությունից ելնելով նախապես չի սահմանափակում այն վկաների և տուժողների շրջանակը, որոնք կարող են հարցաքննվել: Ցուցմունքներ տալու անչափահասի ունակության վերաբերյալ կասկած առաջանալու դեպքում՝ վարույթն իրականացնող մարմինը նշանակում է փորձաքննություն:

Անչափահասների տարիքային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները հանգեցրել են նրանց համար դատավարական լրացուցիչ երաշխիքներ սահմանելուն, այսինքն նախատեսել հարցաքննության հատուկ կանոններ⁶⁴: Այդ առանձնահատկությունները վերաբերում են՝

- քննչական գործողության կատարման համար անչափահասին կանչելու կարգին,
- հարցաքննության իրականացման դատավարական կարգին,
- հարցաքննությանը մասնակցող անձանց շրջանակին,
- պաշտպանի պարտադիր մասնակցությանը:

Անչափահասների հարցաքննության համար առանձին կանոնների սահմանումը նպատակ է հետապնդում՝ 1) ապահովել նշված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, 2) ապահովել ապացուցման ենթակա հանգամանքների մասին ճշգրիտ տեղեկությունների ստացումը, 3) պահպանել հարցաքննության միջոցով ստացված ապացույցների իրավաբանական ուժը, 4) ստեղծել անհրաժեշտ պայմաններ հարցաքննությանը մասնակցող բոլոր անձանց համար, 5) պաշտպանել անչափահասին հարցաքննությունն իրականացնող պաշտոնատար անձի անօրինական գոր-

⁶⁴ St'u Шейфер С.А. Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение, М., Изд. «Юрлитинформ», 2004 էջ 95:

ծողությունների⁶⁵:

Պետք է նշել, որ այն քննչական գործողությունները, որոնց կարող է մասնակցել անչափահասը բազմատեսակ են, սակայն օրենքով սահմանված վերը նշված առանձնահատկությունները վերաբերում են հարցաքննությանը: Այս հանգամանքն արժանի է ուշադրության, քանի որ օրենքով սահմանված երաշխիքներն ուղղակի չեն կիրառվում՝ անչափահասի հետ այլ քննչական գործողություն կատարելու դեպքում: Իհարկե, պրակտիկայում այդ առանձնահատկությունները պահպանվում են օրենքի կիրառման անալոգիայի սկզբունքով, բայց օրենսդրական նման բացը չի կարող ապահովել անչափահաս անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Օրենսդրական այս բացն իր լուծումն է ստացել Նախագծում, որում քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնների շարքում առանձին հոդված է նվիրված՝ անչափահասի մասնակցությամբ կատարվող քննչական գործողության առանձնահատկություններին (Նախագծի հոդված 219): Ի տարբերություն գործող օրենսգրքի Նախագիծը վարույթային առանձնահատկությունները սահմանել է ինչպես մեղադրյալի, այնպես էլ տուժողի և վկայի համար: Այս հանգամանքն ունի կարևոր նշանակություն, քանի որ յուրաքանչյուր արդարադատության սկզբունքները վերաբերում են ոչ միայն քրեական հետապնդման ենթարկված անչափահաս անձին, այլև բոլոր մասնավոր մասնակիցներին:

Վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչվում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները (քր. դատ. օր-ի հոդված 205, մաս 1): Սա դատավարության մասնակիցներին հրավիրելու օրենքով սահմանված ընդհանուր կարգն է: Անչափահաս անձի համար որպես բացառություն սահմանված է, որ արգելանքի տակ չգտնվող անչափահասները, որպես կանոն, կանչվում են իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով (քր. դատ. օր-ի հոդված 205, մաս 4)⁶⁶: Անչափա-

⁶⁵ Ст'у Уголовный процесс: Учебник для студентов вузов, обучающихся по специальности «Юриспруденция» /Под ред. В.П. Божьева. 3-е изд., испр. и доп. М.: «Спарк», 2002. Ёջ 580:

⁶⁶ Նախագծի 150-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անչափահասն ապացուցողական գործողությանը հրավիրվում է իր օրինական ներկայացուցչի միջոցով, իսկ հատուկ հիմնարկում գտնվելու դեպքում՝ դրա վարչակազմի միջոցով:

հասին հրավիրելու նման կարգը նպատակ ունի՝ անչափահասին պաշտպանել զգացմունքային ազդեցությունից, ծնողներին տեղեկացնել կատարվածի մասին, ուժեղացնել հսկողությունը անչափահասի նկատմամբ, ինչպես նաև այդ անձանց հնարավորություն տալ ժամանակին հրավիրել պաշտպան⁶⁷: Դատավարական գրականության մեջ կա կարծիք, որ անչափահասին օրինական ներկայացուցիչների միջոցով հրավիրելը միշտ էլ, որ արդարացված է: Նման վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ անչափահասի ծնողները բնութագրվում են վատ և կարող են բացասական ազդեցություն ունենալ իրենց անչափահաս երեխաների վարքագծի վրա և դրանով նաև խոչընդոտել գործի քննությանը⁶⁸: Իհարկե, նման դեպքում վարույթն իրականացնող մարմին պետք է հնարավորություն ունենա անչափահասին հրավիրել դպրոցի կամ այլ ուսումնական հաստատության վարչակազմի միջոցով:

Պետք է համաձայնել Ս.Վ. Մատվենի այն կարծիքի հետ, որ հարցաքննությանը անչափահասի հրավիրելու եղանակի ճիշտ ընտրության համար կարևոր են այն պայմանները և հարաբերությունները, որոնք ստեղծված են նրա ընտանիքում կամ ուսման վայրում: Տակտիկական տարբեր նկատառումներից ելնելով անչափահասը կարող է հրավիրվել ծանուցագրով, հեռախոսով կամ այլ եղանակով⁶⁹:

Ինչպես տեսնում ենք, անչափահասը վարույթն իրականացնող մարմին «որպես կանոն» հրավիրվում են օրինական ներկայացուցիչների միջոցով, սա նշանակում է, որ գործի հանգամանքներից ելնելով նա կարող է հրավիրվել նաև այլ եղանակով: Իհարկե, «որպես կանոն» հասկացությունը բնականին տարածական է և վարույթն իրականացնող մարմինն այն կարող է մեկնաբանել տարբեր կերպ: Նշված ձևակերպումը կարող է նաև հանգեցնել՝ անչափահասին վարույթն իրականացնող մարմին հրավիրելու օրենքով սահմանված դատավարական ընդհանուր կարգի խախտման:

Իհարկե, մենք ընդունում ենք ընդհանուր կարգից բացառության նխատեսումը, բայց դրա ձևակերպումը պետք է լինի այնպիսին, որ կամայական մեկնաբանության

⁶⁷ Ст'ю Шимановский В.В. Процессуальные особенности расследования преступлений несовершеннолетних, Волгоград, 1980, էջ 34:

⁶⁸ Ст'ю Боровик О.В. Особенности досудебного производства по уголовным делам в отношении несовершеннолетних, Дисс. канд. юрид. наук, М., 2006, էջ 120:

⁶⁹ Ст'ю Матвеев С.В. УПК РФ об участии законных представителей, близких родственников в расследовании уголовных дел, совершенных несовершеннолетними // Журнал российского права, 2002г. N 5, էջ 43-44:

տեղիք չտա: Կարծում ենք, որ նման իրավիճակ կարող է առաջնալ այն դեպքում, երբ անչափահասը չունի օրինական ներկայացուցիչներ կամ նրանք բնութագրվում են բացասական կամ հիմքեր կան ենթադրելու, որ կարող են խոչընդոտել գործի քննությանը: Կամայական մեկնաբանություններից խուսափելու համար, ճիշտ կլիներ, այդ վիճակները ամրագրել օրենքում:

Քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է, որ հարցաքննությունն իրականացվում է նախաքննության կատարման վայրում, չնայած որպես բացառություն նախատեսված է նաև նրա գտնվելու վայրում՝ այն իրականացնելու հնարավորություն: Օրենսդրական նման կարագավորումը վարույթն իրականացնող մարմինն, նպատակահարմարությունից ելնելով, ճիշտ ընտրություն կատարել:

Այս հարցը բազմաթիվ անգամ քննարկվել է դատավարական գրականության մեջ, մենք պաշտպանում ենք այն մոտեցումը, որ առավել նպատակահարմար կլինի կասկածյալի կամ մեղադրյալին հարցաքննել քննիչի կամ հետաքննիչի աշխատասենյակում, որովհետև պաշտոնականությունը և խստությունը ընդգծում են անչափահասի համար նշված քննչական գործողության նշանակությունը⁷⁰:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի՝ կասկածյալի հարցաքննությունը կատարվում է նրան ձերբակալելուց կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը նրան հայտարարելուց անմիջապես հետո: Հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչը կասկածյալին բացատրում է կասկածանքի էությունը, ինչպես նաև նրա իրավունքները՝ ներառյալ ցուցմունքներ տալուց, հարցաքննությունը պաշտպանի մասնակցությամբ անցկացնելու կամ պաշտպանի մասնակցությունից հրաժարվելու (բացառությամբ պաշտպանի մասնակցության պարտադիր լինելու դեպքերի) իրավունքները: Հարցաքննությունը սկսվում է նրանով, որ առաջարկվում է կասկածյալին ցուցմունքներ տալ կասկածանքի և բոլոր այն հանգամանքների առիթով, որոնք իր կարծիքով, կարող են նշանակություն ունենալ գործի համար: Ցուցմունք տալը վերջինիս իրավունքն է և ոչ թե՛ պարտականությունը:

Քննիչը պարտավոր է մեղադրյալին հարցաքննել նրան մեղադրանք առաջադրե-

⁷⁰ St' u Авалиана К.А. Особенности досудебного производства о уголовным делам в отношении хесовершеннолетних, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Кемерово, 2009г. էջ 150:

լուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, իսկ մեղադրյալի խուսափելու կամ նրան հետախուզում հայտարարելու դեպքում՝ նրան բերման ենթարկելուց 48 ժամվա ընթացքում: Մեղադրյալը հարցաքննվում է առաջադրված մեղադրանքի էության, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 212/: Անչափահաս մեղադրյալն իրավունք ունի չհամաձայնել մեղադրանքի հետ, տալ ցուցմունքներ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց: Կարծում ենք, որ անչափահաս մեղադրյալի կրկնակի հարցաքննությունը նույն մեղադրանքով, երբ նա առաջին հարցաքննության ընթացքում հրաժարվել է ցուցմունքներ տալուց՝ կարող է իրականացվել միայն մեղադրյալի խնդրանքով⁷¹:

Քրեական դատավարության գործող օրենսգիրքը կասկածյալի և մեղադրյալի համար պատասխանատվություն չի սահմանում ցուցմունքներ չտալու կամ կեղծ ցուցմունք տալու համար: Այս կապակցությամբ ուշագրավ է Նախագծում տեղ գտած այն նորույթը, որ մեղադրյալը նախազգուշացվում է սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին /Նախագիծ հոդված 228, մաս 3/: Իհարկե նախազուշացումը վերաբերում է նաև 16 տարին լրացած անչափահաս մեղադրյալին: Այս նորույթը միանշանակ չի ընդունվում բոլոր դատավարագետների և պրակտիկ աշխատողների կողմից, գտնելով, որ այն էապես սահմանափակում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Արդարադատության շահերից ելնելով, կարծում ենք, որ Նախագծում տեղ գտած նորամուծությունն արդարացված է, քանի որ մեղադրյալն ունի ցուցմունք չտալու իրավունք, բայց եթե որոշել է, ապա ճիշտ չէ՝ խաբել արդարադատությանը: Նշված նորամուծությունը նպատակ ունի նաև մեծացնել մեղադրյալի ցուցմունքի նկատմամբ՝ վարույթն իրականացնող մարմնի արժանահավատությունը:

Հարցաքննությունը սկսելուց առաջ տասնվեց տարին չլրացած մեղադրյալին վարույթն իրականացնող մարմինը բացատրում է նրա լռելու իրավունքը, պարզաբանում է, որ այդ իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա, ինչպես նաև հայտնում է, որ նրա ցուցմունքը կարող է օգտագործվել որպես ապացույց: Եթե տասնվեց

⁷¹ ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմված տեղեկանքի համաձայն՝ նախաքննության ընթացքում անչափահաս մեղադրյալները հարցաքննվել են մեկից ավելի անգամ՝ 123 քրեական գործով, 35 գործով՝ 2-3 անգամ, 3 գործով՝ 4-5 անգամ:

տարին չլրացած մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, ապա վարույթն իրականացնող մարմինը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության մասին, սակայն չի նախազգուշացնում սուտ ցուցմունք տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին /Նախագծի 422-րդ հոդված, մաս 2/: Իհարկե, ճիշտ կլիներ, քրեական պատասխանատվության չենթարկելու բացառություն նախատեսվեր 16-ից մինչև 18 տարեկան այն անչափահասների համար, որոնք իրենց մտավոր և ֆիզիկական զարգացվածության մակարդակով խնդիրներ ունեն:

Հարցաքննությունից առաջ քննիչը հարցաքննվողին պետք է պարզաբանի ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածում սահմանված այն դրույթը, որ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»: Այս իրավունքի չպարզաբանումը հիմք է անչափահասի հարցաքննության արդյունքում ստացված ցուցմունքները՝ անթույլատրելի ապացույց ճանաչելու:

Քրեական դատավարության գործող օրենսդրությունը անչափահասի հարցաքննության տևողության վերաբերյալ սահմանում է առանձնահատկություն, մասնավորապես՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: Օրվա մեջ անչափահասի հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել վեց ժամը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 205.1, մաս 2): Նշված ընդհանուր կանոնի հետ միաժամանակ, կարծում ենք, որ անչափահասի շահերից ելնելով անհրաժեշտ է՝ նաև սահմանել այն պահանջը, որ անչափահասի հարցաքննությունը պետք է ընդհատվի յուրաքանչյուր պահի, եթե շարունակությունը կարող է վնասել նրա առողջությանը: Հարցաքննության ընդհատման դեպքում՝ հարցաքննության արձանագրության մեջ պետք է նշել դրա պատճառները: Օրենսդրական այսպիսի կարգավորումը՝ որպես նորամուծություն պետք է արդարացված համարել, որովհետ այն կբացառի երկարաժամկետ հարցաքննություն կտարելու հնարավորությունը, ինչը հոգեբանական լուրջ ներգործություն է հարցաքննվող անձի նկատմամբ: Այն նպաստում է նաև առավել լրիվ և արժանահավատ ցուցմունքներ ձեռք բերելուն, արդյունա-

վետ պայմանների ստեղծմանը, որովհետև հաշվի են առնվում անչափահասների տարիքային այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ բարձր ճնշվածությունը, վատ կենտրոնացվածությունը, նյարդային բարձր գրգռվածությունը և այլն:

Չնայած քրեադատավարական գործող օրենսդրությամբ չի կարգավորված, բայց կարծում ենք, որ հարցաքնության համար օրենքով սահմանված ժամկետը պետք է կիրառելի լինի նաև անչափահասի հետ կատարվող այլ քննչական գործողությունների դեպքում: Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հետ բացի հարցաքնությունից կարող են իրականացվել նաև առերեսում, ճանաչման ներկայացնել, քննչական փորձարարություն: Նշված քննչական գործողությունների կատարման դեպքում ևս անչափահաս անձը չի կարող երկար պահվել վարույթն իրականացնող մարմնում: Քննչական պրակտիկայում խնդիրներ չառաջանալու համար, կարծում ենք, որ քննչական գործողությունների կատարման համար օրենքով սահմանված ընդհանուր կանոններում պետք է նշել այդ մասին:

Անչափահաս անձի հարցաքնության անբաժան մասն է կազմում արձանագրության կազմումը, որում ամրագրվում են նշված քննչական գործողության կատարման ընթացքը, բովանդակությունը և արդյունքները:

Անչափահասի ցուցմունքներն ամրագրելիս պետք է ի նկատի ունենալ նրա խոսքի առանձնահատկությունները, չափահաս անձանց ներկայությունը, ինչպես նաև նրանց հնարավոր ազդեցությունը անչափահասի վրա: Արձանագրության կազմման ընթացքում կարևոր է այդ ցուցմունքների մանրամասնեցումը, ինչպես նաև առանձին բառերի պարզաբանումը: Անչափահասի համար պետք է հասկանալի լինեն այն բառերը, որոնք նա ցուցմունքի ընթացքում օգտագործել է: Վարույթն իրականացնող մարմինը այդպիսի պարզաբանումից հետո՝ դրանք մտցնում է քննչական գործողության արձանագրության մեջ: Իհարկե, հարցաքնության ընթացքում անչափահասը կարող է նաև թույլ տալ կրկնություններ, հայտնել տեղեկություններ, որոնք գործին չեն վերաբերում, հետևաբար դրանք հարցաքննողի կողմից պետք է հեռացվեն:

Անչափահաս անձն իրավունք ունի իր ցուցմունքները գրելու իր ձեռքով, ինչի մասին քննիչն արձանագրությունում նշում է կատարում: Անչափահասը հազվադեպ է օգտագործում իր այդ իրավունքը ինքնուրույն շարադրելու իր ցումցումքները: Քննիչները

տակտիկական նկատառումներից ելնելով հաճախ են դիմում այդ քայլին, մոռանալով, որ դա հնարավոր է միայն անչափահասի նախաձեռնությամբ և հարցաքննությունից անմիջապես հետո: Յուզմունքին ծանոթանալուց հետո քննիչը նրան կարող է տալ լրացուցիչ հարցեր: Քննիչի կամ հարցաքննվողի կողմից՝ հարցերը և տրվող պատասխանները նույնպես ներառվում են արձանագրությունում:

Եթե հարցաքննության ընթացքում անչափահաս անձին ներկայացվում են իրեղեն ապացույցներ կամ փաստաթղթեր, կամ հրապարակվում են քննչական այլ գործողությունների արձանագրություններ կամ վերարտադրվում են ձայնագրման և (կամ) տեսագրման նյութեր կամ քննչական գործողությունների նկարահանումներ, ապա այդ մասին նշում է կատարվում հարցաքննության արձանագրությունում: Արձանագրությունում պետք է արտացոլվեն դրանց կապակցությամբ հարցաքննվող անձի ցուցմունքները:

Հնարավոր են դեպքեր, երբ անչափահաս անձինք հրաժարվում են ստորագրել հարցաքննության արձանագրությունը, դրա համար կարող են պատճառ լինել՝ նրանց ֆիզիկական թերությունները, անգրագիտությունը կամ ուղղակի հրաժարումը: Նման իրավիճակներում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ղեկավարվել ՀՀ քր. դատ. օր-ի 29-րդ հոդվածի դրույթներով, մասնավորապես՝ «Կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի կամ դատավարական գործողությանը մասնակցած այլ անձի՝ արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում քննիչն արձանագրությունում այդ մասին կատարում է համապատասխան գրառում, որը հավաստվում է քննիչի, պաշտպանի, ներկայացուցչի, օրինական ներկայացուցչի, իրավահաջորդի կամ ընթերակայի ստորագրություններով, եթե նրանք մասնակցում են դատավարական գործողությանը:

Արձանագրությունն ստորագրելուց հրաժարվող անձին պետք է հնարավորություն տրվի բացատրելու հրաժարման պատճառները կամ պատճառները բացատրելուց հրաժարվելը, ինչը նույնպես արձանագրվում է:

Եթե կասկածյալը, մեղադրյալը, տուժողը կամ վկան ֆիզիկական թերությունների կամ առողջական վիճակի կամ անգրագիտության հետևանքով զրկված են արձանագրությունն անձամբ ստորագրելու հնարավորությունից, ապա արձանագրությունը տվյալ անձին ծանոթության է ներկայացվում պաշտպանի, օրինական ներկայացուցչի, ներ-

կայացուցչի կամ ընթերակայի ներկայությամբ, որոնք իրենց ստորագրությամբ հաստատում են արձանագրության բովանդակության համապատասխանությունն իրականությանը և կասկածյալի, մեղադրյալի, տուժողի կամ վկայի կողմից այն ստորագրելու անհնարինությունը»:

Հնարավոր է իրավիճակ, երբ անչափահասը ոչ միայն չի կարող ստորագրել, այլև կարդալ հարցաքննության արձանագրությունը, տվյալ դեպքում, կարծում ենք, ճիշտ կլիներ, որ քննիչը հրավիրեր այլ անձի, որը բարձրաձայն կկարդար նրա ցուցմունքերը և իր ստորագրությամբ կհաստատեր դրանց ճշտությունը: Հարկ է նշել, որ այս խնդիրն իր արդյունավետ կարգավորումն է ստացել Նախագծում, մի դեպքում՝ դրա իրականացումն ապահովվում է փաստաբանի միջոցով, եթե նա մասնակցում է քննչական գործողության կատարմանը, իսկ եթե փաստաբան չկա, ապա հրավիրվում է ընթերակա: Այսպես Նախագծի 192-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված գործողությունների կատարումը հաստատվում է քննիչի կողմից կազմված արձանագրությամբ, որը ստորագրում են քննիչը, մեղադրյալը և ներկա գտնվող այլ անձինք: Մեղադրյալի կամ ներկա գտնվող այլ անձանց կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում քննիչը հատուկ հրավիրված ընթերակայի ներկայությամբ կամ տեսաձայնագրման ներքո պարզում և արձանագրության մեջ շարադրում է նման հրաժարման պատճառները, իսկ նրանց կողմից այդպիսիք չհայտնելու դեպքում՝ այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ և դրա պատճենն անհապաղ ուղարկում հսկող դատախազին»:

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննության համար կարևոր է մանկավարժի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը, քանի որ նրանք ապահովում են անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը⁷²: Քրեական դատավարության գործող օրենսդրության թերություններից մեկն այն է, որ մանկավարժի մասնակցությունը պարտադիր է միայն անչափահաս վկայի և տուժողի հարցաքննության դեպքում: Մինչդեռ, կարծում ենք, որ մանկավարժի մասնակցությունը պետք է պարտադիր լինի նաև 16 տարին չլրացած կասկածյալի կամ մեղադրյալի համար, որովհետև նշված անձինք իրենց տարբային առանձնահատկությամբ պայմա-

⁷² Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագծով պարտադիր է համարվում ոչ թե մանկավարժի, այլ հոգեբանի մասնակցությունը:

նավորված՝ ի վիճակի չեն պաշտպանել իրենց իրավունքներն ու օրինական շահերը, զերծ մնալ հոգեկան և բացասական ներգործությունից: Անչափահասի նկատմամբ դատավարական գործողություններ իրականացնելիս մասնավարժի մասնակցությունը նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է:

Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի հարցաքննությանը պարտադիր է պաշտպանի մասնակցությունը: Պաշտպանը մասնակցելով անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը օժտված է հետևյալ իրավունքներով՝ 1) մասնակցել անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությանը, 2) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ, 3) հարցաքննությունն ավարտելուց հետո ծանոթանալ հարցաքննության արձանագրությանը, 4) կատարել հայտարարություններ աճանագրության լրիվության և ճշտության վերաբերյալ, 5) ստորագրել արձանագրությունը⁷³: Վարույթն իրականացնող մարմինը չպետք է խոչընդոտի հարցաքննությանը պաշտպանի մասնակցելուն: Եթե առկա է կասկածյալի մասնակցությամբ դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, ապա հետաքննության մարմինը կամ քննիչը տեսակցության տևողությունը կարող է սահմանափակել՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով կասկածյալին և նրա պաշտպանին: Պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող երկու ժամից պակաս լինել: Իհարկե, նման սահմանափակում չի նախատեսված մեղադրյալի համար:

Քանի որ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է մեղադրյալի հարցաքննությանը, դա նշանակում է, որ առանց նրա մասնակցության մեղադրյալի հարցաքննության դեպքում՝ այդ ցուցմունքները անթույլատրելի են և չեն կարող դրվել մեղադրանքի կամ ապացուցման առարկան կազմող ցանկացած հանգամանքի ապացուցման հիմքում:

⁷³ Նախագծով պաշտպանի իրավունքները հարցաքննությանը մասնակցելիս առավել կոնկրետացված են: Այսպես՝ ըստ Նախագծի 227-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե մեղադրյալի հարցաքննությանը մասնակցում է նրա պաշտպանը, ապա նա իրավունք ունի քննիչի ներկայությամբ կարճատև խորհրդատվություն տալու մեղադրյալին նրա կարգավիճակին վերաբերող հարցերով: Պաշտպանն իրավունք ունի հարցեր տալ մեղադրյալին, սակայն իրավունք չունի մեկնաբանելու նրա պատասխանները: Քննիչն իրավասու է հանել պաշտպանի հարցերը, սակայն ամեն դեպքում դրանք ներառվում են հարցաքննության արձանագրության մեջ: Սույն օրենսգրքով նախատեսված մեղադրյալի իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքերում պաշտպանն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում:

Անչափահաս մեղադրյալի, կասկածյալի հարցաքննությանը բացի պաշտպանից կարող է մասնակցել նաև նրա օրինական ներկայացուցիչը: Հարցաքննությանը նշված անձանց մասնակցությունը կարևոր երաշխիք է ինչպես անչափահասի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության, այնպես էլ նրա և վարույթն իրականացնող մարմնի միջև հոգեբանական կապ հաստատելու և նրանից լրիվ և ճիշտ ցուցմունքներ ստանալու համար:

Քրեական գործով վարույթի ընթացքում անչափահաս անձնաց հարցաքննության արդյունավետությունը մեծամասամբ կախված է ոչ միայն այդ քննչական գործողության օրենսդրական պատշաճ կարգավորումից, այլև տակտիկական հնարքների ճիշտ կիրառումից, որոնք ապահովում են օբյեկտիվ, լրիվ և արժանահավատ ցուցմունքներ ստանալը: Իհարկե, կիրառվող տակտիկական եղանակներն ու մեթոդները պետք է համաչափ լինեն անչափահաս անձանց հոգեկան և ֆիզիկական վիճակին: Ի տարբերություն դատավարական կանոնների՝ տակտիկական հնարքները նախատեսված չեն քրեադատավարական օրենսդրությամբ, բայց դրանք չեն կարող հակասել հարցաքննության համար օրենքով սահմանված դատավարական կարգին:

Անչափահաս անձանց հարցաքննության տակտիկական եղանակներն ունեն իրենց առանձնահատկությունները, մասնավորապես դրանք պետք է հիմնված լինեն մանկավարժության և բարոյականության սկզբունքների վրա, այսինքն հարցաքննությունը նրա վրա պետք է ունենա ոչ թե բացասական, այլ դաստիարակչական նշանակություն:

Հարցաքննության ընթացքում տակտիկական եղանակների ճիշտ կիրառումը մեծապես կախված է քննիչի կողմից քրեական գործի նյութերի բավարար իմացությունից, ինչը հարցաքննվողի մոտ պետք է ստեղծի այն համոզմունքը, որ քննիչին արդեն ամեն ինչ հայտնի է⁷⁴: Քրեական գործի հանգամանքների պատշաճ իմացությունը անհրաժեշտ պայման է հարցաքննության արդյունավետ իրականացման համար:

Քննիչի կողմից հանցավոր դեպքի հանգամանքների մասին իրազեկված լինելու մասին ցույց տալը՝ նպաստում է այն բանին, որ անչափահասը չկարողանա՝ քննություն-

⁷⁴ Ст'ю Сафин Н.Ш. Допрос несовершеннолетнего подозреваемого в советском уголовном судопроизводстве, /процессуальные и криминалистические аспекты проблемы/, казань, Изд. Казанского Университета, 1990, էջ 109:

նը տանել սխալ ուղությամբ: Այն հանգամանքը, որ հարցաքննողը գիտի ոչ միայն անչափահասի կյանքի բացասական կողմերը, այլև դրական, անկասկած վկայում է քննիչի անկողմնակալության մասին և կարող է ստեղծել վստահության մթնոլորտ, իսկ դա իր հերթին նպաստում է մեղադրյալից ճիշտ ցուցմունք ստանալուն⁷⁵: Այս հանգամանքը նշանակում է, որ քննիչն անչափահասի մասին պետք է հավաքի համապատասխան տեղեկություններ: Մինչև անչափահաս մեղադրյալին հարցաքննելը, անհրաժեշտ կլինի, հարցաքննել նրա ծնողներին, հարազատներին, մանկավարժներին, ընկերներին, որոնք կարող են նրա մասին հաղորդել տեղեկություններ:

Անչափահասից ճշմարիտ ցուցմունք ստանալու համար անհրաժեշտ է հոգեբանական կոնտակտ ստեղծել և դրանով անչափահասի մոտ առաջացնել վստահություն քննիչի նկատմամբ: Հոգեբանական կոնտակտի բացակայության պայմաններում սովորաբար անչափահասը հրաժարվում է ցուցմունքներ տալուց կամ տալիս է կեղծ ցուցմունք: Այստեղ շատ կարևոր է քննիչի բարյացկամ վերաբերմունքը, հանգիստ խոսքը, նրա անկեղծությունը և այլն:

Հարցաքննության արդյունավետությունը մեծապես կախված է դրա նախապատարաստությունից, որը ենթադրում է այնպիսի գործողությունների կատարում, որոնք պետք է ապահովեն դրա իրականացման պատշաճությունը: Այս հանգամանքն ավելի է կարևորվում անչափահաս անձնաց հարցաքննության դեպքում, քանի որ նրանք առանձնանում են իրենց զգայունությամբ և հոգեբանական վիճակով:

Անչափահասի մոտ պետք է ստեղծել այն տպավորությունը, որ քննիչը բավարար մանրամասն տեղեկություններ ունի ինչպես գործի հանգամանքների, այնպես էլ անչափահասի անձի վերաբերյալ: Այս հանգամանքը նշանակում է, որ քննիչը մինչև հարցաքննությունը պետք է մանրամասն ուսումնասիրի գործի հանգամանքները, ինչպես նաև անչափահասի անձին վերաբերող տվյալները:

Անհրաժեշտ է ընդգծել, որ քրեադատավարական գործող օրենսդրությամբ առանձնահատկություններ են սահմանված միայն հարցաքննության համար, մինչդեռ նա կարող է մասնակցել նաև այլ քննչական գործողությունների կատարմանը: Իհարկե, այն հանգամանքը, որ առանձնահատկություններ սահմանված են միայն անչափահա-

⁷⁵ Ст'ю Гуковская Н.И., Долгова А.И., Минковский А.И. Расследование и судебное разбирательство дел о преступлениях несовершеннолетних, М., Юрид. Лит., 1974, էջ 86-87:

սի հարցաքննության համար՝ խիստ թերի է, որովհետև այն բավարար չափով չի ապահովում անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն այլ քննչական գործողություններին մասնակցելիս:

Անչափահասների հետ իրականացվող տարածված գործողություններից է առերեսումը, որն իրականացվում հետևյալ դեպքերում, եթե տվյալ անձինք նախկինում հարցաքննվել են և նրանց ցուցմունքներում առկա են էական հակասություններ:

Պրակտիկայում անչափահասի հարցաքննության համար օրենքով սահմանված առանձնահատկություններն անալոգիայով կիրառվում են նաև առերեսման դեպքում: Նման մոտեցումն իրավաչափ է, որովհետև առերեսումը, լինելով ինքնուրույն քննչական գործողություն, միաժամանակ կրում է հարցաքննության բոլոր հատկանիշները: Պատահական չէ, որ առերեսման որպես ինքնուրույն քննչական գործողություն լինելու վերաբերյալ՝ դատավարական գրականության մեջ չկա միասնական մոտեցում⁷⁶:

Իհարկե, սկզբում պետք է որոշել անչափահասի հետ այդ քննչական գործողությունը կատարելու նպատակահարմարության հարցը, մասնավորապես այն դեպքերում, երբ անչափահասի նկատմամբ չափահասի հոգեբանական ազդեցությունը կարող է մեծ լինել, որի արդյունքում անչափահասը հնարավոր է, որ հրաժարվի նախկինում տված իր ցուցմունքներից: Չնայած առկա մտավախությանը, քրեադատավարական գործող օրենսդրությունը պարտադիր է համարում առերեսման իրականացումը, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և դատավարության այլ մասնակիցների ցուցմունքների միջև: Սա նշանակում է, որ օրենքի իմպերատիվ կարգավորումը կիրառելի է նաև անչափահաս անձի հարցաքննության դեպքում, որը, կարծում ենք, չի բխում քննության շահերից:

Անկասկած, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ քննչական գործողությունը անչափահասի մոտ կարող է առաջացնել հոգեկան ճնշվածություն և լարվածություն, հետևաբար յուրաքանչյուր դեպքում մինչև առերեսում իրականացնելը, պետք է, ուշադիր ուսումնասիրել ցուցմունքներում առկա հակասությունների բնույթը, դրանց առաջացման պատճառները, քննչական գործողության մասնակիցների անձը, նրանց փոխհարաբերությունների բնույթը, միմյանց նկատմամբ ունեցած կախվածությունը, գործում

⁷⁶ Ст'я Соловьев А.Б. Очная ставка на предварительном следствии. М., 1970, էջ 5-6, Карнеева Л.М., Ордынский С.С., Розенблит С.Я. Тактика допроса на предварительном следствии. М., 1958, էջ 180:

նրանց շահագրգռվածության աստիճանը, ձևակերպել նրանց տրվող հարցերը և որոշել դրանց պատասխանի հաջորդականությունը, կանխատեսել նրանց հնարարավոր վարքագիծը⁷⁷:

Համամիտ ենք գրականության մեջ հնչած այն կարծիքին, որ անչափահաս առերեսումը միակ և հաջող եղանակը չէ՝ անչափահաս մեղադրյալի և այլ անձանց ցուցմունքների միջև եղած հակասությունը վերացնելու համար: Եթե հնարավոր է այդ հակասությունները վերացնել գործով առկա ապացույցների վերլուծության կամ այլ քննչական գործողությունների կատարման միջոցով, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է կատարի այդ գործողությունները⁷⁸:

Կարծում ենք, ճիշտ կլիներ, գործի շահերից ելնելով բացառել անչափահաս մեղադրյալի հետ առերեսում կատարելու օրենքով սահմանված պարտադիր պահանջը: Անհրաժեշտ է նշել, որ այս հարցն իր դրական լուծումն է ստացել Նախագծում, որում ընդհանրապես վերացվել է մեղադրյալի հետ պարտադիր առերեսում կատարելու պահանջը: Այսինքն դատավարության մասնակիցների միջև առերեսումը կարող է իրականացվել միայն վարույթն իրականացնող մարմնի ցանկությամբ:

Առերեսումն իրականացվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից, իսկ քննչական գործողության կատարմանը մասնակից մյուս մասնակիցները կարող են հարցեր տալ միայն քննիչի թույլտվությամբ: Այսինքն հարցաքննվող անչափահասը պաշտպանի, օրինական ներկայացուցչի կամ մանկավարժի հարցերին կարող է պատասխանել միայն այն դեպքում, երբ այդ հարցերը ներկայացվում են քննիչի կողմից և առաջարկվում է նրան պատասխանել դրանց: Քննիչն իրավունք ունի հանել տրված հարցերը, սակայն ամեն դեպքում դրանք պետք է ներառվեն արձանագրությունում:

⁷⁷ Տե՛ս Աвалиана К.А. Особенности досудебного производства о уголовным делам в отношении несовершеннолетних. Дисс. канд. юрид. наук, Кемерово, 2009г., էջ 153:

⁷⁸ Տե՛ս Каневский Л.Л. Тактика следственных действия по делам о преступлениях совершенных несовершеннолетними. Уфа: Восточный университет, 2001, էջ 78:

**ԳԼՈՒԽ 3. ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒՅՈՒՆՆԵՐԸ**

***3.1. Անչափահասների վերաբերյալ գործերով պաշտպանի իրավական վիճակի
կարգավորման առանձնահատկությունները***

Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ բոլոր հանցագործությունների քննության համար սահմանված է քննության միասնական կարգ, այսինքն դատավարական ընդհանուր ձև և երաշխիքներ, որոնք ապահովում են ինչպես հանցագործությունների արդյունավետ քննությունը, այնպես էլ անձի իրավունքների պաշտպանությունը: Քրեական դատավարության խնդիրներից ելնելով օրենքում նախատեսվում են նաև բացառություններ, որոնք պայմանավորված են ենթադրյալ հանցանք կատարած անձի հատկանիշներով: Վարույթի առանձին կարգի նախատեսումը նպատակ է հետապնդում ոչ թե սահմանափակել օրենքով նախատեսված երաշխիքները, այլ ընդհակառակը՝ պահպանելով այդ երաշխիքները՝ օրենքում նախատեսել պաշտպանության լրացուցիչ միջոցներ: Դատավարական հիմնական երաշխիքները, ինչպես անմեղության կանխավարկածը, առաջադրված մեղադրանքի մասին տեղյակ պահելու իրավունքը, ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, ծնողների կամ խնամակալի մասնակցության իրավունքը, վկաների հետ առերեսման և նրանց խաչաձև հարցաքննության իրավունքը, վերադաս դատական ատյաններին բողոքարկելու իրավունքը պետք է երաշխավորված լինեն դատավարության բոլոր փուլերում: Օրենքով նախատեսված դեպքերում, այդ երաշխիքներից բացի, նախատեսվում են նաև այլ միջոցներ:

Անչափահասների տարիքային առանձնահատկություններից ելնելով պաշտպանության այդպիսի միջոցներից են պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը: Այսինքն քրեական դատավարությունում անչափահաս անձի համար ապահովվում է երկակի ներկայացուցչություն՝ մի կողմից պաշտպանի, իսկ մյուս կողմից օրինական ներկայացուցչի: Նշված սուբյեկտները ոչ թե խոչընդոտում են միմյանց, այլ՝ լրացնում, այսինքն պաշտպանը ցույց է տալիս իրավաբանական, իսկ օրինական ներկայացուցիչը՝ հոգեբանական և բարոյական օգնություն: Պետք է համաձայնել Ե.Վ.

Գորբաչովայի այն մոտեցման հետ, որ «Ընդհանուր առմամբ անչափահասների գործով հանցագործությունների քննության ժամանակակից տարբերակը արտացոլում է դասական քննության համընդհանուր առանձնահատկությունը՝ ապահովելու անչափահաս մեղադրյալի պարտադիր պաշտպանությունը և կրկնակի ներկայացվածությունը (պաշտպան և օրինական ներկայացուցիչ)»⁷⁹: Նման մասնակցությունը ապահովում է անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պաշտոնատար անձնաց անօրինական գործողություններից:

Ս. Վ. Տետյուևը իրավացիորեն նշում է. «Պաշտպանի գործունեությունը կարևոր տեղ է գրավում անչափահասների պաշտպանության իրավունքի դատավարական երաշխիքների համակարգում, քանզի նրանց անձնային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաճախ դատավարության ընթացքում առաջ են բերում պասիվ դիրքորոշում, անտարբեր վերաբերմունք սեփական շահերի պաշտպանության նկատմամբ, դրան հաճախ ավելանում են կեղծ ռոմանտիկան, չափահաս և անկախ երևալու ձգտումը, ինչը երբեմն ապակողմնորոշում է քննիչին և կարող է հանգեցնել դեռահասների օրինական շահերը ոտնահարող ոչ ճիշտ որոշումների»⁸⁰:

Անչափահասների գործերով վարույթին պաշտպանի և օրինական ներկայացուցիչ մասնակցությունը կարևորվել է միջազգային իրավական փաստաթղթերում: Այսպես, Պեկինյան կանոնների 15.1 կետի համաձայն՝ «Դատավարության ամբողջ ընթացքում անչափահասն իրավունք ունի ներկայացվելու իր պաշտպանի կողմից կամ դիմելու իրավական անվճար օգնության, եթե այդպիսի օգնության տրամադրումը նախատեսված է տվյալ երկրի օրենսդրությամբ»: Նույն փաստաթղթի 15.2 կետի համաձայն՝ «Ծնողները կամ խնամակալը իրավունք ունեն մասնակցելու դատաքննությանը, և անչափահասների շահերից ելնելով իշխանության իրավասու մարմինը կարող է պահանջել նրանց մասնակցությունը: Սակայն իշխանության իրավասու մարմինը կարող է մերժել նրանց մասնակցությունը, եթե կան հիմքեր ենթադրելու, որ դա անհրաժեշտ է անչափահասի շահերի համար»: Անկասկած նշված անձանց մասնակցությունը պետք է

⁷⁹ **Горбачёва Е.В.** Проблемы регулирования судопроизводства по делам несовершеннолетних в УПК РФ. //Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания». М., 2004, էջ 307:

⁸⁰ **Тетюев С.В.** Защитник – обязательный участник производства по уголовным делам в отношении несовершеннолетних //Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М., Издательская группа «Юрист», 2009, էջ1074:

դիտել, որպես ընդհանուր հոգեբանական, զգացմունքային աջակցություն անչափահասին, ինչպես գործառույթ, որը պետք է իրականացվի քրեական վարույթի ամբողջ ընթացքում:

Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու իրավունքը հռչակված է ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին»: Պաշտպանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ենթադրում է իրավաբանական օգնության լիարժեքություն:

Այս իրավունքը նախատեսված և երաշխավորված է նաև քրեական դատավարության օրենսդրությամբ, որի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ 5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.... »:

Անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կերպով պաշտպան տրամադրելը երաշխավորում է նրա իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Դա երաշխավորում է նաև քննիչի և պաշտոնատար այլ անձնաց կողմից անչափահասին բարձր որակավորմամբ պաշտպանի ծառայություններից հրաժարվելու հարկադրելուց: Չէ՞ որ լիովին ակնհայտ է, որ հոգեպես դեռևս բավականաչափ չզարգացած անչափահասը թույլ է նաև կամքի ուժով, ինչը հնարավորություն է ստեղծում նրա վրա ազդեցություն գործելու, որից երբեմն կարող են օգտվել իրավապահական մարմինների անբարեխիղճ անձինք՝ ի վնաս նրա իրավունքների և օրինական շահերի⁸¹:

Անչափահասին իրավաբանական օգնություն ցույց տալու պահը կարևոր է, որովհետև այդ պահից սկսած անչափահաս կասկածյալը, մեղադրյալը կարող են օգտվել դրանից: Այսպես, համաձայն՝ ՀՀ քր. դատ. օր-ի 69-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է ... 2) համապատասխանաբար՝ կասկածյալին ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին

⁸¹ Տե՛ս **Ս.Ա. Դիրանդյան** Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2011, էջ 358:

որոշումը հայտարարելու կամ մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված դեպքերում»:

Նախագծի 46-րդ հոդվածի համաձայն՝ «Վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է անձի ձերբակալման կամ նրան մեղադրանք ներկայացնելու պահից, քանի դեռ մեղադրյալը օրենքով սահմանված դեպքերում և կարգով չի հրաժարվել պաշտպանից»: Նշված իրավական կարգավորումը կրում է ընդհանուր բնույթ և հիմք է տալիս նշելու, որ այն ապահովում է վարույթին պաշտպանի մասնակցության բոլոր հնարավոր դեպքերը⁸²:

Պաշտպանի մասնակցությունը անչափահասի վերաբերյալ գործերով պետք է համարել պարտադիր և, եթե մինչդատական վարույթի կամ դատական քննության ընթացքում չի ապահովվել պաշտպանի մասնակցությունը, ապա այն պետք է համարել քրեադատավարական օրենքի էական խախտում: Անչափահաս մեղադրյալի իրավունքների պաշտպանության համար կարևոր է Նախագծի 419-րդ հոդվածում ամրագրված հետևյալ դրույթը, որ «Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է այդ անձի ձերբակալման կամ նրան մեղադրանք ներկայացնելու պահից»: Նշված կարգավորումը բնականաբար բացառում է առանց պաշտպանի՝ անչափահասների գործերով վարույթի իրականացման հնարավորությունը: Այն համապատասխանում է ժողովրդավարական գաղափարներին և յուզվե՝ նալ արդարադատության չափորոշիչներին:

Քրեադատավարական օրենսդրությամբ անչափահասների վերաբերյալ գործերով պաշտպանի պարտադիր մասնակցության նախատեսումը՝ պայմանավորված է նրա տարիքային առանձնահատկությամբ, հոգեկան վիճակով, կյանքի փորձի և իրավաբանական գիտելիքների պակասով: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ մրցակցային

⁸² Անչափահաս կասկածյալներին և մեղադրյալներին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալուց բացի կարևոր է նաև փաստաբան-պաշտպանի անչափահասների գործով մասնագիտացված լինելու հանգամանքը: Այս կապակցությամբ ուշագրավ է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի /Անկախ Պետությունների Համագործակցության տարածաշրջանային գրասենյակի խնդրանքով կազմված զեկույցում տեղ գտած այն գնահատականը, որ մեղադրյալ երեխաների վերաբերյալ (կամ անչափահասների մասնակցությամբ) գործերով մասնագիտացած հանրային պաշտպաններ չկան: Հանրային պաշտպանի գրասենյակի անձնակազմը երաբխայի զարգացման, երեխայի հոգեբանության, երեխաներին հարցաքննելու և երեխայի իրավունքների վերաբերյալ վերապատրաստումներ չի անցնում: Տուժող կամ վկա երեխաների շահերի ներկայացումը Հանրային պաշտպանի լիազորությունների շրջանակից դուրս է: (Տե՛ս Հայաստանում անչափահասների գործերով արդարադատության ոլորտի բարեփոխման ձեռքբերումների գնահատում, Երևան, 2010, էջ 42):

դատավարության պայմաններում անչափահասի համար պաշտպանի պարտադիր մասնակցության նախատեսումն անհրաժեշտություն է:

Քրեադատավարական գործող օրենսդրությամբ մեղադրյալը ոչ միայն իրավունք ունի ունենալ պաշտպան, այլև կարող է հրաժարվել պաշտպանից և այն իրականացնել ինքնուրույն: Քրեադատավարական գործող օրենսդրությունից բխում է, որ պաշտպանից հրաժարվել կարող է ոչ միայն չափահաս, այլև անչափահաս անձը: Պաշտպանից հրաժարվելու ընդհանուր դատավարական կարգը հետևյալն է՝ «Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները»: Պետք է նշել, որ այս հոդվածում տեղ գտած կարգավորումն ուղղակի հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածին, որում սահմանված են վարույթի պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը: Կարծում ենք, որ պարտադիրության տակ պետք է հասկանալ այն, որ բոլոր դեպքերում վարույթն իրականացնող մարմինը պետք է ապահովի պաշտպանի մասնակցությունը՝ անկախ նրա ցանկությունից: Եթե նշված դեպքերում՝ պաշտպանի մասնակցությունը թողնվում է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունը, ապա այն դադարում է պարտադիր լինելուց:

Վերը նշվածն ուղղակի վերաբերում է նաև անչափահասների վերաբերյալ գործերով պաշտպանի մասնակցությանը: Այսինքն, եթե անչափահասը հրաժարվում է պաշտպանից, ապա նրա մասնակցության հարցը թողնված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Անկասկած, անչափահաս մեղադրյալների իրավունքների պաշտպանությունից ելնելով, ցանկալի կլիներ, որ ընդհանրապես օրենքով բացառվեր նման հայեցողությունը և պաշտպանի մասնակցությունը պարտադիր համարվեր բոլոր

դեպքերում: Պաշտպանից հրաժարվելու շարժառիթները և կասկածյալի, մեղադրյալի կողմից իր իրավունքներն իրականացնելու իրական հնարավորությունն ուսումնասիրելիս և գնահատելիս՝ պետք է հիմք ընդունել այն հանգամանքը, որ անչափահասն ունի հատուկ պաշտպանության կարիք⁸³:

Անչափահաս մեղադրյալի պաշտպանության իրավունքն էապես կխախտվի, եթե անչափահասը վարույթին մասնակցի առանց պաշտպանի: Պաշտպանից հրաժարվելու մասին անչափահասի հայտարարությունը՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի կարող ընդունվել որևէ հիմքով: Իհարկե, անչափահասը և նրա օրինական ներկայացուցիչը պետք է իրավունք ունենան պաշտպանին փոխելու այն դեպքում, երբ

ա/ նրանց կողմից հրավիրված կամ փաստաբանների պալատի կողմից նշանակված փաստաբանը պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չի տալիս իր պաշտպանյալին,

բ/ եթե ինչ որ պատճառներով անչափահասի և նրա պաշտպանի միջև՝ չի առաջանում փոխադարձ վստահության հարաբերություններ:

Այս հարցն իր լուծումն է ստացել Նախագծում, որտեղ բացառվում է պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքում վարույթն իրականացնող մարմնի հայեցողության կիրառման հնարավորությունը, իսկ ինչ վերաբերում է անչափահասների վերաբերյալ վարույթին, ապա պաշտպանի մասնակցությունը պարտադիր է բոլոր դեպքերում /Նախագծի հոդված 419/:

Պաշտպանի մասնակցությունը վարույթին ապահովվում է ընդհանուր կարգով, այսինքն հրավիրելու կամ նշանակելու եղանակով: Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ գործերով վարույթին պաշտպանի մասնակցությունը հիմնականում ապահովվում է օրինական ներկայացուցչի կամ անչափահասի մերձավոր ազգականների միջոցով: Սակայն, եթե անչափահասը չի ցանկանում, որ իր շահերը ներկայացնի օրինական ներկայացուցչի կողմից հրավիրված փաստաբանը, ապա նախապատվությունը պետք է տալ անչափահաս մեղադրյալին:

Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի համար պաշտպանի մասնակցությունն ապահովվում է յուրաքանչյուր դեպքում՝ անկախ այն բանից նա պաշտպան ցանկանում

⁸³ См'у Смирнов А.В., Калиновский К.Б. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. СПб., 2003, էջ 175:

է, թե՛ ոչ: Իհարկե, կասկածյալի կամ մեղադրյալի համար նշված իրավունքի իրականացումը՝ ըստ քրեական դատավարության գործող օրենսդրության ապահովվում է ձերբակալման, խափանման միջոց կիրառելու կամ մեղադրյալ ներգրավելու պահից:

Իհարկե, քրեական դատավարության գործող օրենսդրությունից հստակ չի երևում, թե ինչ ենք հասկանում ձերբակալման պահ ասելով, որովհետև ձերբակալումը հավաքական հասկացություն է: Քանի որ անձը ձերակալված է համարվում նրան արձանագրությունը հանձնելու պահից, հետևաբար պաշտպան ունենալու իրավունքի մասին նա իրազեկվում է այդ պահից: Սա նշանակում է, որ մինչև արձանագրություն կազմելը պաշտպանը չի կարող ներկայացնել ենթադրյալ հանցանքը կատարած և ազատությունից զրկված անձի շահերը, քանի որ քր. դատ. օր-ի 129-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերով սահմանված իրավունքները ծագում են հետաքննության մարմին կամ քննիչի մոտ բերելու պահից»: Այդ իրավունքների շրջանակի մեջ մտնում է նաև փաստաբան հրավիրելու իրավունքը:

Կարծում ենք, որ ողջունելի է Նախագծում ինչպես ձերբակալման բնորոշման, այնպես էլ նրա իրավունքների պարզաբանման պահի հստակեցումը: Մասնավորապես, ըստ Նախագծի 6-րդ հոդվածի 44-րդ կետի՝ «Ձերբակալում՝ առանց դատարանի որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածով սահմանված անձի ազատության իրավունքի սահմանափակումը»: Ինչպես տեսնում ենք, Նախագծի հեղինակները ձերբակալման բնորոշման հիմքում դնում են ոչ թե անձին ազատությունից զրկելու հետ կապված հաջորդական գործողությունների կատարումը, այլ անձին փաստացի ազատությունից զրկելը: Այսինքն, եթե անձը իրավասու մարմինների կողմից փաստացի զրկվել է ազատությունից, ապա դա նշանակում է, որ նա օգտվում է ձերբակալված անձի համար օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից և կիրառվում են դրանց իրականացումն ապահովվող երաշխիքները:

Նախագծի 110-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը՝ ձերբակալված անձն ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

7) փաստացի ազատությունից զրկվելու պահին բանավոր, իսկ հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական

շենք մուտք գործելու պահին նաև գրավոր տեղեկացվել սույն հոդվածով նախատեսված նվազագույն իրավունքների և պարտականությունների մասին.

8) իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառը.

9) պահպանել լռություն.

10) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին.

11) հրավիրել փաստաբան.

12) իր պահանջով ենթարկվել բժշկական զննման:

Նախագծի վերը նշված կարգավորումն իրական երաշխիք է ձերբակալված անձի իրավունքների պաշտպանության ապահովման համար: Քրեադատավարական գործող օրենսդրությամբ՝ ձերբակալված անձին արգելաքի վերցնելու պահին պարզաբանվում են հետևյալ իրավունքները՝ իմանալու իրեն ազատությունից զրկելու պատճառը, 2) պահպանելու լռություն, 3) ստանալու իր իրավունքների մասին բանավոր պարզաբանում, իսկ մնացած իրավունքները ձերբակալման արձանագրությունը նրան հանձնելու պահից:

Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի պաշտպանի մասնակցությունը ապացուցման պրոցեսին: Քրեական դատավարության ժողովրդավարական ու մրցակցային բնույթն արտահայտվում է նրանում, թե դատավարության կողմերն ինչպիսի մասնակցություն են ունենում ապացույցների հավաքմանը, ստուգմանը և գնահատմանը: Անհրաժեշտ է նշել, որ մինչդատական վարույթում մրցակցությունը սահմանափակ կիրառություն ունի, որովհետև հնարավոր չէ կողմերին օժտել լիովին հավասար իրավունքներով: Սա նշանակում է, եթե պաշտպանը չի մասնակցում ապացուցման պրոցեսին, այսինքն՝ քրական գործով ապացույցների հավաքմանը, ստուգմանը և գնահատմանը, ուստի կասկածյալի և մեղադրյալի իրավունքների արդյունավետ պաշտպանության մասին դժվար է խոսել:

Ընդհանուր առմամբ կասկածյալի, մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը մեծապես կախված է ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության աստիճանից:

Իհարկե, քրեական դատավարության գործող օրենսգիրքը չնայած իր ժողովրդա-

վարական բնույթին՝ ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության իրական հնարավորություն և երաշխիքներ չի նախատեսում: Այս կապակցությամբ արդարացի է դատավարական գրականության մեջ ՀՀ քր. դատ. օր-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում տեղ գտած կարգավորման քննադատությունը, որի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը: Բանն այն է, որ այս նորմում առկա «քրեական հետապնդման մարմնի առաջարկով», «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ», «մեղադրյալի պահանջով», «պաշտպանի միջնորդությունը» ձևակերպումներն ուղղակի անհամատեղելի են ժողովրդավարական կոչվելու հավակնություն ունեցող քրեական դատավարության օրենսգրքի համար, և ավելի շատ հիշեցնում են ինկվիզիցիոն դատավարության ոճը⁸⁴: Արդեն ի հաստատումը նշված կարծիքի, ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1119 որոշմամբ՝ նշված նորմը՝ «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ» և «եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը» ձևակերպումների մասով ճանաչեց հակասահմանադրական: Սահմանադրական դատարանն այս հիմնախնդրի հետ կապված արտահայտեց հետևյալ դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում պաշտպանը պետք է իրավունք ունենա մասնակցելու պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին՝ առանց որևէ միջնորդության ներկայացման, և անկախ նրանից, թե այդպիսի մասնակցության վերաբերյալ առկա է կասկածյալի կամ մեղադրյալի պահանջը, թե՛ ոչ⁸⁵:

⁸⁴ Տե՛ս Ղազինյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001թ., էջ 258:

⁸⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1119 որոշումը:

Ապացուցման սուբյեկտների բնորոշման և դասակարգման հարցերը միշտ էլ եղել են դատավարագետների ուշադրության կենտրոնում և այդ կապակցությամբ չկա միասնական մոտեցում: Հասկանալի պատճառներով չվերլուծելով այս հարցի վերաբերյալ դատավարական գրականության մեջ տեղ գտած կարծիքների բազմազանությունը, անհրաժեշտ է ընդգծել, որ առավել տարածված է այն մոտեցումը, որ ապացուցման սուբյեկտների մեջ մտնում են քրեադատավարական հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտները, չնայած նրանցից յուրաքանչյուրն այդ գործունեության մեջ իր տեղով ու դերով էապես տարբերվում են⁸⁶:

Պաշտպանը դասվում է ապացուցման այն սուբյեկտների թվին, որոնք ողջ դատավարության ընթացքում իրականացնում են ոչ թե սեփական, այլ մեկ ուրիշ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այսինքն ապացուցման պրոցեսին պաշտպանի մասնակցությունը կրում է ակտիվ և շարունակական բնույթ:

Դատավարական գրականության մեջ պաշտպանը որպես դատավարության սուբյեկտ առանձնանում է հետևյալ հատկանիշներով.

1) Պաշտպանն ապացուցմանը մասնակցում է նախօրոք նախանշված, որոշակի կոնկրետ դիրքորոշմամբ, այսինքն՝ ապացուցման ընթացքում նա իրականացնում է միայն պաշտպանական գործառույթ, որի էությունը կասկածյալին, մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների վեր հանումն ու հետազոտումն է.

2) Պաշտպանը գործի հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության և դատավարական կոնկրետ փուլում ապացուցման խնդիրների իրականացման համար հիմնական և անմիջական պատասխանատվություն չի կրում, թեև նրա դատավարական գործունեությունը նպաստում է դրան.

3) Պաշտպանն ապացուցման պրոցեսում այլ սուբյեկտների նկատմամբ դատավարական սանկցիաներ կամ հարկադրանքի այլ միջոցներ կիրառել չի կարող, քանի որ օժտված չէ պետաիշխանական լիազորություններով և իրավունք չունի իրականացնել իրավակիրառող գործունեություն,

4) Պաշտպանն ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման պարտա-

⁸⁶ Сг'и Мотовиловкер Я.О. Основной вопрос уголовного дела и его компоненты, Воронеж, 1984, էջ 7:

կանություն կրող սուբյեկտ չի համարվում⁸⁷:

Քրեական գործերով ապացուցմանը պաշտպանի մասնակցությունը երաշխավորում է կասկածյալի, մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Նախնական քննության փուլում ապացուցմանը մասնակցելով պաշտպանը նպաստում է ապացույցների հավաքմանը, դրանց բազմակողմանի ստուգմանը և ճիշտ գնահատմանը⁸⁸:

Պաշտպանը և դատավարության մյուս մասնակիցներն իրավունք ունեն իրենց իրավասության սահմաններում մասնակցել գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալների հավաքմանը, ստուգմանը և գնահատմանը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար: Ինչպես տեսնում ենք՝ օրենսդիրը ձեռնպահ է մնում «ապացույց» հասկացության օգտագործումից՝ դրանով որոշակի տարբերություն դնում վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերածի, որը համարվում է ապացույց, և պաշտպանի կողմից ձեռք բերածի, որը համարվում է՝ նյութ:

Ապացույց ձեռք բերելու փաստաբանի իրավունքն ամրագրված է նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (14.12.2004թ.) 18-րդ հոդվածի 2-րդ կետում, որում ի տարբերություն գործող օրենսգրքի՝ սահմանված է, որ փաստաբանն իրավունք ունի՝ (...) 2) օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու և ներկայացնելու վստահորդի շահերից բխող ապացույցներ. (...): Ինչպես տեսնում ենք նշված իրավունքը վերաբերում է նույն իրավահարաբերության կարգավորմանը, կարծում ենք, որ փաստաբանները կարող են ղեկավարվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, և ձեռք բերված տվյալները ներկայացնել ոչ թե որպես նյութեր, այլ ապացույցներ, քանի որ փաստաբանության մասին օրենսդրությունն ընդունվել է ավելի ուշ և անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից այն ավելի բարենպաստ է: Հանրապետությունում շարունակվող դատաիրավական բարեփոխման հիմնական խնդիրներից մեկը՝ մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի կիրառումն է, որն ուղղակի ենթադրում է ապա-

⁸⁷ Ст'я Жогин Н. В. Теория доказательств в советском уголовном процессе//юридическая литература// М., 1973, էջ 498:

⁸⁸ Ст'я, Ղուկասյան Հ.Հ. Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Երևան, 2001թ., էջ 107:

ցուցման գործընթացին պաշտպանի մասնակցության ընդարձակում և որոշակիացում: Այս տեսանկյունից ողջունել է Նախագծում՝ ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության իրավական կարգավորմանը: Այսպես, Նախագծի 49-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի՝ (...)

3) մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած ապացուցողական կամ այլ վարույթային գործողության, մասնակցել իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող ապացուցողական կամ այլ վարույթային գործողությանը, այլ դեպքերում քննիչի առաջարկով մասնակցել ապացուցողական կամ այլ վարույթային գործողությանը.

4) մեղադրյալին պարզաբանել նրա իրավունքները և ապացուցողական կամ այլ վարույթային գործողություն իրականացնող անձի ուշադրությունը հրավիրել նրա կողմից թույլ տրված օրենքի խախտման վրա.

5) ձեռք բերել և ներկայացնել ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար.

6) համաձայնության դեպքում հարցման ենթարկել ֆիզիկական անձանց.

7) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից պահանջել և ստանալ փաստաթղթեր կամ տեղեկություններ, եթե դրանք չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք.

8) մեղադրյալի պաշտպանության իրականացման հետ կապված հատուկ գիտելիքներ պահանջող հարցերով ստանալ փորձագետի կարծիք. (...):

Անկասկած վերը նշվածն էապես տարբերվում է գործող օրենսգրքից, որովհետև նշված իրավունքները պաշտպանին հնարավորություն են տալիս, ավելի իրական օգնություն ցույց տալ իր պաշտպանյալին: Ուշագրավ է նաև այն, որ պաշտպանը, մասնակցելով քրեական գործով վարույթին, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ձեռք բերել ապացույցներ և ներկայացնել վարույթն իրականացնող մարմնին՝ վարույթի նյութերին կցելու համար:

Ապացուցման գործընթացին անչափահաս մեղադրյալի պաշտպանի մասնակցությունն առանձնակի կարևոր է, որովհետև տարիքային առանձնահատկությունից ելնելով՝ դժվար, թե նա կարողանա իրականացնել արդյունավետ պաշտպանություն: Ի-

րականում, պաշտպանը պետական մարմիններից, կազմակերպություններից փաստաթղթեր կամ տեղեկություններ պահանջելով կամ անձանց հարցման ենթարկելով՝ կարող է ձեռք բերել ապացույցներ, որոնք կարևոր նշանակություն ունեն անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելու կամ նրա նկատմամբ դաստիարակչական բնույթի միջոցներ կիրառելու համար: Յուրաքանչյուր արդարադատության խնդիրը ենթադրյալ հանցանք կատարած անձին ոչ թե պատժելն է, այլ նրան դաստիարակելը, հասարակության լիարժեք անդամ դարձնելը: Այսինքն, անչափահասների դեպքում արդարադատության համակարգն ուղղված է առաջին հերթին անչափահասի բարեկեցության ապահովմանը, որպեսզի ենթադրյալ հանցանք կատարած անչափահասի վրա ազդեցություն գործող ցանկացած միջոց միշտ համաչափ լինի ինչպես անձի անհատական առանձնահատկություններին, այնպես էլ հանցագործության ծանրության աստիճանին:

Պաշտպանը, մասնակցելով ապացուցման գործընթացին, պարտավոր է անչափահասի շահերից ելնելով՝ ներկայացնել համապատասխան միջնորդություններ, որոնք կարող են ուղղված լինել առանձին քննչական գործողությունների կատարմանը: Նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը չի կատարում այն քննչական գործողությունները, որոնք անհրաժեշտ են գործի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի հաստատման համար: Այսօր նման միջնորդության հարուցումը կարևոր է, որովհետև գործող քրեադատավարական օրենսդրությամբ /նաև՝ Նախագծով/ սահմանված է, որ պաշտպանն իրավունք ունի մասնակցելու իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող քննչական գործողություններին: Պաշտպանի մասնակցությունը քննչական գործողությունների կատարմանը՝ ինքնին ենթադրում է մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի շրջանակի ընդարձակվում: Իհարկե, վարույթն իրականացնող մարմինը պետք է պաշտպանին կամ նրա պաշտպանյալին ժամանակին տեղեկացնի նրանց միջնորդությամբ կատարվող քննչական գործողության մասին:

Պաշտպանի մասնակցության հետ կապված ուշադրության է արժանի նաև անչափահասների գործերով պաշտպանի մասնագիտացման խնդիրը: Պեկինյան կանոնների կարևոր պահանջներից է անչափահասների գործերով մասնագիտացված մարմին ունենալը, կարծում ենք, որ այս պահանջը հավասարապես վերաբերում է նաև փաս-

տաբաններին: Կարծում ենք, որ փաստաբանները, բացի որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալուց, պետք է ունենան գիտելիքներ մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ, որպեսզի կարողանան իրենց վստահորդների հետ գալ փոխադարձ համաձայնության և ընտրել պաշտպանական ճիշտ տակտիկա⁸⁹: Այո հարցը կարևոր է նաև հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանների համար, որովհետև անչափահասների գործերով պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ այդպիսի մասնակցությունը հիմնականում ապահովվում է փաստաբանների պալատի կողմից:

Անչափահաս մեղադրյալի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության ընդհանուր տակտիկան ընտրելիս իրականում ծագում են որոշ բարդություններ: Պաշտպանի համար բավականին դժվար է պաշտպանել այն անչափահասի իրավունքները և օրինական շահերը, որի հետ փոխադարձ վստահության հարաբերություններ չեն ստեղծվում: Կոլիզիայի առկայությունը բավականին խնդիրներ է առաջացնում արդյունավետ պաշտպանության իրականացման համար:

Անչափահասի և նրա օրինական ներկայացուցչի միջև կարող են ծագել որոշ տարածայնություններ այն հարցում, թե ինչ դիրքորոշում է որդեգրել պաշտպանություն իրականացնելիս: Նման դեպքերում պաշտպանի համար առաջանում է բարդ իրավիճակ՝ համաձայնել անչափահաս մեղադրյալի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ, թե ընտրել և պաշտպանել իր տեսակետը, որը նրա կարծիքով, ավելի գերադասելի է վստահորդի համար: Չպետք է մոռանալ այն, որ ՀՀ քր. դատ. օր-ի 73-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Նախագծի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն», սակայն կարող է պատահել այնպես, որ ընտրված և պաշտպանին առաջարկված դիրքորոշումը գործի ի վնաս իր պաշտպանյալի: Իհարկե, պաշտպանի դիրքորոշման իրավական հիմքերը ամրագրված են քրեադատավարական օրենսդրությամբ: Այսպես, քր. դատ. օր-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի

⁸⁹ Պաշտպանի մասնագիտացված լինելու պահանջը բխում է յուվենալ արդարադատության սկզբունքներից, որոնք ամրագրված են Պեկինյան կանոններում:

միջոցները մեղմացնող հանգամանքները, նրան ցույց տալու իրավաբանական օգնություն: Քրեական գործով պաշտպանի դիրքորոշումը չի կարող հակասել վերը նշված նորմի պահանջներին: Արդարացի է Հ. Ղուկասյանի այն մոտեցումը, որ պաշտպանն իր դատավարական գործունեության մեջ կապված է մեղադրյալի հետ և պարտավոր է նրա հետ համաձայնեցնել իր դիրքորոշումը, սակայն միայն այն պարտականությունների կատարման կապակցությամբ, որոնք նրա վրա դրված են օրենքով⁹⁰:

Այդ դեպքում նա կարող է արդյոք պաշտպանության ուրիշ տակտիկա ընտրել, որը տարբերվի անչափահաս պաշտպանյալի կամ նրա օրինական ներկայացուցչի առաջարկածից: Այս հարցի կապակցությամբ համամիտ ենք պրոֆեսոր Ս.Դիլբանդյանի այն դիրքորոշման հետ, որ «...այո, փաստաբան-պաշտպանը կարող է այլ դիրքորոշում ունենալ, քան պաշտպանյալն ու նրա օրինական ներկայացուցիչը, եթե կարծում է, որ նրանց դիրքորոշումը սխալ է և տանում է իր պաշտպանյալի վիճակի վատթարացման: Սակայն նա պարտադիր պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի դրանում համոզի իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին»⁹¹:

Պաշտպանական տակտիկա ընտրելիս բոլոր դեպքերում պաշտպանը պետք է համաձայնեցնի իր դիրքորոշումը պաշտպանյալի՝ անչափահաս մեղադրյալի և նրա օրինական ներկայացուցչի դիրքորոշման հետ, որպեսզի պաշտպանությունն իրականացվի արդյունավետ: Փաստաբանը պարտավոր է տեղեկացնել իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին նրանց որդեգրած դիրքորոշման բոլոր հնարավոր բացասական հետևանքների մասին և միջոցներ ձեռնարկել, որպեսզի նրանք վերանայեն այդ դիրքորոշումը՝ փոխարինելով այն իրենց ավելի ձեռնտու դիրքորոշմամբ: Եթե դա չի հաջողվում, նա իրավունք ունի իրավիճակից ելնելով կամ համաձայնել իր պաշտպանյալի դիրքորոշման հետ՝ ենթարկվելով նրա կամքին և համարելով դա նրա շահերին չհակասող, կամ առաջ տանել սեփական դիրքորոշումը, որը կհամապատասխանի անչափահաս մեղադրյալի շահերին:

⁹⁰ Տե՛ս, **Ղուկասյան Հ.Հ.** Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Երևան, 2001թ., էջ 26:

⁹¹ Տե՛ս, **Դիլբանդյան Ս.Ա.** Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2011թ. էջ 308:

3.2. Անչափահասների վերաբերյալ գործերով օրինական ներկայացուցչի իրավական վիճակի կարգավորման առանձնահատկությունները

Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկություններից է օրինական ներկայացուցչի մասնակցությունը, որը նշված գործերով դատավարական ձևի տարբերակման եղանակներից է: Օրինական ներկայացուցչի կարգավիճակն ու նշանակությունը վաղուց արդեն քննարկվում է դատավարագետների կողմից⁹²: Այսօր էլ անչափահասի օրինական ներկայացուցչի իրավական վիճակի հիմնախնդիրները քրեական դատավարությունում մնացել են արդիական: Այդ մասին են վկայում այն հետազոտությունները, որոնք իրականացվել են դատավարական գրականության մեջ⁹³:

⁹² Տե՛ս , **Новобратский Л.** Законный представитель несовершеннолетнего в уголовном процессе // Советская юстиция. М.: Госюриздат РСФСР, 1962, № 24, էջեր 10-11; **Ландо А.С.** О процессуальном положении законного представителя несовершеннолетнего обвиняемого: Сборник работ аспирантов и соискателей // Ученые записки: Сборник работ аспирантов и соискателей. Саратов: Изд-во Сарат. юрид. ин-та, 1970, Вып. 19: Ч. 2, էջեր 254-261; **Иванов А., Ландо А.** Законный представитель несовершеннолетнего обвиняемого // Социалистическая законность. М., 1970, № 9, էջեր 72-73; **Тепляков П.** Законный представитель несовершеннолетнего обвиняемого в советском уголовном процессе // Социалистическая законность. М., 1972, № 10, էջեր 40-41; **Тепляков П.П.** Развитие законодательства о законном представителе несовершеннолетнего обвиняемого в русском и советском уголовном процессе // Государство, право и демократия в условиях развитого социалистического общества. Тезисы докладов 2-ой научно-теоретической конференции аспирантов (2-4 февраля 1973 г.). М.: Изд-во ВЮЗИ, Изд-во МГУ, 1973, էջեր 244-246; **Иванов А., Ландо А.** Законный представитель несовершеннолетнего подозреваемого // Социалистическая законность. М., 1973, № 3. էջ 47; **Ландо А.С.** Представители несовершеннолетних обвиняемых в советском уголовном процессе. Автореф. Дис. ... канд. юрид. наук - Саратов, 1973. 20 էջ; **Ландо А.С.** Участие по делам несовершеннолетних их законных представителей // Тезисы докладов и сообщений на Всесоюзной научно-практической конференции "Совершенствование организации и усиление воспитательно-предупредительного воздействия судебных процессов", 23-24 октября 1974 г.. М.: Изд-во МЮ СССР, 1974, էջեր 74-76; **Ландо А.С.** Вопросы участия в процессе законных представителей несовершеннолетнего подозреваемого // Вопросы теории и практики прокурорского надзора. Межвузовский научный сборник. Саратов: Изд-во Сарат. ун-та, 1974, էջեր 49-55:

⁹³ Տե՛ս **Дикарев И.** Свидетельский иммунитет законных представителей несовершеннолетних // Уголовное право. М.: АНО "Юридические программы", 2009, № 1, էջեր 76-80; **Назарчук А.Г.** Роль и участие законных представителей несовершеннолетних подозреваемых (обвиняемых) в уголовном процессе // Общество и право. Краснодар: Изд-во Краснодар. ун-та МВД России, 2009, № 2 (24), էջեր 201-205; **Дорофеева В.Ю.** Процессуально-тактические особенности деятельности профессионального представителя несовершеннолетнего потерпевшего в российском уголовном судопроизводстве. Автореф. дис. канд. юрид. наук - Воронеж, 2009. 23 էջ; **Лошкарева Т.В.** К вопросу об участии законных представителей по уголовным делам в отношении несовершеннолетних // Совершенствование деятельности по раскрытию и расследованию преступлений, совершенных несовершеннолетними. Сборник научных статей по материалам научно-практической конференции, 20 июня 2007 г.. Ижевск: ИФ НА МВД России, 2008, էջեր 13-17; **Васильева О.М.** Процессуальные проблемы допуска законных представителей несовершеннолетних подозреваемых и обвиняемых к участию в уголовном судопроизводстве // Совершенствование деятельности по раскрытию и расследованию преступлений, совершенных несовершеннолетними. Сбор-

Անչափահասի օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությունում պայմանավորված է երկու կարևոր հանգամանքներով՝ 1) անչափահասի սահմանափակ դատավարական գործունակությամբ, 2) անչափահասի դաստիարակության և վարքագծի համար ունեցած պարտականությամբ: Օրինական ներկայացուցիչը գործում է ոչ թե անչափահասի փոխարեն, այլ նրա հետ միասին, նպաստելով անչափահասի իրավունքների և օրինական շահերի իրացմանը, ինչպես նաև նրա կողմից դատավարական պարտականությունների կատարմանը: Անչափահաս մեղադրյալն իր դատավարական իրավունքներն իրացնելիս՝ համաձայնություն չի ստանում օրինական ներկայացուցչից:

Անկասկած քրեական գործերով վարույթին օրինական ներկայացուցչի մասնակցությունը անչափահաս մեղադրյալի իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Անչափահաս մեղադրյալը, ճիշտ է, օժտված է ընդարձակ իրավունքներով, սակայն տարիքային և հոգեբանական առաձնահատկություններից ելնելով չի կարող լրիվ իրականացնել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Դրա համար անչափահաս մեղադրյալի իրավունքների պաշտպանության համար սահմանված են լրացուցիչ երաշխիքներ, որոնցից է օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությունում⁹⁴:

Այդ երաշխիքն ապահովվում է շնորհիվ այն բանի, որ օրինական ներկայացուցիչը, անչափահասի մոտ առանձնահատուկ, վստահելի հարաբերություններ ձեռք բերելով, իմանալով նրա յուրահատկությունները, կարող է բավականին արդյունավետ նպաստել նրա իրավունքների ու ազատությունների իրացմանը: Ըստ այդմ, օրինական ներկայացուցչին պետք է դիտել քրեական դատավարությունում անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համակարգի կարևորագույն տարրերից մեկը: Նրա շնորհիվ իրական է դառնում անչափահասների պաշտպանության հնարավորությունը քրեական դատավարությունում և ապահովվում է կողմերի հա-

ник научных статей по материалам научно-практической конференции, 20 июня 2007 г.. Ижевск: ИФ НА МВД России, 2008, էջեր 17-26 :

⁹⁴ Տե՛ս **Исакова Т.В.** Производство по уголовным делам в отношении несовершеннолетних, Канд. юрид. наук, Иркутск, 2009, էջ 66:

վասարության սկզբունքի գործողությունը⁹⁵:

Ծնողների կամ խնամակալի մասնակցությունը, ինչպես նշված է Պեկինյան կանոնների 15.2 կանոնում, պետք է դիտել որպես ընդհանուր հոգեբանական, զգացմունքային աջակցություն անչափահասին, որպես գործառույթ այն պետք է իրականացվի դատավարության ամբողջ ընթացքում:

Օրինական ներկայացուցչությունը դատավարական այն ինստիտուտներից է, որն իր ամրագրումն է ստացել ինչպես քաղաքացիական, այնպես էլ՝ քրեական դատավարությունում: Իհարկե, այն ունի վաղեմի պատմություն, մասնավորապես նախատեսված էր ինչպես խորհրդային, այնպես էլ գործող նյութական և դատավարական օրենսդրությամբ: Այդպիսի կարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել անչափահաս կամ անգործունակ անձնաց իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունը: Օրենսդրության մեջ չկա «օրինական ներկայացուցիչ» հասկացության ընդհանուր բնորոշումը, իսկ իրավունքի տարբեր ճյուղերում հանդիպում ենք դրա առանձնահատուկ կարգավորմանը: Այն միջնուղային կատեգորիա է, որը նախատեսված է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական օրենսդրությամբ:

Քրեական դատավարության գործող օրենսգրքի 9-րդ գլուխը նվիրված է ներկայացուցչությանը և իրավահաջորդությանը, որում առանձին կարգավորված են նաև օրինական ներկայացուցչի իրավական կարգավիճակի հարցերը: Ընդհանրական կարգավորման հիման վրա սահմանվել է իրավունքների շրջանակը, որոնցով օժտվում է օրինական ներկայացուցիչը՝ անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում՝ մեղադրյալին, կասկածյալին, տուժողին, թե վկային: Դա չի բացառում օրինական ներկայացուցիչների միջև տարբերությունների առկայությունը քրեական դատավարությունում: Այդ մասին է վկայում ՀՀ քր. դատ. օր.-ի 77-րդ հոդվածի 9-րդ մասը, որտեղ սահմանված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ»: Այսինքն՝ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը օգտվում է իր կողմից ներկայացվող մեղադրյալի իրավունքներից, տուժողի օրինական ներկայացուցիչը

⁹⁵ Տե՛ս. **Դիլբանդյան Ս.Ա.** Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2011, էջ 337:

համապատասխանաբար՝ տուժողի իրավունքներից: Հաշվի առնելով այն, որ բոլոր այդ մասնակիցներն ունեն տարբեր ծավալի իրավունքներ, օրինական ներկայացուցիչները ևս, որոնք ներկայացնում են այդ մասնակիցներին, օգտվում են համապատասխան ծավալի իրավունքներից: Դրանով իսկ տվյալ օրինական ներկայացուցչի դատավարական վիճակը կախված է այն բանից, թե քրեական դատավարության որ մասնակցի շահերն է նա ներկայացնում, և իրավունքների շրջանակից, որոնցով օժտված է քրեական դատավարությունում ներկայացվող համապատասխան մասնակիցը: Օրինական ներկայացուցչի հիմնախնդրի լուծման նման մոտեցումը, որը տեղ է գտել Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում, պետք է գնահատել հաջողված, որովհետև հաջողվել է օրենսդրորեն մոտենալ յուրյուրապես արդարադատության հիմնախնդրի լուծմանը:

Եթե համեմատենք նրանց դատավարական վիճակները, ապա կտեսնենք, որ նրանք բոլորը օժտված են իրավունքների գրեթե նույն ծավալով, որոնք անհրաժեշտ են իրենց՝ անչափահասների շահերը պաշտպանելու համար, որոնց ներկայացնում են: Բացի այդ՝ նրանք նույն շրջանակի այն անձինք են, որոնք կարող են հանդես գալ որպես անչափահասների օրինական ներկայացուցիչներ: Այս հանգամանքը հիմք է հանդիսացել քրեական դատավարության օրենսգրքում ներկայացուցչության ինստիտուտի միասնական կարգավորման, որը հնարավորություն է տալիս խուսափել կրկնություններից: Պետք է համաձայնել պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյանի այն մոտեցման հետ, որ նման կարգավորմամբ ըստ էության դրվել են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման հարցերում միասնական մոտեցում ցուցաբերելու հիմքեր, այսինքն՝ կանոնակարգվել է քրեական դատավարության մասնակցի վիճակը, որը կարող է ներկայացնել քրեական դատավարությունում ներգրավված ցանկացած անչափահասի իրավունքներն ու շահերը: Բացի այդ, լուծվել է նորմատիվ միջոցների տնտեսման խնդիրը, այսինքն՝ նվազագույն քանակի նորմերով լուծվել է օրինական ներկայացուցչի խնդիրը, որը կարող է ներկայացնել կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, քաղաքացիական հայցվորի իրավունքներն ու շահերը⁹⁶: Օրենսդրական առանձին կարգավորումը վկայում է նաև քրեական դատավարությունում այս սուբյեկտների ունեցած դերի

⁹⁶ Ս.Ա. Դիլբանդյան նույն աշխ. էջ 340:

կարևորության մասին: Օրենսդրական նշված կարգավորումից հետևում է, որ օրինական ներկայացուցչությունը ներկայացուցչության ինքնուրույն տեսակ է և իրականացվում է քրեական դատավարությունում հանդես եկող անչափահաս անձանց նկատմամբ: Չնայած առկա օրենսդրական կարգավորմանը, դատավարական գրականության մեջ հանդիպում ենք նաև հակառակ կարծիքի, որ օրինական ներկայացուցչությունը, քանի որ առաջանում է օրենքի ուժով, հետևաբար այն ներկայացուցչության ինքնուրույն տեսակ չէ: Այսպես, Օ.Խ. Գալիմովը գտնում է, որ քրեական դատավարությունում գործում է երկու տեսակի ներկայացուցչություն՝ պայմանագրային և օրինական: Առաջինը հիմնված է դատավարության մասնակիցների /տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի/ և այլ անձի /օրինակ՝ փաստաբանի/ միջև պայմանագրի վրա, երկրորդը՝ ծննդյան վրա: Դրա համար իրավաբանական գիտության մեջ կարելի է առանձնացնել ներկայացուցչություն և օրինական ներկայացուցչություն հասկացությունները: Քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչի մասնակցությունը երկմիասնական է: Մի կողմից՝ դա իրավաբանական փաստն է, որի հետ օրենքը կապում է օրինական ներկայացուցչության առաջացումը, մյուս կողմից ներկայացնող անձի կողմից դատավարական կարգավիճակի ձեռք բերումն է: Առաջինը կարգավորվում է քաղաքացիական և ընտանեկան օրենսդրությամբ, իսկ երկրորդը՝ քրեադատավարական⁹⁷: Մենք նույնպես պաշտպանում ենք այն մոտեցումը, որ օրինական ներկայացուցչությունը պետք է տարբերել ներկայացուցչությունից, որովհետև ի տարբերություն ներկայացուցչի, օրինական ներկայացուցչի դիրքորոշումը, նրա լիազորությունների ծավալը կախված չէ ներկայացվողի կամքից, այլ հանդիսանում է այդպիսին՝ օրենքի ուժով: Քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է ըստ օրենքի, իսկ մինչդեռ ներկայացուցչության դեպքում անհրաժեշտ է ներկայացվողի ցանկությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ են համարվում նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության

⁹⁷ См'у **Галимов О.Х.** Малолетние лица в уголовном судопроизводстве, -СПб,: Питер, 2001, էջեր 56-57:

համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմին»⁹⁸: Ինչպես տեսնում ենք նշված հոդվածում թվարկված են այն անձինք, որոնք իրավունք ունեն ներկայացնելու անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: Այսինքն՝ քրեական դատավարության օրենսգրքում ոչ թե թվարկված են օրինական ներկայացուցչի հատկանիշները, այլ այն անձանց շրջանակը որոնք կարող են օրինական ներկայացուցիչներ ունենալ: Պետք է նշել, որ այս հիմնախնդիրն առկա է նաև այլ երկրների օրենսդրությունում, մասնավորապես ԱՊՀ երկրների, որոնցում նույնպես ներկայացված են այն սուբյեկտները, ովքեր կարող են լինել օրինական ներկայացուցիչներ:

Քրեադատավարական գրականության մեջ օրինական ներկայացուցչի բնութագրական հատկանիշներն առանձնացվել են Ա.Կ. Բելոկոպիտովի կողմից, ըստ հեղինակի այդ հատկանիշներն են՝ 1/օրինական ներկայացուցիչները կոչված են պաշտպանելու անգործունակ կամ սահմանափակ գործունակ սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը, 2/օրինական ներկայացուցիչներն անձի իրավունքներն ու շահերը ներկայացնելու լիազորություններ ձեռք են բերում ոչ թե տվյալ անձից, այլ օրենքի հիման վրա, 3/օրինական ներկայացուցչի իրավունքների ծավալը կախված չէ ներկայացվողի կամքից, 4/օրինական ներկայացուցիչը ներկայացնելով անձին արտահայտում է իր կամքը, 5/օրինական ներկայացուցիչը ներկայացվողի իրավունքներն ու օրինական շահերը պետք է ներկայացնի բոլոր հաստատություններում՝ ներառյալ դատարանում⁹⁸: Անկասկած այս հատկանիշները բնութագրական են քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչությանը, բայց այն կրում է շատ ընդհանրական բնույթ:

Հաշվի առնելով ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նշված սուբյեկտի իրավական վիճակի կարգավորման առանձնահատկությունները, ինչպես նաև դատավարական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ տեղ գտած կարծիքները, օրինական ներկայացուցչի իրավական վիճակը կարելի է ներկայացնել հետևյալ հետևանքներով՝

⁹⁸ См. у **Белокопытов А.К.** Законное представительство в российском уголовном судопроизводстве. Дисс. ... канд. юрид. наук. Иркутск, 2009. Ёջ 22:

1. Օրինական ներկայացուցիչներ կարող են լինել՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմին /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 76, մաս 1/: Ինչպես տեսնում ենք, նշված հոդվածում սպառիչ թվարկված են այն սուբյեկտների շրջանակը, որոնք կարող են հանդես գալ որպես օրինական ներկայացուցիչներ:

2. Համապատասխան անձինք օրինական ներկայացուցչի կարգավիճակ ձեռք են բերում օրենքի ուժով և քրեական վարույթում անչափահասի շահերը ներկայացնելու համար՝ բավարար է իրենց մերձավորության աստիճանը հաստատող համապատասխան փաստաթուղթ ներկայացնելը:

3. Օրինական ներկայացուցչի իրավական վիճակը բնութագրող կարևոր հատկանիշ է նրա պարտադիր մասնակցությունը: Քրեադատավարական գործող օրենսգրքից միանշանակ չի բխում այդ հատկանիշի առկայությունը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանն իրենց որոշմամբ թույլատրում են քրեական գործով վարույթին որպես համապատասխան տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ մասնակցել նրանցից յուրաքանչյուրի ծնողներից, որդեգրողներից, խնամակալներից կամ հոգաբարձուներից մեկին: Նշված հոդվածից հետևում է, որ օրինական ներկայացուցիչը վարույթին կարող է մասնակցել վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Այդ մասին է վկայում նաև օրենքում ամրագրված այն դրույթը, որ քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին /քր. դատ. օր-ի հոդված 77, մաս 1, կետ 4/: Իհարկե, նման կարգավորումը համահունչ չէ Պեկինյան կանոնների 15.2 կետում սահմանված այն դրույթին՝ «Ծնողները կամ խնամակալը իրավունք ունեն մասնակցելու դատաքննությանը, և անչափահասի

շահերից ելնելով իշխանության իրավասու մարմինը կարող է պահանջել նրանց մասնակցությունը»: Դատավարությանն անչափահասի օրինական ներկայացուցչի մասնակցության գործող օրենսդրական կարգավորումը չի համապատասխանում Պեկինյան կանոններին, որովհետև կանոններում նրա մասնակցությունը ոչ թե թողնված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը, այլ հռչակում է որպես օրինական ներկայացուցչի իրավունք, որին համապատասխանում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

Քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումը օրինական ներկայացուցչին զրկում են արդյունավետ ներկայացնել անչափահաս անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը: Կարծում ենք, որ հաշվի առնելով օրինական ներկայացուցչի մասնակցության անհրաժեշտությունը՝ օրենքի ուժով վարույթն իրականացնող մարմնին պետք է պարտավորեցնել ապահովելու օրինական ներկայացուցչի մասնակցությունը: Խնդրի լուծումը նախ պետք է տեսնել դատավարության օրենսգրքում անչափահաս մասնակցի իրավունքների շարքում օրինական ներկայացուցիչ ունենալու իրավունքի նախատեսման մեջ, որը պետք է պարզաբանվի նրան: Այս մոտեցումը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումից, որ «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր սեփական հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Ընդ որում, երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Կոնվենցիայի նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ունենդրվել, թե անմիջականորեն, թե իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով, ազգային օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով: Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին աստիճանի դատարանում դատաքննությանն անհրաժեշտ էր ապահովել երեխաների և վերջիններիս ներկայացուցչի

մասնակցությունը⁹⁹:

Անհրաժեշտ է նշել, որ այս թերությունը վերացված է Նախագծում, որի 420-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով օրինական ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է:

Նման կարագվորումն անկասկած իրական է դարձնում օրինական ներկայացուցչի մասնակցությունը անչափահասի վերաբերյալ գործով վարույթին և դրանով երաշխավորում նրա իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունը:

4. Օրինական ներկայացուցչի բնութագրման համար կարևոր է նաև նրա դատավարական ինքնուրույնությունը:

Քրեական դատավարությունում օրինական ներկայացուցիչը հանդես է գալիս որպես ինքնուրույն սուբյեկտ, որովհետև նրա կարգավիճակն ամրագրված է քրեական դատավարության օրենսգրքով, իրականացնում է որոշակի գործառույթ և օժտված է դատավարական իրավունքներով ու պարտականություններով: Օրինական ներկայացուցչի կարգավիճակն առանձնանում է նրանով, որ նա ոչ միայն իրականացնում է իր իրավունքները, այլև նպաստում է ներկայացվող անձի իրավունքների իրականացմանը:

Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ չի կարգավորված նաև օրինական ներկայացուցիչների ներկայության ապահովման հարցը: ՀՀ քր. դատ. օր-ի 77-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված է, որ օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝ «իր կողմից ներկայացվող անձի շահերը պաշտպանելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով», սակայն դրա իրականացումն ապահովող համապատասխան երաշխիք նախատեսված չէ, որովհետև օրինական ներկայացուցչի չներկայանալու դեպքում՝ վարույթն իրականացնող մարմինը չի կարող նրան բերման ենթարկել: Քանի որ անչափահաս կասկածյալի, մեղադրյալի կամ տուժողի շահերի ներկայացումը մտնում է օրինական ներկայացուցչի պարտականությունների մեջ, հետևաբար նրանց մասնակցությունն ապահովելու համար, քրեադատավարական օրենսդրությամբ պետք է նախատեսել, որ օրինական ներկայացուցիչը նույնպես կարող է բերման ենթարկվել:

Այս հիմնախնդիրն իր լուծումն է ստացել Նախագծի 145 հոդվածում, որում սահ-

⁹⁹ Տե՛ս ՀՀ վճռողական դատարանի Հայարփի Միշայի Աթոյանի վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0014/11/09 որոշումը:

մանված է՝ վարույթի մասնավոր մասնակցի (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի կողմից սույն օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում քննիչը, դրանց կատարումն ապահովելու նպատակով, իրավասու է որոշում կայացնել անձին ձերբակալելու մասին:

Քրեական դատավարության օրենսգրքով չի կարգավորված նաև այն հարցը, թե ինչպես պետք է վարվել, եթե օրինական ներկայացուցչի մասնակցությունը կարող է վնասել անչափահասի շահերին: Քանի որ օրինական ներկայացուցչի մասնակցությունը նպատակ ունի անչափահասին օգնելու և ոչ թե վնասելու, հետևաբար վարույթն իրականացնող մարմինը պետք է իրավունք ունենա տվյալ օրինական ներկայացուցչին հեռացնել վարույթից և ներգրավել մյուս օրինական ներկայացուցչին, իսկ եթե այդպիսիք չկան, ապա կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ նշանակել խնամակալության և հոգաբարձության մարմնին:

Դատավարական գրականության մեջ այս հարցի իրավական կարգավորման վերաբերյալ հանդիպում ենք տարբեր կարծիքների: Այդ կարծիքների հիմքում մի դեպքում ընկած է օրենքի ուժով օրինական ներկայացուցչի կողմից անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու պարտականությունը, մյուս դեպքում՝ անչափահաս անձի ազատ կամահայտնությունը: Այսպես՝ Ա.Ս. Լանդոն այս կապակցությամբ նշում է, որ օրինական ներկայացուցչի գործողությունները կապված չեն մեղադրյալի կամահայտության հետ, որովհետև այն իրականացվում է հանուն նրա շահերի¹⁰⁰: Չնայած առկա կարծիքների բազմազանությանը, կածում ենք, որ արդարացի են այն հեղինակները, որոնք նախապատվությունը տվյալ դեպքում տալիս են անչափահաս մեղադրյալի կամքի ազատությանը, մասնավորապես այն դեպքերում, երբ օրինական ներկայացուցչի և անչափահասի դիրքորոշումների միջև կան հակասություններ¹⁰¹: Օրինական ներկայացուցիչը չի կարող իր շահերը հակադրել ներկայացվողի շահերին, հակառակ դեպքում նրա մասնակցությունը կկրի ձևական բնույթ: Նշված կարծիքին է նաև

¹⁰⁰ Ст'ю Ландо А.С. Представители несовершеннолетних обвиняемых в советском уголовном процессе, Саратов: Изд-во СГУ, 1977, էջ 26-27:

¹⁰¹ Ст'ю Никандров В.И. Участие родителей несовершеннолетних подозреваемых и обвиняемых в уголовном процессе, //Государство и право. -1993. N 8, էջ 99-106; Голубева Л.М. Судебное рассмотрение дел о преступлениях несовершеннолетних /вопросы теории и практики. Фрунзе: ИЛИМ, 1981, էջ 29:

Յու. Պ. Միխաիլչուկը, որը գտնում է, որ անչափահասի կարծիքը պետք է հաշվի առնել քրեական դատավարությանն օրինական ներկայացուցիչներից որևէ մեկին ներգրավելիս¹⁰²:

Նշված մոտեցումը բխում է նաև Պեկինյան կանոններից, որում սահմանված է՝ իշխանության իրավասու մարմինը կարող է մերժել օրինական ներկայացուցչի մասնակցությունը, եթե կան հիմքեր ենթադրելու, որ դա անհրաժեշտ է անչափահասի շահերի պաշտպանության համար: Տվյալ դեպքում նախապատվությունը տրվում է անչափահասի շահերին և նրա կամքի ազատությանը, որը կարող է ինքնուրույն ներկայացնել իր շահերը դատարանում:

Քրեական դատավարության գործող օրենսգրքում նախ պետք է սահմանել, որ օրինական ներկայացուցիչը կարող է հեռացվել դատավարությունից, եթե կան հիմքեր ենթադրելու, որ նա իր գործողություններով կարող է վնաս հասցնել անչափահաս կասկածյալի, մեղադրյալի, շահերին: Կարծում ենք, որ նշված հարցի արդյունավետ կարգավորման համար, պետք է նախատեսել նաև ծնողին քրեական դատավարությունից հեռացնելու հիմքերը, քանի որ դրանց բացակայությունը կարող է հանգեցնել անչափահասի իրավունքների խախտման:

Քրեական դատավարությունում հնարավոր է վիճակ, երբ անձին քրեական օրենքով չթույլատրված արարքով վնաս է պատճառել ծնողը: Այսինքն ծնողը տվյալ դեպքում հանդես է գալիս ոչ միայն որպես մեղադրյալ, այլև տուժողի օրինական ներկայացուցիչ, բայց քրեական դատավարությունում անձը չի կարող երկու դատավարական վիճակ ունենալ: Պետք է համաձայնել Վ.Ե. Յուրչենկոյի այն կարծիքի հետ, որ եթե հանցավոր ոտնձգությունը անչափահաս տուժողի նկատմամբ կատարվել է օրինական ներկայացուցչի կողմից, հետևաբար նա չի կարող ներկայացնել նրա շահերը¹⁰³: Տվյալ դեպքում մեկ անձը չի կարող իրականացնել միմյանց հակասող երկու գործառույթներ՝ պաշտպանության և մեղադրանքի: Բնականաբար ծնողը որպես մեղադրյալ չի կարող ներկայացնել անչափահաս տուժողի շահերը և միաժամանակ հանդես գալ որպես օրինական ներկայացուցիչ: Կարծում ենք, որ որպես հիմք կարող է հանդիսանալ նաև այն, որ եթե

¹⁰² Տե՛ս Михаилчук Ю.И. Допрос несовершеннолетнего обвиняемого на предварительном следствии, дисс... канд. юрид наук. Краснодар, 2005, էջ 134:

¹⁰³ Տե՛ս, Юрченко В.Е. Гарантии прав потерпевших в судебном разбирательстве. Томск: Изд-во Томск. Ун-та, 1977. էջ 91:

անչափահաս անձի ծնողներն օրենքով սահմանված կարգով զրկվել են ծնողական իրավունքից:

Եթե գործով պարզվել է, որ անչափահասի ծնողները վարում են հակաբարոյական կյանք, թմրամոլ են, չեն մասնակցում անչափահասի դաստիարակությանը, մեղադրյալի մոտ չեն վայելում հարգանք, ապա վարույթն իրականացնող մարմինը կարող է նրան զրկել վարույթին մասնակցելուց, բայց այդ դեպքում պետք է ներգրավի մյուս օրինական ներկայացուցչին: Այն դեպքում, երբ օրինական ներկայացուցիչը բացակայում է, ապա մասնակից է դարձվում հոգաբարձության կամ խնամակալության մարմինը:

Նշված խնդիրն իր լուծումն է ստացել Նախագծում, որում սահմանված են օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու հիմքերը: Նախագծի 69-րդ հոդվածի համաձայն՝ անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի, տուժողի կամ վկայի օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև տուժող կամ գույքային պատասխանող իրավաբանական անձի օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե՝

1) գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն դատավորի, վարույթի հանրային կամ մասնավոր մասնակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին.

2) վարույթին մասնակցել է որպես դատավոր, հանրային մասնակից, մասնավոր մասնակից կամ վարույթին օժանդակող անձ, բացառությամբ վկա հանդես գալու դեպքերի.

3) իր վարքագծով ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին.

4) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ:

Նախագծով սահմանված վերը թվարկված հիմքերը սպառնիչ չեն, որովհետև նրանում նախատեսված է օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու ևս այլ հնարավորություն: Այսպես, Նախագծի 72-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը, օրինական ներկայացուցիչը, դատական նիստի քարտուղարը, ընթերական կամ թարգմանիչը, որոնց մասնակցությունը վարույթին չի բացառվում սույն օրենսգրքով նախատեսված որևէ հիմքով, կարող են իրենց միջնորդությամբ ազատվել վարույթին մասնակցելուց, եթե առկա է նրանց մասնակցությանը խոչընդոտող որևէ հարգելի պատճառ: Ի-

հարկե, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է ճիշտ կողմնորոշվի, որպեսզի նշված անձինք առանց հարգելի պատճառների չխուսափեն իրենց դատավարական պարտականությունների կատարումից:

Դատավարական գրականության մեջ վեճի առարկա է նաև այն հարցը, արդյոք երկու ծնողներն էլ պետք է մասնակցեն, թե նրանցից մեկը: Այս հարցը մեր քրեադատավարական օրենսդրությամբ ստացել է համապատասխան կարգավորում: Ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 76-րդ հոդվածի՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանն իրենց որոշմամբ թույլատրում են քրեական գործով վարույթին որպես համապատասխան տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ մասնակցել նրանցից յուրաքանչյուր ծնողներից, որդեգրողներից, խնամակալներից կամ հոգաբարձուներից մեկին: Ընդ որում, որպես օրինական ներկայացուցիչ պետք է թույլատրվի մասնակցել այն ծնողին, որդեգրողին, խնամակալին կամ հոգաբարձուին, որի թեկնածությունն իր համաձայնության առկայության դեպքում պաշտպանում են մյուս բոլոր օրինական ներկայացուցիչները: Հակառակ դեպքում քրեական գործով վարույթին որպես օրինական ներկայացուցիչ մասնակցող անձին ընտրում է դատախազը կամ դատարանը»: Ինչպես տեսնում ենք, որպես օրինական ներկայացուցիչ կարող է մասնակցել վերը թվարկված անձանցից միայն մեկը, որի թեկնածությունը պաշտպանում են մյուսները, իսկ հակառակ դեպքում՝ այն որոշում է վարույթն իրականացնող մարմինը: Դատավարագետների մի մասը գտնում է, որ երկու ծնողներին միաժամանակ դատավարություն ներգարվելը բարդացնում է քրեադատավարական գործունեության իրականացումը, իսկ մեկ օրինական ներկայացուցչի մասնակցությունը բավարար է անչափահաս անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Կարծում ենք, որ քրեական գործով մի քանի օրինական ներկայացուցչի մասնակցությունն արդարացված է, որովհետև ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների հանդեպ: Քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված վերը նշված սահմանափակումը պետք է վերացնել:

Կարծում ենք, որ կարևոր է այն հարցի պարզաբանումը, արդյոք անչափահասի

համաձայնությունն անհրաժեշտ է օրինական ներկայացուցչի մասնակցության համար: Քանի որ քրեադատավարական օրենսդրությամբ նման համաձայնություն չի նախատեսվում, հետևաբար նման համաձայնության անհրաժեշտություն չկա: Օրենսդրական նման կարագավորումը հիմնվում է այն գաղափարախոսության վրա, որ ծնողները պաշտպանում են իրենց երեխաների իրավունքներն ու շահերը ցանկացած հարաբերություններում: Քրեադատավարական օրենսդրությունից բխում է նաև այն, որ անչափահասը չի կարող հրաժարվել օրինական ներկայացուցչի մասնակցությունից, որով հետևաբար վերջինս վարույթին մասնակցում է ոչ թե անչափահասի համաձայնությամբ, այլ օրենքի ուժով:

Քրեական դատավարությանը օրինական ներկայացուցչի մասնակցության համար կարևոր է նրա կարգավիճակի հարցը, այսինքն՝ որ պահից նա իրավունք ունի մասնակցելու դատավարությանը: Քանի որ նրա կարգավիճակը պայմանավորված է կասկածյալի կամ մեղադրյալի իրավական վիճակով, հետևաբար օրինական ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցելու դատավարությանը ոչ թե այն պահից, երբ վարույթն իրականացնող մարմինը նրան հրավիրում է մասնակցել առանձին քննչական գործողությունների կատարմանը, այլ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելու պահից: Կասկածյալի դեպքում օրինական ներկայացուցիչը մասնակցում է նրա ձերբակալման կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու պահից, իսկ մեղադրյալի դեպքում՝ նրան մեղադրանք առաջադրելու պահից: Անչափահասի նկատմամբ քրեական գործով վարույթին օրինական ներկայացուցչի մասնակցության հարցը պետք է կարգավորել այնպիսի ճշգրտությամբ, ինչպիսին սահմանված է պաշտպանի համար: Նախագծով, քանի որ վերացվել է կասկածյալ սուբյեկտը, հետևաբար օրինական ներկայացուցչի մասնակցությունը պետք է ապահովվել նաև ձերբակալված անձի համար, որը ենթարկվել է քրեական հետապնդման: Այսինքն ձերբակալված անձի համար պետք է նախատեսել ոչ միայն պաշտպան ունենալու իրավունքը, այլև օրինական ներկայացուցիչ: Նախագծի 420-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն օրինական ներկայացուցչի մասնակցությունն ապահովում է անչափահասի ձերբակալման կամ նրան մեղադրանք ներկայացնելու պահից: Վարույթն իրականացնող մարմինն օրինա-

կան ներկայացուցչին պարզաբանում է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները:

Վերը շարադրվածը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչի իրավական վիճակի կարգավորումը պետք է բարելավել, մասնավորապես ոչ միայն ընդարձակելով նրա իրավունքները, այլև ապահովելով դրանց իրականացումն ապահովող երաշխիքները: Կարծում ենք, որ նրա իրավական վիճակը պետք է մոտեցնել պաշտպանի կամ ներկայացուցչի վիճակին: Մասնավորապես, պետք է ընդարձակել նրա հնարավորությունները՝ քրեական դատավարության տարբեր փուլերում մասնակցելու ապացուցման գործընթացին:

**ԳԼՈՒԽ 4. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՍԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ**

***4.1. Անչափահասների նկատմամբ իրականացվող քրեական գործով
վարույթը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը***

Անչափահասությունը անձին բնութագրող այն հատկանիշն է, որը սահմանում է նրա հատուկ կարգավիճակը քրեական դատավարությունում: Այն դրանով օժտված անձին ընձեռում է առանձնահատուկ հնարավորություններ, որոնք մասնավորաբար արտացոլվում են ըստ էության քրեական գործերի լուծման մեխանիզմում: Համանման մեխանիզմներից է քրեական գործով վարույթի կարճումը¹⁰⁴:

Ի շարս այն հիմքերի, որոնք բազմաթիվ երկրների քրեադատավարական օրենսդրություններ նախատեսում են անձանց համար, որոնց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, անչափահասներին տրվում են լրացուցիչ հիմքեր, որոնցից է նրանց տարիքը՝ չափահասության հասած չլինելը¹⁰⁵: Այսպես, ՌԴ քր.դատ.օր.-ում այս հիմքը ամրագրված է 427 հոդվածում, Բելառուսի Հանրապետության քր.դատ.օր.-ի 30 հոդվածը նախատեսում է քրեական գործը կարճելու այնպիսի հիմք, ինչպիսին է անչափահասին ծնողների կամ նրանց փոխարինող անձանց հսկողությանը հանձնելը, Ղազախստանի քր.դատ.օր.-ի 36 հոդվածի 1-ին մասում նախատեսվում է անչափահասի

¹⁰⁴2017 թվականի անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վիճակագրությունը հետևյալն է՝ կարճվել է 40 քրեական գործ կամ քննված քրեական գործերի 24,6%-ը, այդ թվում՝ 28-ը՝ Երևան քաղաքում, 12-ը՝ մարզերում (17 դեպքում՝ արարքում հանցակազմի, 10 դեպքում՝ դիմողի բողոքի բացակայության, 1 դեպքում՝ հանցագործության դեպքի բացակայության, 2 դեպքում՝ կասկածյալի կամ մեղադրյալի հետ տուժողի հաշտության, 2 դեպքում՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով և 8 դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով):

¹⁰⁵ St' u Kasyanova E.B. Особенности прекращения уголовного преследования в отношении несовершеннолетних правонарушителей в связи с применением к ним принудительных мер воспитательного воздействия // Обеспечение прав и законных интересов несовершеннолетних: научные статьи и материалы всероссийского круглого стола, проведенного 16 ноября 2011 года на базе юридической клиники Воронежского института МВД России. - Воронеж: Воронеж. ин-т МВД России, 2012. - էջ 13-18; Белоусова Е.А. О некоторых вопросах прекращения уголовного дела (уголовного преследования) в отношении несовершеннолетнего // Криминалисть. - С.-Пб.: Изд-во С.-Петербур. юрид. ин-та Академии Ген. прокуратуры РФ, 2010, № 2 (7). - էջ 50-53:

նկատմամբ կիրառել ուղղիչ բնույթի միջոցներ:

Վերոնշյալ երկրների տվյալ մոտեցումը լիովին համապատասխանում է բազմաթիվ միջազգային փաստաթղթերի նորմերում ամրագրված պահանջներին: Մասնավորապես, այն համապատասխանում է 20.11.1989թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային, որի հոդված 3-ում ուշադրություն է հրավիրվում դատարանների կողմից անչափահասների համար բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտությանը և անչափահասների շահերի ապահովման առաջնահերթությանը: Ասվածից հետևում է, որ անչափահասների նկատմամբ գործերի վարույթները պետք է տարբերվեն բոլոր այլ քրեական գործերի վարույթներից հնարավորինս բարենպաստ պայմանների ապահովմամբ, որոնք առավելագույնս կնպաստեն անչափահասների իրավունքների և օրինական շահերի ապահովմանը¹⁰⁶: Այսինքն՝ պետք է գոյություն ունենա յուրօրինակ արդարադատության հատուկ համակարգ, որը կերաշխավորի արդարացի արդարադատություն անչափահասների նկատմամբ:

Բացի հոչակագրային բնույթի ընդհանուր պահանջներից, վերոնշյալ Կոնվենցիան հատուկ ուշադրություն է դարձնում նաև անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման կոնկրետ մեխանիզմներին: Դա, մասնավորապես, վերաբերում է անչափահասների նկատմամբ քրեական գործը կարճելու մեխանիզմին: Այսպես, Կոնվենցիայի 40 հոդվածի 3-րդ մասում հանձնարարվել է պետություններին սահմանել ընթացակարգեր օրինախախտ անչափահասների նկատմամբ՝ առանց դատաքննություն իրականացնելու: Նախաքննության փուլում անչափահասի նկատմամբ քրեական գործը կարճելը լիովին համապատասխանում է այդ պահանջին:

Ելնելով վերոնշյալ դրույթից՝ ակնհայտ է դառնում, որ միջազգային հանրությունը, գիտակցելով դատական քննության ներգործության ուժը անչափահասների դեռևս ոչ լիովին ձևավորված հոգեկանի վրա, ձգտում է պաշտպանել նրանց դրանից: Ընդ որում, նկատելի է այն բանի ձգտումը, որ օրինախախտ անչափահասը չհայտնվի հասարակությունից դուրս, համենայնդեպս հասարակության այն հատվածից, որն ունակ է

¹⁰⁶ См'у Серкерова С.Э. Конвенция ООН о правах ребенка и стандарты ювенальной юстиции // Конвенция ООН о правах ребенка: опыт и перспективы реализации: Материалы Всероссийской научно-практической конференции. 18-19 ноября 2009 г. - Махачкала: ИП Овчинников, 2009. - էջեր 320-325:

խթանելու և զարգացնելու նրա մեջ սոցիալապես օգտակար հատկանիշներ: Դրանով է պայմանավորված նաև տարբեր երկրների օրենսդրություններում քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգերի արժեքավորությունը, որոնցում դրա համար գլխավոր հիմքերից մեկը դառնում է անչափահաս անձի տարիքը, որի նկատմամբ հարուցվել է քրեական գործը:

Ինչպես արդեն նշել ենք, հենց հոգեկանի առանձնահատկությունները հաշվի առնելու և դրա վրա բացասական ներգործություն թույլ չտալու այդ ձգտումով է բացատրվում ՀՀ քր.դատ.օր.-ի 50-րդ գլխի գոյությունը, որը կարգավորում է անչափահասների գործերով վարույթների առանձնահատկությունները: Նշյալ գլխի դրույթներն ընդհանուր առմամբ համապատասխանում են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային:

Այստեղ մի կողմից կարելի է առանձնացնել ազգային քրեադատավարական օրենսդրության անհետևողականությունը միջազգային փաստաթղթերում ամրագրված սկզբունքների իրականացման հարցում: Սակայն մյուս կողմից միանգամայն ակնհայտ են հակասությունները, որոնք թաքնված են նույն այդ սկզբունքներում: Այսպես, մի կողմից, ինչպես նշվեց, անչափահասների համար պետք է սահմանվեն ընթացակարգեր՝ առանց դատական քննություն անցկացնելու: Մյուս կողմից, Երեխայի մասին կոնվենցիայի 40 հոդվածում հատուկ շեշտադրվում է անչափահասների նկատմամբ անմեղության կանխավարկածը պահպանելու անհրաժեշտությունը: Սակայն անմեղության կանխավարկածը ենթադրում է դատաքննություն, առանց որի այն անիմաստ է: Այսպես, համաձայն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ 10.12.1948թ. ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11 հոդվածի 1-ին մասի՝ «Հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվել, քանի դեռ իր մեղքը օրենքով չի հաստատվել հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները»: Միանգամայն ակնհայտ է, որ վերոշյալ երկու պահանջներին հետևելը կհանգեցնի տրամաբանական հակասության, որի էությունն այն է, որ մեկին ճշգրտությամբ հետևելիս անխուսափելիորեն կխախտվի մյուսը: Այսպես, առանց դատական քննության անչափահասի նկատմամբ ընթացակարգեր կիրառելու պահանջն անհնար է դարձնում անմեղության

կանխավարկածի սկզբունքը պահպանելը, քանի որ առանց դատական քննության դա իրականացնելն անհնար է:

Ընդհանուր առմամբ, նշյալ հակասությունը բնորոշ է ոչ միայն անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն, այլև առհասարակ նախաքննության փուլում ցանկացած տեսակի քրեական հետապնդում դադարեցնելուն¹⁰⁷: Այն արդեն բավականին վաղուց է դիտվում որպես քրեադատավարական օրենսդրության էական հիմնախնդիրներից մեկը, որը միանշանակ լուծում ցայժմ դեռ չունի:

Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմը ներդնելու հնարավորության ու անհրաժեշտության վերաբերյալ հարցը վճռելիս հարկավոր է կողմնորոշվել, թե ինչու է այդ մեխանիզմն անհրաժեշտ պետությանը, հասարակությանը և հենց անձին: Ելնելով անչափահասի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը կարգավորող քրեադատավարական նորմերի վերլուծությունից՝ ակնհայտ է դառնում, որ այդ մեխանիզմը միջոց է, որն օգտագործելով պետությունը և հասարակությունը ձգտում են ոչ դատական կարգով լուծելու անչափահասների հանցավորության որոշակի հիմնախնդիրներ: Սակայն այդ հիմնախնդիրներին լուծում տալիս են ոչ միայն ԱՊՀ երկրների օրենսգրքերը, այլև ուրիշ երկրների, ընդ որում՝ ոչ պակաս հաջողությամբ: Օրինակ՝ ԳԴՀ քրեադատավարական օրենսդրությունը այդ խնդիրը լուծում է այսպես կոչված «diversion»՝ (դայվերժոն) ինստիտուտի միջոցով¹⁰⁸: Այդ հասկացության ներքո հասկացվում է պաշտոնական (ex officio) քրեական դատավարությունից հրաժարվելը՝ դրա փոխարեն ոչ պաշտոնական այլընտրանքներ կիրառելու միջոցով: Դա թույլ է տալիս խուսափել տևական դատական ընթացակարգերից՝ կապված մեղավորությունը պարզելու հետ, սակայն դրանով հանդերձ առավելագույնս պաշտպանում է անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը¹⁰⁹:

Վերոնշյալ ինստիտուտի օգտագործման հիմքում դրված հիմնական փաստարկ-

¹⁰⁷ St' u Ostromukhov Л.Б. Презумпция невиновности при прекращении уголовных дел по нереабилитирующим обстоятельствам // Юридическая мысль. - С.-Пб.: Изд-во юрид. ин-та (Санкт-Петербург), 2012, № 4 (72). - էջ 61-67:

¹⁰⁸ Vob, S.: Staatsanwaltschaftliche Entscheidung: Beeinflussung durch systematische Informationserweiterung? Frankfurt am Mein u.a., 1993. էջ 19:

¹⁰⁹ St' u Пергатая А.А. Отказ от уголовного преследования как новое стратегическое направление в уголовном процессе по делам несовершеннолетних ФРГ // Актуальные проблемы правоведения: Сб. науч. тр. молодых учёных и аспирантов. - Красноярск: Красноярск. Гос. ун-т, 1998. - էջեր 54-55:

ներն են. նախ՝ հիմնականում անչափահասների հանցավորությունը բնականոն է, սովորական, դրվագային և աննշան, ուստի և հանցավորության այլ տեսակների նկատմամբ գործադրվող միջոցները անչափահասների հանցավորության դեպքում կիրառելը չափից դուրս խիստ է ու անարդյունավետ: Երկրորդ՝ նշյալ ինստիտուտը թույլ է տալիս խուսափել ստիգմատիզացումից, որի ներքո հասկացվում է այն, որ անչափահասի նկատմամբ ցանկացած դատական ընթացակարգ նրա համար յուրատեսակ «խարան» է հասարակության աչքում՝ որպես հասարակական վտանգ ներկայացնողի, հետևաբար և սոցիալապես մերժված անձի¹¹⁰: Նման կերպ «խարանելը» չի բխում պետության և հասարակության շահերից, քանի որ դա որոշակիացնում է անչափահասի շփման միջավայրը՝ մղելով նրան հակահասարակական հակումներ ունեցող անձանց շրջանակ: ԳԴՀ քրեադատավարական օրենսդրությունը ձգտում է թույլ չտալ նման բան, որպեսզի անչափահասն ուղղվելու իրական հնարավորություն ունենա՝ վերանայելով իր վարքագիծը:

Անկասկած մեծ են տարբերությունները անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացումը կարգավորող ԳԴՀ քրեադատավարական օրենսդրության համակարգի և Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության միջև, որը մեծամասամբ հիմնված է խորհրդային օրենսդրության վրա, և որին բնորոշ չեն յուլենալ արդարադատության բավականաչափ զարգացած ինստիտուտներն ու մեխանիզմները (թեև դրա հիմքերն արդեն ուրվագծվում են Նախագծում): Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը ներկա դրությամբ չունի յուլենալ արդարադատության իրականացման հստակ ձևակերպված սկզբունքներ, ինչն անդրադառնում է շատ ինստիտուտների և մեխանիզմների կատարելության աստիճանի վրա, որոնք կարգավորում են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացումը: Սակայն, չնայած դրան, արդեն այսօր Նախագծում հստակորեն սահմանված են անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու մասով այն նպատակներն ու խնդիրները, որոնք դրված են քրեական դատավարության առանձին ինստիտուտների և մեխանիզմների առջև, և դրանց օգնությամբ,

¹¹⁰ St' u Пергатая А.А. Уголовная ответственность несовершеннолетних по законодательству России и Германии // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Материалы научно-практической конференции (3 - 4 февраля 2000 г.). - Красноярск: Изд-во Сиб. юрид. ин-та МВД России, 2000, Ч. 1. - էջեր 120-123:

կարծում ենք, որ կլուծվեն հասարակության առջև ծառացած հիմնահարցերն ու խնդիրները: Գլոբալ առումով նման հիմնահարցերից է անչափահասների հանցավորությունը, իսկ խնդիրը դրա դեմ պայքարն է: Սակայն նշյալ հիմնահարցը լուծելու յուրաքանչյուր պետության ռազմավարությունը կարող է լինել տարբեր, քանի որ տարբեր կարող են լինել միջանկյալ նպատակները, որոնք սահմանում է պետությունը տվյալ տեսակի հանցավորության դեմ պայքարելու համար:

Ներկայումս բազմաթիվ երկրների օրենսդրության և միջազգային փաստաթղթերի վերլուծությունից երևում է, որ նշյալ հիմնախնդիրը լուծվում է ոչ թե հակադրվելու միջոցով, որտեղ հակառակ կողմերն են՝ մի կողմից՝ պետությունը, մյուս կողմից՝ հանցանք գործած անչափահասները, այլ այնպիսի պայմաններ ստեղծելու միջոցով, որոնց առկայության դեպքում անչափահասն ինքն էլ գիտակցի իր կատարածի անթույլատրելի ու անընդունելի լինելը և հրաժարվի հետագայում նման գործողություններ կատարելուց: Այսինքն՝ նման մոտեցմամբ անչափահաս իրավախախտը դիտվում է ոչ թե որպես հասարակության թշնամի, որին հարկավոր է առնվազն մեկուսացնել, այլ որպես սխալված, դժվար իրավիճակում չկողմնորոշված անձ, որը այդ առումով օգնության կարիք ունի, և հարկավոր է բացատրել նրան, որ հետագայում անթույլատրելի է նման գործողություններ կատարելը: Ընդ որում՝ պետության առջև խնդիր է դրված այնպես բացատրել նրան հետագայում հանցավոր գործողություններ կատարելու անթույլատրելի լինելը, որ դա անուղղելի վնաս չհասցնի անչափահասի հոգեկանին, չնսեմացնի նրան հասակակիցների, մերձավորների և ընդհանրապես հասարակության աչքում: Այսինքն՝ պետությունն ու հասարակությունը ճիշտ ուղուց շեղված անչափահասին դիտում են որպես իրենց լիիրավ անդամ, որի ճակատագրով է պայմանավորված իրենց կայուն զարգացումը: Նման ռազմավարությունը ենթադրում է պատժիչ տարրի մեղմում անչափահաս մեղադրյալների (կասկածյալների) նկատմամբ կիրառվող ընթացակարգերում արդարադատություն իրականացնելիս¹¹¹: Նշյալ ռազմավարությունը պետք է ընկած լինի անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացումը կարգավորող նորմերի հիմքում:

¹¹¹ St'u, Солонина С.Ю. Сравнительный анализ институтов прекращения уголовного дела в отношении несовершеннолетних (на примере стран СНГ) // Общественная безопасность, законность и правопорядок в III тысячелетии: сборник материалов Международной научно-практической конференции (Воронеж, 27 июня 2013 г.). - Воронеж: Изд-во Воронеж. ин-та МВД России, 2013, Ч. 1. - էջեր 286-289:

Ցավոք, պետք է խոստովանել, որ քրեադատավարական օրենսդրությունը չի կարողացել լիովին խուսափել հանցագործություններ կատարած անչափահաս մեղադրյալների (կասկածյալների) ստիգմատիզացումից անգամ նրանց նկատմամբ քրեական գործը ոչ արդարացնող հիմքով կարճելու դեպքում, երբ այդ դատավարական գործողությունը կիրառելու պայմանը նրանց տարիքն է: Նախագծում այնուամենայնիվ նման փորձ ձեռնարկվել է, մասնավորապես 423 հոդվածի համաձայն՝ «Եթե մինչդատական վարույթում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի քննության ընթացքում պարզվում է, որ առաջին անգամ հանցանք կատարած անչափահաս մեղադրյալի ուղղումը հնարավոր է առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, ապա հսկող դատախազը, քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և հարուցում է անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն, որը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է դատարանին»:

Այսպիսի կարգավորումը համապատասխանում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 40 հոդվածին, որը հանձնարարական է տալիս անչափահասների իրավախախտումների հետ կապված հարցերը քննելու և լուծելու առանց դատական քննության: Քրեական դատավարության գործող օրենսդրությունը այս առումով թերի է, որովհետև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները նույնն են, ինչ կիրառվում է չափահաս մեղադրյալների նկատմամբ: Այսինքն՝ նախքան անչափահաս մեղադրյալի նկատմամբ քրեական գործը դադարեցնելը կիրառվում են այն նույն ընթացակարգերը, ինչ բոլոր մյուս անձանց նկատմամբ, որոնք մեղադրվում են հանցագործություն կատարելու մեջ:

Թեև քրեադատավարական օրենսդրությամբ անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը իրականացվում է ոչ թե դատական նիստում, այլ նախաքննության ժամանակ, սակայն այդ դեպքում էլ, միևնույնն է, կիրառվում են հիմնականում այն նույն ընթացակարգերը, որոնք կիրառվում են չափահասների նկատմամբ, հետևաբար և հաշվի չեն առնում անչափահաս լինելու առանձնահատկությունները: Դա թույլ չի տալիս լիարժեքորեն հաշվի առնել այն խնդիրները, որոնք առա-

ջադրում են անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերը: Ի մասնավորի՝ դա թույլ չի տալիս լիովին խուսափել ստիգմատիզացումից, քանի որ հենց միայն անչափահասի նկատմամբ քրեական դատավարության ընթացակարգ կիրառելու փաստն արտացոլվում է նրա հեղինակության և ուրիշների կողմից որպես իրավախախտ ընկալվելու վրա¹¹²: Նա թեև օրենքով սահմանված կարգով չի ճանաչվում մեղավոր հանցագործություն կատարելու մեջ, այդուհանդերձ շրջապատի կողմից ընկալվում է որպես հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձ, ուստի և իր վրա զգում է շրջապատի անբարեհաճ վերաբերմունքը: Դա երբեմն դրսևորվում է նաև շրջապատի կողմից նրա իրավունքների ու շահերի ուղղակի անտեսմամբ, մասնավորապես կրթադաստիարակչական հաստատություններում ձգտում են սահմանափակել նրա շփման շրջանակը, անվստահություն են ցուցաբերում նրա նկատմամբ դպրոցում կամ այլ ուսումնական հաստատությունում տարբեր աշխատանքների հանձնարարությունները բաշխելիս և այլն: Նախագիծն առաջին անգամ առաջընթաց արձանագրեց, քանի որ նախատեսում է այնպիսի դատական ընթացակարգ, որը չի կարող բացասաբար ազդել անչափահասի անհատականության վրա: Ըստ Նախագծի հսկող դատախազը, քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և հարուցում է անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն, որը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է դատարանին: Ինչպես տեսնում ենք անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցն իր վերջնական լուծումը ստանում է դատարանում և սա պետք է համարել արմատական բարեփոխում: Ուստի պետք է խոստովանել, որ նշված կարգավորումը մեր քրեադատավարական օրենսդրության համար լավագույնն է, որը հնարավոր բացասական հետևանքները հացնում է նվազագույնի:

Միջազգային հանրությունը անչափահասների հանցավորության հետ կապված խնդիրների իդեալական լուծում է համարում ընտանիքի ինստիտուտի օգտագործումը, ինչպես նաև դրա հիման վրա ստեղծված այլ ինստիտուտներ: Այսպես, Նոր Զելանդիա-

¹¹² St' u Марковичева Е.В. Проблемы охраны прав несовершеннолетнего в современном российском уголовном процессе // Уголовно-процессуальные и криминалистические проблемы борьбы с преступностью, Всероссийская научно-практическая конференция (2014; Орел): сборник материалов. - Орел: ОрЮИ МВД России им. В.В. Лукьянова, 2014. - էջեր 121-125:

յում անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս ելնում են այն բանից, որ իրավախախտների ընտանիքները պարտավոր են կիսել նրանց հետ պատասխանատվությունը: Դրա արդյունքում ստեղծվել է այնպիսի ինստիտուտ, ինչպիսին է «Ընտանեկան խորհրդակցությունը»: Համաձայն «Երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների մասին» 1989 թ. օրենքի՝ ընտանեկան խորհրդակցությանը ներգրավվում են իրավախախտի ազգականները, տուժողները, ոստիկանները, սոցիալական աշխատողները և այլ շահագրգիռ անձինք: Անչափահասը հնարավորություն ունի նման խորհրդակցությունում ընդունելու իր մեղքը, ինչը իրավունք է տալիս ընտանիքին խորհրդակցության մյուս մասնակիցների համաձայնության դեպքում որոշելու անչափահասի պատիժը¹¹³: Ընդ որում՝ այդ պատիժը կապված չէ որևէ իրավունքից զրկելու հետ, այլ դաստիարակչական բնույթ ունի: Նշյալ ինստիտուտի արդյունավետությունը հաստատում է անչափահասների հանցավորության զգալի կրճատումը, ինչը նկատելի է ներկայումս: Այդուամենայնիվ հարկ է նշել, որ Նոր Զելանդիայում ընտանեկան խորհրդակցության ինստիտուտը միայն այլընտրանք է դատարանին, ինչը թույլ չի տալիս պնդել, թե այդ երկրում լիովին լուծված են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերոնշյալ խնդիրները: Սակայն այնտեղ ներդրված ինստիտուտը միանգամայն հիմնավորված կարելի է ճանաչել որպես շատ հաջողված քայլ անչափահասների նկատմամբ արդարադատությունը առավելագույնս մարդասիրական դարձնելու խնդիրը լուծելու ուղղությամբ:

Անչափահասների նկատմամբ արդարադատությանը համանման վերաբերմունք են ցուցաբերում նաև այլ պետություններ, որոնք իրենց օրենսդրությունում ամրագրել են հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անչափահասներին վերաբերող հատուկ ընթացակարգեր: Օրինակ՝ Ֆրանսիայում «Անչափահասների իրավախախտումների մասին» 2 փետրվարի 1945թ. № 45-174 օրենքը հռչակում է, որ դեռահասին դաստիարակելը (վերադաստիարակելը) ավելի կարևոր է, քան պատժելը, որը նախատեսված է Քրեական օրենսգրքի պատժամիջոցներով: Դրանով իսկ ձևակերպվում է անչափահասի իրավունքը, որը վերաճում է սկզբունքի, համաձայն որի՝ յուրաքանչյուր

¹¹³ St'u, Рудгрэйв Т. Новозеландская революция в ювенальной юстиции // Правосудие по делам несовершеннолетних. Мировая мозаика и перспективы в России. Выпуск 2. Кн. 1. – М.: МОО Центр «Судебно-правовая реформа», 2000. – էջ 40:

անչափահաս իրավախախտ ունի ուղղվելու իրավունք և չի կարող զրկվել դրանից ոչ մի պատրվակով¹¹⁴: Այդ իրավունքի իրացման հետևանքը անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերը ընդհանուր իրավասության դատարաններում քննելու արգելքն է, ինչը ձևակերպված է վերոնշյալ օրենքի հոդված 1-ում: Այսինքն՝ անչափահաս մեղադրյալները (կասկածյալները) չեն ենթարկվում այն նույն դատական ընթացակարգերին, ինչ մյուս իրավախախտները, ինչով ապահովվում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի պահանջների կատարումը:

Առանձնահատուկ պետք է նշել, որ եվրոպական երկրներում գոյություն չունի միասնական կարծիք անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման սկզբունքների վերաբերյալ: Այսպես, Շվեյցարիան ստորագրել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան որոշ վերապահումներով: Այդ երկիրը չի ընդունել հոդված 40-ը և մի շարք այլ հոդվածներ: Եվ դա այն դեպքում, որ հենց Շվեյցարիան է այն երկիրը, որտեղ առանձնահատուկ վերաբերմունքը անչափահասների նկատմամբ արդարադատությանն ունի ամենահին պատմությունը: Ներկայումս այստեղ գործում է յուզվենալ դատարանների համակարգը: Հատկանշական է, որ եթե գործի քննությունը նախապատրաստելու փուլում յուզվենալ դատավորը հաստատում է, որ հանցագործության պատճառը ընտանիքում ստեղծված վիճակն է՝ ծնողների հետ հարաբերությունները կամ հոգեբանական մթնոլորտը ընտանիքում, նա կարող է ընդունել դաստիարակչական բնույթի որոշում¹¹⁵: Դա որոշ չափով նման է քրեական հետապնդումը դադարեցնելու մեր ընթացակարգին, քանի որ նույն կերպ քրեական գործը փաստացի կարճվում է նախքան դրա նյութերի քննությունը դատական նիստում: Չնայած Շվեյցարիայում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նորմերի իրացման հարցում դրսևորված ընտրողական վերաբերմունքին, այնուամենայնիվ նկատելի է ժամանակակից բոլոր պետություններին բնորոշ մոտեցումը, որի էությունը հանցագործություն կատարելու

¹¹⁴ St'u, Калистов М.В. Ювенальная юстиция Франции // Человек: преступление и наказание: сборник материалов межвузовской научно-теоретической конференции адъюнктов, аспирантов, соискателей, курсантов, слушателей и студентов (22 марта 2013 г.). - Рязань: Акад. ФСИН России, 2014. - էջեր 305-307:

¹¹⁵ St'u Шмидт М. Уголовное законодательство Швейцарии в отношении несовершеннолетних и лиц молодежного возраста // Цели и средства уголовной и уголовно-исполнительной политики в отношении несовершеннолетних: Сборник материалов международной научно-практической конференции (Вологда, 26-27 ноября 2009 г.): в 2 ч.. - Вологда: ВИПЭ ФСИН России, 2010, Ч. 2. - էջեր 76-78:

մեջ կասկածվող անչափահասի նկատմամբ դատական ընթացակարգերի կիրառումից խուսափելու ձգտումն է: Յուվենալ արդարադատության մարմիններին առաջադրվող խնդիրը անչափահաս իրավախախտի համար այնպիսի պայմաններ ստեղծելն է, որոնք, չվնասելով նրա հոգեկանը, կկարողանան մոտեցնել նրան այն բանի գիտակցմանը, որ կատարված գործողություններն անընդունելի են ոչ միայն հասարակության, այլև հենց իր համար: Այսինքն՝ նրա մեջ ձևավորել օրինապահ վարքագծի սոցիալականորեն նշանակալի պահանջմունքի սաղմեր: Դրանով իսկ անչափահասի համար ապահովվում է երաշխիք՝ հասարակության կողմից մերժված չլինելու համար: Յուվենալ արդարադատության հիմքում ընկած սկզբունքներից մեկը, որը ոչ բոլոր երկրներում է ձևակերպված որպես ինքնուրույն նորմ, սակայն որի առկայությունը ակներև է անչափահասների վերաբերյալ գործող օրենսդրության վելուծությունից, հետևյալն է. հանցագործությունից դեպի վերադաստիարակում՝ շրջանցելով դատական ընթացակարգերն ու քրեական պատիժը: Նշյալ սկզբունքին լիովին համապատասխանում է դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցի կիրառմամբ անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Նախագծի 425 հոդվածը, որի համաձայն՝ «Եթե մեղադրական եզրակացությամբ կամ մեղադրական ակտով դատարան ուղարկված վարույթի արդյունքում պարզվում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատասխանատվության ենթարկվելու, ապա դատարանը որոշում է կայացնում անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին»:

Այս նորմը փաստացի նախատեսում է հնարավորություն հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասի համար՝ դատական կարգով խուսափելու քրեական պատժից: Այսինքն՝ այս առումով կարելի է համարել, որ քրեադատավարական օրենսդրությունը համապատասխանում է ոչ միայն միջազգային օրենսդրության նորմերին, այլև հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ հասարակության և պետության վերաբերմունքն ավելի մարդասիրական դարձնելու միտումներին:

Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգում նկատվում են նաև վերականգնողական արդարադատությանը բնորոշ նշաններ, ինչը քրեադատավարական օրենսդրության զարգացման մարդասիրական միտումներից մեկն է աշխարհի առաջավոր երկրներից շատերում¹¹⁶: Այսպես, անչափահասների նկատմամբ արդարադատությանը բնորոշ է սոցիալական այն միջավայրը վերականգնելու ձգտումը, որում ապրում է անչափահասը, ինչը կնպաստի նրա մեջ սոցիալապես օգտակար հատկանիշների, ինչպես նաև օրինապահ վարքագծի սաղմերի զարգացմանը: Այսինքն՝ անչափահասի նկատմամբ քրեական դատավարությունը դադարեցնելու հնարավորությունը սահմանող նորմերը ուղղված են քրեական արդարադատության պատժիչ ազդեցությունը հաղթահարելուն, դեռահասների մեջ ինքնավերահսկում և մարդկանց հետ ոչ կոնֆլիկտային շփումների հմտություններ զարգացնելուն, ինչպես նաև չափահաս հանցագործների քրեական աշխարհի հետ առճակատվելու հնարավորությունը կանխելուն:

Սակայն վերականգնողական արդարադատության սկզբունքներին լիովին համապատասխանելու համար անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմերը պետք է ուղղված լինեն հաշտեցման միջոցառումների (հանդիպումներ, զրույցներ և այլն) կազմակերպմանը¹¹⁷: Այսինքն՝ ցանկալի է, որ համապատասխան նորմերը ներառեն անչափահաս կասկածյալի (մեղադրյալի) պարտավորությունը՝ հատուցելու իր կողմից պատճառված վնասը: Ցավոք, Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրությունում նման պարտավորություն նախատեսված չէ:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ մի շարք այլ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործերը կարճելիս նույնպես ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում այնպիսի ընթացակարգերի գործողություն, որոնք համապա-

¹¹⁶ Տե՛ս, Ожиганова М.В. Восстановительное правосудие как альтернативная форма уголовного судопроизводства по делам несовершеннолетних // Уголовная юстиция. Научно-практический журнал. - Томск: ООО "Изд-во научно-технической литературы", 2013, № 2 (2). - էջեր 38-40:

¹¹⁷ Տե՛ս, Загрядская Е.А. Некоторые вопросы применения процедуры восстановительного правосудия по уголовным делам о преступлениях, совершенных несовершеннолетними // Актуальные проблемы применения норм уголовно-процессуального права при расследовании преступлений: материалы Международной научно-практической конференции (Москва, 26 октября 2012 года). - М.: ООО "Буки Веди", 2012. - էջեր 122-128:

տասխանում են վերականգնողական արդարադատության սկզբունքներին: Դրանով հանդերձ՝ տուժողը, համաձայն գործող քրեադատավարական օրենսդրության, իրավունք ունի բողոքարկելու քրեական գործը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը: Սա նշանակում է, որ քրեական գործերի քննության պրակտիկայում տուժողի նման իրավունքի առկայությունը հանգեցնում է տուժողի հետ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճումը համաձայնեցնելու անհրաժեշտությանը: Այսինքն՝ այդ իրավունքը հիմք է դառնում վերականգնողական արդարադատությանը բնորոշ ընթացակարգերի իրականացման համար: Բողոքարկման իրավունքը հանգեցնում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը համաձայնեցնելու պրակտիկային: Ընդ որում՝ նման որոշում ընդունելիս քննիչը միշտ հաշվի է առնում տուժողի հաշտության առկայությունը, ինչպես անչափահասի, այնպես էլ նրա օրինական ներկայացուցիչների կողմից բացասական վերաբերմունքը կատարված հանցագործությանը, տուժողից ներողություն հայցելը (դրա անկեղծությունը գնահատելիս): Այսինքն՝ ակնհայտ են վերականգնողական արդարադատությանը հատուկ տարրերը: Ուստի, թեև անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում վերականգնողական ընթացակարգեր, սակայն նշյալ մեխանիզմի կիրառման պրակտիկան առանց դրանց չի գործում:

Չնայած այն բանին, որ անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու պրակտիկայում գոյություն ունեն վերականգնողական արդարադատության միջոցառումներ, այնուամենայնիվ ճիշտ կլինի, որ դրանց անհրաժեշտությունը ոչ միայն գիտակցվի, այլև նախատեսվի գործող քրեադատավարական օրենսդրությամբ: Դա անհրաժեշտ է առաջին հերթին համապատասխան հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասների ուղղման և վերադաստիարակման նպատակների համար: Նշյալ միջոցառումները իրականացնելու մեջ դրսևորվում է անչափահասի պատրաստակամությունը մերժելու այն ուղենիշները, որոնցով առաջնորդվելով էլ նա հանցագործություն է կատարել: Անչափահասի՝ ճիշտ ուղի վերադառնալու մտադրությունների լրջությունը հավաստող գնահատականը քննիչի կողմից նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում ընդունելն է: Ան-

չափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցում ձևական մոտեցումից խուսափելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վերականգնողական արդարադատության այն միջոցառումները, որոնց հիման վրա հնարավոր կլինի միանշանակ եզրակացության հանգել այն մասին, որ անչափահասի վերադաստիարակումը հնարավոր է առանց քրեական պատիժ կիրառելու:

Այդ միջոցառումների շարքում առաջնահերթ նշանակություն ունեն տուժողի հետ հաշտեցումը և գործուն զղջալը կատարած հանցագործության համար¹¹⁸: Դրանից բացի, օրենսդրական կարգով կարող են տեղ գտնել նաև պատճառված վնասը հատուցելու ուղղությամբ ձեռնարկված գործողությունները: Այդ ամենը կարող է երաշխավորել, որ անչափահասը չի մերժվի հասարակության կողմից, չարացած չի լինի նրա հանդեպ, ինչի արդյունքում նա հասարակության համար կորած մարդ չի դառնա:

Առանձնահատուկ պետք է նշել նաև այն, որ Նախագծում նախատեսում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցում միայն այն դեպքերում, երբ վերջիններս կատարել են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն: Համանման մոտեցում են ցուցաբերում նաև ԱՊՀ և լավ զարգացած յուրեւեւ արդարադատությամբ երկրներները: Կարծում ենք, որ նման կարգավորումը պայմանավորված է այն բանով, որ անչափահասի արդյունավետ վերադաստիարակման հնարավորության մասին եզրակացությունը պետք է արվի նաև կատարված հանցագործության ծանրության աստիճանի և բնույթի վերլուծության հիման վրա: Միանգամայն ակնհայտ է, որ ծանր հանցագործություն կատարած անչափահասը հազիվ թե ուղղվի այն մեթոդներով, որոնք կիրառվում են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած անչափահասների նկատմամբ: Նրա համար արդյունավետ կարող են լինել ավելի ուժեղ մեթոդներն ու միջոցները, այսինքն՝ քրեական պատիժը: Ինչ վերաբերում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած անչափահասներին, ապա համարվում է, որ նրանք պարզապես սխալվել են, ուստի և նրանց ուղղվելը միանգամայն հնարավոր է, և արդյունքի կարելի է հասնել առանց քրեական պատժի

¹¹⁸ Տե՛ս, Шестакова Л.А. Восстановительные процедуры как один из векторов модернизации производства по делам несовершеннолетних // Проблемы ювенальной юстиции и системы исполнения наказаний: материалы Международной научной конференции адъюнктов, аспирантов, курсантов, студентов и слушателей (15 апреля 2011 г.). - Самара: Изд-во Самар. юрид. ин-та ФСИН России, 2011. - էջեր 201-204:

կիրառման:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերլուծությունից երևում է, որ անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս ոչ միշտ է ուշադրություն դարձվում դաստիարակչական ներգործության միջոցներ կիրառելու անհրաժեշտությանը: Այսպես, նախատեսվում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցում, սակայն ոչինչ ասված չէ նրա նկատմամբ դաստիարակչական ներգործության միջոցներ կիրառելու մասին: Ակնհայտ է, որ դա բավարար չէ, որպեսզի կարողանանք խոսել անչափահասի լիարժեք վերադաստիարակման մասին: Անհրաժեշտ է ուղղակիորեն նշել, որ քրեական հետապնդման դադարեցումը պետք է հանգեցնի դաստիարակչական ներգործության միջոցների կիրառմանը, այնպես ինչպես դա ուղղակի նախատեսված է Նախագծի 425 հոդվածով: Չէ՞ որ հենց միայն հանդիպումները, զրույցները տուժողի հետ ստիպում են անչափահասին վերափոխվել կատարվածը, զղջալ, փոխել սեփական վերաբերմունքը իր վարքագծին, գործողություններին և շրջապատի մարդկանց հետ հարաբերություններին, ինչն արդեն ինքնըստինքյան դաստիարակման գործընթացի հիմքն է, որի արդյունքում նպատակ է դրվում փոխելու անչափահասի հիմնական դիրքորոշումները՝ դարձնելով դրանք սոցիալապես նշանակալի: Հենց այդ պատճառով էլ անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական մեխանիզմը պետք է կառուցվի հաշվի առնելով վերականգնողական արդարադատության հիմնական սկզբունքներն ու պահանջները:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանում առկա են հակասական իրավակարգավորումներ հանցանք կատարած անձի տարիքի չափանիշով պայմանավորված: Բանն այն է, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսված է քրեական հետապնդումը և քրեական գործով վարույթը կարճելու այնպիսի հիմք, ինչպիսին արարքում հանցակազմի բացակայությունն է, որը ներառում է նաև հանցագործություն կատարած անձի քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելը, մինչդեռ նույն հոդվածում առանձին կետով սահմանված է քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու այնպիսի հիմք, ինչպիսին քրեական պատասխանատվության տարիքի հասած

չլինելն է (կետ 9-րդ):

ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու տրամաբանությունը միանգամայն հասկանալի է և համապատասխանում է ինչպես քրեական իրավունքի, այնպես էլ քրեական դատավարության ընդհանուր դոկտրինին: Քննարկվող հարցի տեսանկյունից այդ դրույթի էությունն այն է, որ հանցագործությունը կատարելու պահին քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձը չի կարող դիտվել իբրև հանցագործության սուբյեկտ, ուստի և առկա չէ հանցակազմը: Հետևաբար, նշյալ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը հնարավոր է այն անչափահասների նկատմամբ, որոնք հանցագործությունը կատարելու պահին չեն հասել քրեական պատասխանատվության տարիքի: Քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելը առաջին հայացքից թվում է ակնհայտ, ուստի և հատուկ նորմատիվ ամրագրում չպահանջող մի բան¹¹⁹: Այդ առումով հարց է ծագում. ինչու է օրենսդիրը հատուկ նորմ ներառել ևս մեկ անգամ նորմատիվ կերպով ամրագրելու համար այն, ինչ առանց այդ էլ ակնհայտորեն բխում է քրեական և քրեադատավարական օրենսդրության արդեն իսկ գոյություն ունեցող նորմերի համակարգից: ՀՀ քր.դատ.օր.-ում նշյալ նորմը ներառելու նպատակը անչափահասների՝ միջազգային օրենսդրության մեջ ամրագրված իրավունքներն ու օրինական շահերը առավելագույնս երաշխավորելն էր: Չնայած քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ակնհայտությանը՝ օրենսդրությունը լրացուցիչ ձգտում է երաշխավորել հնարավոր սխալներից և չարաշահումներից¹²⁰: Ընդ որում, այն ձգտում է ընդգծել, որ անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանությունն իր համար պաշտպանության հատուկ օբյեկտ է, և որ նրա նկատմամբ ցանկացած ոտնձգություն անթույլատրելի է: Քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադար-

¹¹⁹ Ст'ю, Капустин Д.Ф. Прекращение уголовного преследования в отношении лиц не достигших возраста привлечения к уголовной ответственности // Всероссийская научно-практическая конференция курсантов, слушателей, студентов и адъюнктов "Преступность в России: состояние и проблемы борьбы с ней". Сборник материалов. - Воронеж: Изд-во Воронеж. ин-та МВД России, 2008. - էջեր 89-90:

¹²⁰ Ст'ю, Семьянова И.С. Прекращение уголовного дела (уголовного преследования) в отношении лиц, не достигших возраста уголовной ответственности // Российский следователь. - М.: Юрист, 2003, № 7. - էջեր 21-24:

րեցնելիս կարևոր է մտավոր աստիճանի հանգամանքը, որը ենթադրում է անչափահասի կողմից իր կատարած արարքի հասարակական վտանգավորության չափի գիտակցումը: Հենց այդ բանին է առանձնահատուկ ուշադրություն դարձվում ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածի 9-րդ կետում, երբ նշվում է, որ անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքի:

Նշված հարցի հետ կապված օրենսդրության մեջ առկա է անհատակություն և այդ կապակցությամբ ուշագրավ է ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը: Մասնավորապես՝ «.... քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Զ.Դավթյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ՝ հիմք ընդունելով այն, որ անչափահաս Ս.Գրիգորյանը հանցագործության կատարման պահին եղել է 12 տարեկան, այսինքն՝ տվյալ հանցակազմի սուբյեկտ չի հանդիսացել, իսկ անչափահաս Ն.Գրիգորյանի արարքը թեև ձևականորեն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, սակայն հափշտակված գույքի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, բացի այդ Գ.Գրիգորյանը 9 տարեկան է և նույնպես չի հանդիսանում վերը նշված հանցակազմի սուբյեկտ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): 22. Սույն որոշման 20-րդ կետում առկա իրավական դատողությունների և սույն որոշման 21-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների համադրման և վերլուծության արդյունքում առերևույթ ակնհայտ է դառնում, որ 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ քրեական գործը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով (արարքում հանցակազմի բացակայություն), որը, ինչպես նշվեց վերևում, քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման «արդարացնող» հիմք է և բացառում է այս հիմքով արդարացված անձի վրա իրավական կամ բարոյական բնույթի որևէ պահանջ դնելը»:

Սակայն նույն որոշման մեջ նշվել է, որ անչափահասներ Ս.Գրիգորյանը և Ն.Գրիգորյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված գողության հանցակազմի սուբյեկտ չեն: Որոշման մեջ առկա այս ձևակերպումը ենթադրում է, որ սույն

քրեական գործի հարուցումը մերժելու հիմք է հանդիսացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, որը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման «ոչ արդարացնող» հիմք է և չի բացառում անձի վրա որոշակի իրավական կամ բարոյական բնույթի պարտականություններ դնելը: Վերոշարադրյալ դատողությունների լույսի ներքո ինչպես բողոքաբերին, այնպես էլ նրա անչափահաս երեխաններին կարող է անհասկանալի մնալ, թե սույն գործով ինչ հիմքով է մերժվել քրեական գործի հարուցումը՝ «արդարացնող», թե «ոչ արդարացնող», որը նրանց համար կարող է անցանկալի հետևանքներ առաջացնել: 23. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անչափահասների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու հիմքի հստակեցումն առաջին հերթին կարևոր է նրանց իրավունքների, մասնավորապես, բողոքաբերի կողմից մատնանշված ազատության և անձեռնմխելիության իրավունքի (ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված) ապահովման նկատառումով: Մինչդեռ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ո՛չ Առաջին ատյանի դատարանը և ո՛չ էլ Վերաքննիչ դատարանը չեն պարզել վիճարկվող որոշման հետևանքով անչափահաս երեխաների իրավունքների հնարավոր խախտման փաստի առկայությունը կամ բացակայությունը (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը ներպետական օրենսդրության պահանջներից բացի, հիմնված է «Երեխաների իրավունքների մասին» Նյու Յորքի 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1992թ. հունիսի 1-ին) 3-րդ հոդվածի 1-ին մասի վրա, որի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասը մասնակից պետություններին պարտավորեցնում է երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հո-

գատարությամբ, նկատի ունենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկվում են համապատասխան բոլոր օրենսդրական ու վարչական միջոցները»¹²¹:

ՀՀ Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը մեզ հիմք է տալիս պնդելու, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 9-րդ կետը պետք է վերացնել, քանի որ այն բարենպաստ չէ անչափահաս մեղադրյալի համար:

Պետք է նշել, որ դադարեցման ենթակա են նաև քրեական հետապնդումները այն անչափահասների նկատմամբ, որոնք թեև հասել են քրեական պատասխանատվության տարիքի, սակայն հոգեկան ոչ լիարժեք զարգացման պատճառով, որը կապված չէ հոգեկան հիվանդության հետ, չեն կարողացել ամբողջովին գիտակցել իրենց գործողությունների փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը¹²²: Այսինքն՝ օրենսդրի համար հանցակազմի բացակայության պատճառով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին հարցը լուծելիս կարևոր է հենց մտավոր աստիճանի հանգամանքը, որը ենթադրում է համապատասխան անչափահասի ունակությունը լիարժեքորեն գիտակցելու իր գործողությունների փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը: Դա կարևոր է, քանի որ, եթե անչափահասը չի գիտակցում իր գործողությունների փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, ապա դաստիարակչական ներգործության միջոցներն ու քրեական պատիժը դրական նշանակություն չեն ունենա: Ավելին, անչափահասը, չհասկանալով դրանք, կարող է ընկալել որպես թշնամական վերաբերմունք իր նկատմամբ, ինչը կարող է հրահրել այդ անչափահասին դրսևորելու նոր ագրեսիա, ինչպես նաև նպաստել նրա մեջ կայուն հակասոցիալական դիրքորոշումների ձևավորմանը:

Միջազգային օրենսդրության և աշխարհի տարբեր երկրների քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առկա է անչափահասների նկատմամբ օրենսդրությունը հետզհետե ավելի մարդասիրական դարձնելու

¹²¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0014/11/09 որոշումը:

¹²² Տե՛ս, Храмцова В.В. Проблемы прекращения уголовного преследования в отношении несовершеннолетних в связи с отставанием в психическом развитии // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов XII международной научно-практической конференции (19-20 февраля 2009 г.). - Красноярск: СибЮИ МВД России, 2009, Ч. 2. - էջեր 240-243:

միտում: **Ընդամին, ամենաշարը կարևորվում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը քրեական պարասխանաբանության տարիքի հասած չլինելու, ինչպես նաև անչափահաս լինելու պարճառով դադարեցնելու մասին նորմերը արդարադատության մեխանիզմի մեջ ներառելը:** Ընդ որում, առաջին դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում է արդարացող հիմքով՝ հանցակազմի բացակայության կապակցությամբ: Երկրորդ դեպքում՝ ոչ արդարացնող հիմքով՝ անչափահաս լինելու կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության հետագա զարգացման համար առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում քրեական հետապնդման դադարեցումը մեղադրյալի անչափահաս լինելու կապակցությամբ: Ընդ որում, առավել ընդունելի պետք է համարել նշյալ գործողության իրականացումը ոչ միայն անչափահաս լինելու հիման վրա, այլև անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելով դաստիարակչական ներգործության միջոցներ կիրառելու կապակցությամբ: Այսինքն՝ հարկավոր է հաշվի առնել անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության հարկադրական միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մեխանիզմի նորմատիվ ամրագրման այլ երկրների օրենսդրական փորձը:

Ըստ այդմ՝ անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմը՝

1) պետք է կիրառվի քրեական դատավարության բոլոր փուլերում, քանի որ դա առավելագույնս կերաշխավորի անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը,

2) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը պետք է կայացնեն պաշտոնատար այն անձինք, որոնք իրականացնում են գործի վարույթը քրեական դատավարության համապատասխան փուլում,

3) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում ընդունելիս պետք է հաշվի առնել տուժողի կարծիքը և դրա հետ կապված՝ անչափահաս մեղադրյալի գործողությունները՝ ուղղված տուժողի հետ հաշտվելուն,

4) դադարեցնելու մասին որոշում կարող է ընդունվել միայն անչափահաս մեղադրյալի և նրա օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ,

5) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում ընդունելիս պետք է հաշվի առնել նաև այն սոցիալական միջավայրի յուրահատկությունները, որում ապրում է և կշարունակի ապրել անչափահաս մեղադրյալը,

6) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման համար անհրաժեշտ է ներգրավել նաև այնպիսի մասնագետների, ինչպիսիք են հոգեբանն ու մանկավարժը, խնամակալության մարմինների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները, որոնցում սովորում է անչափահասը,

7) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ պետք լինի դաստիարակչական ներգործության համապատասխան միջոց կիրառելու ցուցում:

Եթե քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմը հաշվի առնի վերոնշյալ բոլոր պահանջները, ապա այն լիովին կհամապատասխանի անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման գոյություն ունեցող պահանջներին: Դրա արժեքը առաջին հերթին կլինի այն, որ դրա ընդունմամբ կդրվեն ոչ թե հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասների նկատմամբ պատժիչ ներգործության հիմքերը, այլ նրանց վրա դաստիարակչական ներգործության հիմքերը: Դրանից կշահի ոչ միայն անչափահաս մեղադրյալը, այլև հասարակությունը, պետությունը, քանի որ նրանք չեն կորցնի իրենց ակտիվ անդամին, որը հետագայում իր գործողություններով, աշխատանքով կարող է բերել զգալի օգուտներ:

Սակայն նշյալ նորմի ընդունումը, հետագայում նաև կիրառումը իմաստ ունեն միայն դաստիարակչական ներգործության միջոցների լավ մշակված ինստիտուտի առկայության դեպքում, որն արդյունավետ կլինի անչափահասի համար, որի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը: Առանց նման ինստիտուտի անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելն անիմաստ է, որովհետև զուրկ է սոցիալապես նշանակալի նպատակից: Ուստի օրենսդրի խնդիրն է՝ դաստիարակչական ներգործության միջոցների կիրառմամբ անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մեխանիզմ մշակելուց զատ, ստեղծել դաստիարակչական ներգործության միջոցների ինստիտուտ: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ պահանջներ, որոնք կարող են արդյունավետ դարձնել նշյալ միջոցների կիրառումը և թույլ տալ վերադաստիարակել համապատասխան անչափահասին՝ դարձնելով

նրան հասարակությանը պիտանի անդամ: Այսինքն՝ վերոնշյալ միջոցների կիրառումը պետք հիմք դառնա անչափահասի մեջ անձի սոցիալապես արժեքավոր հատկանիշների ձևավորման համար:

4.2. Դատադատական ներգործության հարկադրանքի միջոցները որպես քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական պատասխանատվությունից և պարտից ազատելու դատավարական հիմք

Քրեադատավարական օրենսդրությունը անչափահաս լինելը որպես քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է դիտում ոչ թե այն բանի համար, որ պարզապես այն համարում է պետության և հասարակության կողմից ոչնչով չհիմնավորված արտոնություն, որը տրամադրվում է միայն այն պատճառով, որ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը չի հասել չափահասության տարիքի: Պատճառն ավելի պրագմատիկ է, այսինքն՝ անչափահաս լինելը օբյեկտիվ ցուցիչն է այն բանի, որ համապատասխան անձի հոգեկանը դեռևս գտնվում է զարգացման փուլում, չկան վերջնականորեն ձևավորված դիրքորոշումներ ու կարծրատիպեր, ինչը հնարավոր է դարձնում վերադաստիարակելու տվյալ անձին¹²³: Հաճախ վերադաստիարակելու համար բավական է նման անչափահասի սոցիալական միջավայրը փոխելը կամ առողջացնելը: Անչափահասի նման դյուրագոյությունը թույլ է տալիս նրա նկատմամբ կիրառել ներգործության այնպիսի ձևեր, որոնց նպատակը հասարակության կողմից խրախուսելի վարքի չափանիշների նկատմամբ նրա հակասոցիալական դիրքորոշումները և կարծրատիպերը փոխելն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 443 հոդվածը սահմանում է անչափահասին պատժից ազատելու և դաստիարակչական միջոցներ կիրառելու հնարավորություն, որը վերաբերում է միայն դատարանում դատավճիռ կայացնելու հետ կապված:

Ի տարբերություն քրեական դատավարության գործող օրենսգրքի՝ Նախագծով

¹²³ Ст'ю Кабельков С. Н. Прекращение уголовного дела в отношении несовершеннолетнего с применением принудительных мер воспитательного воздействия // Обеспечение прав и законных интересов несовершеннолетних: научные статьи и материалы всероссийского круглого стола, проведенного 16 ноября 2011 года на базе юридической клиники Воронежского института МВД России. - Воронеж: Воронеж. ин-т МВД России, 2012. – էջեր 9-13:

անչափահասի նկամամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորությունները ընդլայնվել են: Այսպես Նախագծի 423 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե մինչդատական վարույթում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի քննության ընթացքում պարզվում է, որ առաջին անգամ հանցանք կատարած անչափահաս մեղադրյալի ուղղումը հնարավոր է առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, ապա հսկող դատախազը, քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և հարուցում է անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն, որը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է դատարանին: Այս առումով, ինչպես տեսնում ենք Նախագիծը երկրորդ պայման է հռչակում դաստիարակչական ներգործության միջոցներ կիրառելը: Հասարակությունն ու պետությունը, նույնիսկ ի դեմս ճիշտ ուղուց շեղված անչափահասի, ցանկանում են տեսնել ապագայում իրենց համար պիտանի անդամի:

Ընդամին՝ չի կարելի չափազանցնել անչափահաս իրավախախտների դյուրագրվողականությունը դաստիարակչական ներգործության միջոցների նկատմամբ: Չէ՞ որ այդ անչափահասները թույլ են տվել ոչ թե վարչական իրավախախտում, այլ կատարել են հանցագործություն, թեկուզև ոչ մեծ և միջին ծանրության: Իսկ դա նշանակում է, որ նրանք ունեն վարքի շեղումներ և տարբերվում են այլ անչափահասներից այն բանով, որ նրանց հակահասարակական դիրքորոշումների վերափոխման համար պահանջվում են պետության և հասարակության որոշակի ջանքերը: Այսինքն՝ դաստիարակչական նպատակներով կիրառվող ներգործության ոչ բոլոր միջոցները կարող են լինել արդյունավետ: Հենց այդ նկատառումով է ՀՀ քրեական օրենսգրքի 91 հոդվածը, ՀՀ քր. դատ. օր-ի 443, նախագծի 423 հոդվածը նախատեսում են դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ, այսինքն՝ անչափահասի վրա ազդելու հատուկ միջոցներ, որոնց կիրառումը ոչ միշտ է համաձայնեցվում հենց անչափահասի հետ:

Որպես քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք դաստիարակչական ներգործության միջոցները հարկադրաբար կիրառելու տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ այն իրենից ներկայացնում է գործողություններ, որոնք պիտի կատար-

վեն ապագայում: Նշյալ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու որոշում ընդունելու պահին այդ գործողությունները դեռևս բացակայում են: Այդ առումով նշյալ նորմի կիրառման պրակտիկայում առաջանում են բազմաթիվ խնդիրներ¹²⁴: Դրանցից մեկը կապված է համապատասխան անչափահասին վերադաստիարակելու նպատակին չհասնելու ռիսկի հետ: Չէ՞ որ հնարավոր չէ երաշխավորել, որ կիրառվող այս կամ այն դաստիարակչական բնույթի միջոցները անպայմանորեն կհանգեցնեն անչափահասի մեջ անհրաժեշտ, սոցիալապես արժեքավոր հատկանիշների ու դիրքորոշումների ձևավորմանը: Հետևաբար, անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը որոշելն ինքնին գնահատողական գործողություն է: Դա միշտ ուղեկցվում է բազմաթիվ դժվարություններով, երբեմն նաև այն անձանց կողմից չարաշահումներով, որոնք օժտված են քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու իրավունքով:

Այսինքն՝ վերոնշյալ դատավարական գործողությունը կատարելիս օրենքով ստեղծվում են պայմաններ իրավապահպան մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից կամայականություններ թույլ տալու համար:

Համաձայն Նախագծի 423 հոդվածի 1-ին մասի՝ անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորության մասին հարցը վճռելու իրավունքը վերապահվում է քննիչի միջնորդությամբ հսկողություն իրականացնող դատախազին: Այսինքն՝ այն, թե կոնկրետ անչափահաս իրավախախտի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները կլինեն արդյունավետ, թե ոչ, և կկիրառվեն արդյոք դրանք նրա նկատմամբ, թե ոչ, որոշում է հսկող դատախազը: Նրա սուբյեկտիվ կարծիքը հիմք է դառնում անչափահասի համար ճակատագրական այդ հարցը լուծելու համար: Միանգամայն ակնհայտ է, որ դա բարեբեր հող է կամայականությունների համար, ուստի և Նախագծի նշյալ նորմը խոցելի է: Առկա մտավախություններով հանդերձ, կարծում ենք, որ Նախագծում նշված նորմի առկայությունը կերաշխավորի անչա-

¹²⁴ Ст'ю, Дикарев И.С. Прекращение уголовного преследования по делу, направляемому в суд для применения принудительной меры воспитательного воздействия к несовершеннолетнему // Проблемы освобождения от уголовной ответственности и наказания по законодательству Республики Беларусь, России и Украины: уголовно-правовой и уголовно-процессуальный аспекты: сборник статей. - Волгоград: Изд-во ВолГУ, 2012. - էջեր 267-275:

փահասի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, և կտա նրան միջազգային նորմատիվ ակտերով երաշխավորված իրավունք վերադաստիարակվելու և պետության ու հասարակության կյանքին վերստին ներգրավվելու հնարավորություն:

Սակայն քննարկվող հիմքի առկայության դեպքում բավականին դժվար է ձերբազատվել կամայականություններից, քանի որ այդ ընթացքում նախատեսվող գնահատողական գործունեության բնույթը սուբյեկտիվ է, ասել է թե՛ ենթադրվում է նման կամայականություն: Վերահսկել այն եզրակացության հիմնավորվածությունը, թե արդյունավետ կլինեն անչափահասի նկատմամբ կիրառվող դաստիարակչական ներգործության որոշակի հարկադրանքի միջոցները բավականին բարդ է, գրեթե անհնարին, քանի որ վերահսկող սուբյեկտն իր ձեռքի տակ չի ունենա այնպիսի չափորոշիչ, որի հիման վրա կարողանա պարզել համապատասխան լիազորված պաշտոնատար անձի գնահատողական գործունեության մեջ կամայականության առկայությունը կամ բացակայությունը¹²⁵: Չէ՞ որ հենց դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցի արդյունավետության հավանականությունը տեսական է, լոկ ենթադրական, ինչը հնարավոր է դարձնում սխալմունքը այն ընտրելիս: Ակնհայտ է, որ այդ բավականին բարդ հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է ինչ-որ ավելի շոշափելի չափորոշիչ, որի առկայությունը կամ բացակայությունը ոչ ոքի մեջ կասկած չհարուցի: Դրա սահմանման բացակայությունը քրեադատավարական օրենսդրությունում այն որոնելու պահանջ է առաջացնում, ընդ որում՝ ոչ միայն տեսության մեջ, այլև իրավապահ մարմինների պրակտիկայում:

Այն բանից, որ Նախագծի նշյալ նորմը հնարավոր է համարում դադարեցնել քրեական հետապնդումը միայն այն անչափահասների նկատմամբ, որոնց առումով դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները արդյունավետ կլինեն, միանգամայն տրամաբանորեն կարելի է բխեցնել այն հետևությունը, թե ինչ հատկանիշներով նա պետք է օժտված լինի: Անկասկած՝ դրանք պետք է լինեն հասարակայնորեն օգտակար, ինչպես նաև վկայեն այն մասին, որ անչափահասը լիովին ընկալունակ

¹²⁵ St'а Быданцев Н.А. Прекращение уголовного преследования в отношении несовершеннолетнего с применением принудительной меры воспитательного воздействия в свете альтернатив разрешения правовых конфликтов // Альтернативы юридической ответственности как способы преодоления правовых конфликтов. Сборник трудов Региональной научно-практической конференции с международным участием, 13-14 апреля 2006 г.. - Новокузнецк: НФИ КемГУ, 2007. էջեր 47-50:

կլինի իր նկատմամբ կիրառվող դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներին: Նման հատկանիշների առկայության մասին կարելի է հետևություն անել առաջին հերթին այն բանից, թե նախկինում անչափահասը հանցանք գործե՞լ է, թե՞ ոչ, կամ գոնե իրավախախտում թո՞ւյլ է տվել: Այսինքն՝ դա թույլ է տալիս պարզել՝ արդյոք ունի՞ր նա կայուն հակահասարակական դիրքորոշում, որը կարող է անօգուտ դարձնել նրա նկատմամբ դաստիարակչական ներգործությունը: Միևնույն ժամանակ, այն բանից, որ նախկինում անչափահասը հակաօրինական արարքներ թույլ չի տվել, կարելի է հետևություն անել նրա կողմից կատարած հանցագործության պատահական բնույթի մասին, հետևաբար և՛ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառմամբ՝ նրա վերադաստիարակման հնարավորության մասին:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորությունը ենթադրում է միանգամայն որոշակի հատկանիշների առկայություն, որոնք անչափահասի անձը դարձնում են դյուրահակ վերադաստիարակվելուն: Ընդ որում, ակնհայտ է, որ բոլոր այդ հատկանիշները սահմանելն ու օրենքում նորմատիվ կերպով ամրագրելը անհնար է, քանի որ այդ հատկանիշների արժեքավորությունը պետք է գնահատել՝ կախված միանգամայն որոշակի իրավիճակից և ինքնին անչափահասի անձնային յուրահատկությունից: Այդ նպատակին հասնելու համար օգտագործվում են բնութագրեր, որոնք քննիչները ստանում են անչափահասների կատարած հանցագործությունները քննելիս: Նման բնութագրեր տալիս են ուսումնական, ուղղիչ հաստատությունները, ինչպես նաև ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որտեղ սովորում կամ աշխատում են անչափահասները: Սակայն բնութագրերը բնավ էլ ոչ միշտ են օբյեկտիվորեն արտացոլում անչափահասի բնավորության և խառնվածքի գծերը, քանի որ, ցավոք, նրանք, ովքեր պատրաստում են նշյալ բնութագրերը, ձևական մոտեցում են ցուցաբերում այդ գործին: Երբեմն նման բնութագրերը գրվում են նույն կադապարով, ուստի և չեն արտացոլում անչափահասի իրական հատկանիշները: Այսպես, միևնույն ուսումնական հաստատությունը տարբեր անչափահասների տալիս է համանման բնութագրեր, որոնցում թվարկվում են այնպիսի դրական հատկանիշներ, ինչպիսիք են՝ «լավ ընկեր է», «հարգում է մեծերին», «կատարում է տրված հանձնարարությունները» և այլն՝ անկախ իրականում տվյալ անչափահասին բնորոշ դրական և -

բացասական հատկանիշներից: Ակնհայտ է, որ նման բնութագրերը իրենց մեջ որոշակի վտանգ են թաքցնում, այսինքն՝ եթե դրանք դնենք քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման հիմքում, ապա բավականին կմեծանա սխալվելու հավանականությունը: Ըստ այդմ, կարծում ենք, ճիշտ կլինի, առաջնորդվել ոչ միայն նման բնութագրերով, այլև հարցաքննել անչափահասի ազգականներին, մտերիմներին նրա վարքի, խառնվածքի գծերի, շրջապատի մարդկանց հետ հարաբերությունների առանձնահատկությունների մասին: Բացի այդ, անհրաժեշտ է ներգրավել նաև այլ բնութագրական նյութեր: Օրինակ՝ շնորհակալագրեր, որոնք կարող էին տրված լինել անչափահասին, խրախուսական ինչ-որ պարգևներ, որոնք համապատասխան ձևով արձանագրված լինեն, փաստաթղթեր, որոնք կհաստատեն անչափահասի մասնակցությունը ինչ-որ բարեգործական կամ հասարակայնորեն օգտակար ակցիաների և այլն: Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորության մասին հարցը որոշելիս պետք է վերլուծվի վերոթվարկյալ ամբողջ նյութը, որի հիման վրա պետք է գնահատական տրվի վերադաստիարակման հնարավորությանը դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

Կարծում ենք, որ հսկող դատախազն իր որոշման մեջ պետք է պարտադիր նշի այն գծերն ու հատկանիշները, որոնց առկայությունը թույլ է տալիս հուսալ, որ վերադաստիարակելը հնարավոր է, որովհետև քրեական հետապնդումը կարող է դադարեցվել միայն անչափահասի միանգամայն որոշակի հատկանիշների ու գծերի առկայության դեպքում: Ավելին, դրանց բացակայությունը և որոշակի բացասական հատկանիշների առկայությունը, ընդհակառակը, հանգեցնում են քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելուց հրաժարվելուն: Նման հատկանիշները կարող են լինել բազմաթիվ և դրանց արժեքավորությունը վերադաստիարակման համար պետք է բխեցնել կոնկրետ իրավիճակի առանձնահատկություններից և հենց անչափահասի անձնային հատկություններից: Իհարկե, այս փաստարկի համոզիչ լինելը կասկածից դուրս է: Դրա հետ մեկտեղ, հավանական կամայականությունը սահմանափակելու և սխալները կանխելու համար ավելորդ չի լինի ամրագրել քրեադատավարական օրենքում անձնային հատկանիշների հաշվառման անհրաժեշտությունը, որոնք կօգնեն քննիչին և հսկող դատախազին եզրակացնելու, թե հնարավոր է արդյոք վերադաս-

տիարակել անչափահասին՝ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Այդ նպատակով ավելորդ կլինի թվարկել ինչ-որ հատկանիշներ կամ գծեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելիս, բավական է ուղղակի նշել, որ քննիչը և հսկող դատախազը նշյալ հարցը լուծելու համար պետք է հավաքի և հետազոտի անչափահասի անձի մասին նյութեր և միայն դրա հիման վրա հետևություն անի դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորության վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ Նախագծի 423 հոդվածի 1-ին մասը ուղղակիորեն նշում է, որ քննիչը և դատախազը պետք է պարզեն անչափահասի ուղղվելու հնարավորությունը առանց պատիժ կիրառելու: Նման ձևակերպումը ցույց է տալիս, որ քրեական հետապնդումը դադարեցնել հնարավոր է միայն այն անչափահասների նկատմամբ, որոնց անձնային հատկանիշները վկայում են նրանց ուղղվելու հնարավորության մասին: Այսինքն՝ փաստորեն այդ նորմը պարունակում է ցուցում առ այն, որ անհրաժեշտ է համակողմանիորեն հետազոտել անչափահաս մեղադրյալի (կասկածյալի) անձը՝ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելու համար: Անչափահասը պետք է օժտված լինի այնպիսի հատկանիշներով, որոնք կվկայեն, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց հասարակությունից մեկուսացնելու, և կիրառվելիք միջոցները կարող են արդյունավետ լինել դրա համար:

Անչափահաս մեղադրյալի ուղղվելու հնարավորության մասին հետևություն արվում է ոչ միայն նրա ունեցած հատկանիշների կամ գծերի վերլուծությունից: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին հարցի լուծման համար կարևոր է նաև այն, թե ինչպես է նա դրսևորում իրեն նախաքննության ընթացքում¹²⁶: Մասնավորապես, միշտ հաշվի է առնվում անչափահասի ձգտումը օժանդակելու անցկացվող նախաքննությանը, քրեական գործով բացահայտված ճշմարտությանը որևէ կերպ հակադարձելուց հրաժարվելը: Բավականին հաճախակի են դեպքերը, երբ անչափահասը գիտակցում է իր կատարած հանցագործության ամբողջ ծանրությունը միայն այն բանից հետո, երբ տեսնում է դրա հետևանքները և շրջապատի վերաբերմունքը կատարվածին: Դա յու-

¹²⁶ Տե՛ս, Тимошенко С.Е. Источники и средства изучения личности несовершеннолетнего, совершившего преступление: теоретический аспект // Вестник Омской юридической академии. - Омск: НОУ ВПО "Омский юрид. ин-т", 2013, № 1 (20). - էջեր 77-80:

րատեսակ մեխանիզմ է դառնում, որը խթանում է քննադատաբար վերաիմաստավորելու տեղի ունեցածը, ինչը հնարավորություն է ընձեռում անչափահասին իր կատարածը դիտելու միանգամայն այլ, նախկինից տարբերվող դիտանկյունից: Վերաիմաստավորման արդյունքը դառնում են նախաքննության ընթացքում կատարվող գործողությունները: Անչափահասը կատարում է գործողություններ, որոնցից երևում է, որ նա զղջում է իր կատած հանցագործության համար: Այդ զղջման մասին կարծիք է կազմվում ոչ թե անչափահասի խոսքերից, այլ իրականացվող նախաքննության ընթացքում նրա կողմից կատարվող գործողությունների վերլուծությունից: Դրանք գործողություններ են, որոնցով նա օժանդակում է բացահայտելու կատարած հանցագործության բոլոր հանգամանքները և դրան այս կամ այն կերպ մեղսակից բոլոր անձանց: Դրանց շարքում կարելի է նշել կատարած հանցավոր գործողությունների վերաբերյալ ճշմարիտ ցուցմունքները: Բացի այդ, զղջումը կարող է արտահայտվել նաև, օրինակ, այլ քննչական գործողություններին ու օպերատիվ-հետախուզական միջոցառումներին օժանդակմամբ, որոնք ուղղված են կատարված հանցավոր գործողությունների մյուս մասնակիցներին բացահայտելուն: Դրանք կարող են լինել նաև գործողություններ՝ ուղղված հանցագործության ժամանակ տուժողից խլված ունեցվածքի որոնմանն օժանդակելուն: Այսինքն՝ զղջումը պետք է ենթադրի անչափահասի այնպիսի գործողությունները, որոնք միանշանակորեն վկայում են կատարած հանցագործության նկատմամբ նրա վերաբերմունքի փոփոխության մասին:

Նախագծի նշված հոդվածում անմիջականորեն ոչինչ չի ասվում քրեական դատավարությունը դադարեցնելու հարցը լուծելու համար վերոնշյալ գործողությունների և զղջման անհրաժեշտության մասին: Նկատի առնելով, որ Նախագծի 423 հոդվածում սահմանված է, որ քննիչը և դատախազը հավաքած նյութերի հիման վրա պետք է հետևություն անեն անչափահասի ուղղվելու հնարավորության մասին, միանգամայն ակնհայտ է, որ գործողությունները, որոնցում դրսևորվում է գործուն զղջալը, դասվում են նշյալ հիմքին: Ուստի իմաստ չունի անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերն ու կարգը սահմանող նորմում առանձնահատուկ շեշտել նրա գործուն զղջման մասին: Սակայն նախաքննության պրակտիկան պետք է հաշվի առնի դա, որպեսզի դրա հիման վրա հետևություն անի անչափահասի նկատմամբ դաստիա-

րակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորության մասին:

Հատուկ պետք է նշել նաև անչափահասի պատճառած վնասը ինքնական հատուցելու կամ հասցրած վնասն իր գործողություններով հարթելու մասին: Այդ գործողությունները ևս միշտ հաշվի են առնվում անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու պրակտիկայում՝ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Այդ միջոցների արժեքն այն է, որ անչափահասը դրանք կատարելով ցուցադրում է իր բացասական վերաբերմունքը ինչպես իր գործած հանցավոր արարքի հետևանքներին, այնպես էլ բուն հանցավոր գործողություններին: Դա նշանակում է, որ նա արդեն փոխում է իր գնահատականները կատարվածին, ինչն ուղղվելու և այդուհետ ոչ մի նման արարք թույլ չտալու նրա ցանկության անվիճելի վկայությունն է¹²⁷: Ընդ որում, հատկապես արժեքավոր են անչափահասի գործողությունները, երբ նա հարթում է հասցրած վնասը իր գործողություններով՝ չդիմելով ծնողների կամ նրանց փոխարինողների օգնությանը: Օրինակ՝ երբ անչափահասը վերանորոգում է նրանց վնասված գույքը կամ սեփական աշխատավարձից փոխհատուցում է պատճառած վնասը: Այդ դեպքերում անչափահասը հրաժարվում է իր որոշակի անձնական բարիքներից հանուն այն բանի, որ հատուցի իր պատճառած վնասը: Նման գործողությունները վկայում են, որ նրա մեջ արդեն տեղի են ունենում միանգամայն որոշակի փոփոխություններ, որոնք ուղղվելու գործընթացի մեկնարկի վկայություն են: Հետևաբար, նման գործողությունների առկայությունը մեծ հավանականությամբ ցույց է տալիս, որ նրա նկատմամբ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառումն արդյունավետ կլինի:

Վերոթվարկյալ բոլոր հանգամանքները, որ վկայում են առանց պատիժ կիրառելու անչափահասի ուղղվելու հնարավորության մասին, միշտ հաշվի են առնվում քննիչների կողմից քրեական հետապնդումը դադարեցնելու մասին հարցը լուծելիս¹²⁸: Ընդ որում, քննիչների կողմից մշտապես հենց այդ հանգամանքները հետազոտելը թույլ է տվել քրեական դատավարության տեսությանը առաջ քաշել անչափահաս մեղադրյալի (կաս-

¹²⁷Տե՛ս, Коробкин А.В. Формирование механизма возмещения вреда, причиненного преступлениями несовершеннолетних, в рамках восстановительного правосудия // Российский судья. – М.: Юрист, 2014, № 8. Էջեր 28-30:

¹²⁸ Տե՛ս, Овсянников И. Установление возможности исправления несовершеннолетнего без применения уголовного наказания: право или обязанность? // Уголовное право. – М.: АНО "Юридические программы", 2015, № 1. Էջեր 135-138:

կաճյալի) նկատմամբ քրեական հետապնդման դադարեցում կիրառելու պայմանները ընդլայնելու հարցը: Հօգուտ նման դիրքորոշման նշվող փաստարկներից մեկն այն է, որ օրենքում բոլոր այդ պայմանները կիրառելու ցուցման առկայությունը կստիպի քննիչին ավելի ուշադիր վերաբերվել անչափահասին բնութագրող ամբողջ նյութի հավաքմանն ու հետազոտմանը, ինչը թույլ կտա խուսափել սխալներից քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս: Անկասկած՝ նման փաստարկն ունի իմաստ այն առումով, որ անչափահաս մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցում կիրառելու մասին որոշումը լինի առավելագույնս օբյեկտիվ: Բայց պետք է նկատի ունենալ նաև այն, որ վերոթվարկյալ պայմանները, որոնք հաշվի են առնվում նախաքննության պրակտիկայում, քրեական հետապնդումը դադարեցնելիս բնավ էլ սպառիչ չեն: Կարող են լինել նաև այլ պայմաններ, որոնց առկայությունը ևս կարող է վկայել այն մասին, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատիժ կիրառելու, որոնք, սակայն, մինչև հիմա ուշադրության չեն արժանանում քննչական պրակտիկայի կողմից: Ուստի անհրաժեշտ կլինի պայմանների վերոթվարկյալ ցանկը շարունակ լրացնել: Իսկ անհարկի պաշտոնականացումը միշտ հանգեցնում է դատավարության ընթացքում առաջացած հարցերը լուծելուն անարդյունավետության: Նախագծի 423 հոդվածի նորմում տրված ձևակերպումը լիովին ի շահ պրակտիկայի է, քանի որ այն խրախուսում է քննիչներին ինքնուրույն լուծելու անձի այն հանգամանքների ու հատկանիշների մասին հարցը, որոնք վկայում են, որ անչափահասը կարող է ուղղվել առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու: Առավել ևս, որ այն կողմնորոշում է քննիչին՝ ուշադրության արժանացնելու կատարված հանցագործության բոլոր առանձնահատկությունները, ինչպես նաև կոնկրետ անչափահասի անձնային առանձնահատկությունները:

Անչափահասի նկատմամբ վերականգնողական արդարադատության ընթացակարգեր կիրառելու հնարավորության վերաբերյալ հարցը լուծելու համար պետք է հաշվի առնվեն որոշակի փաստեր և հանգամանքներ, որոնք կվկայեն անչափահաս մեղադրյալի (կասկածյալի) ուղղվելու հնարավորության մասին:

Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը որպես լրացուցիչ պայման ներառելը երաշխավորում է այդ դատավարական

գործողությունն իրականացնելու իրավունքով օժտված պաշտոնատար անձանց կողմից թույլ տրվելիք չարաշահումներից: Նման մոտեցումը, կարծում ենք, ամենաօպտիմալն է, քանի որ առավելագույնս հստակ է սահմանում ոչ միայն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է դադարեցվել քրեական հետապնդումը, այլև այն անձանց, որոնց նկատմամբ արդյունավետ կլինեն դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները: Ընդ որում, այդ նորմը անհնար է դարձնում քրեական հետապնդումը դադարեցնելը այն անչափահասների նկատմամբ, որոնք բազմիցս հանցագործություն կատարած լինելու պատճառով չեն կարող ուղղվել դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներով¹²⁹: Կարծում ենք՝ նման մոտեցումը անչափահասների նկատմամբ քրեական դատավարությունը դադարեցնելու մասին նորմը ձևակերպելիս առավել ռացիոնալ է:

ՀՀ քր.դատ.օր.-ի 443 հոդվածում նախատեսված է հնարավորություն՝ ազատելու անչափահասին պատժից դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելու կապակցությամբ: Նշյալ նորմը լիովին համապատասխանում է միջազգային իրավունքի բոլոր պահանջներին՝ ուղղված երեխաների առավելագույն պաշտպանությանը: Սակայն նշյալ նորմը ՀՀ քր.դատ.օր.-ում ներառելու ճիշտ լինելը որոշ կասկածներ է առաջացնում, որն իր հերթին չի առկախում նշյալ նորմը քրեադատավարական, այլ ոչ թե քրեական օրենսդրություն ներառելու իրավաչափության մասին հարցը: Այսպես, քրեական պատասխանատվությունից ազատվելը քննարկվում է ՀՀ քր.օր.-ի 11-րդ գլխում: Դա հետևանք է այն բանի, որ քրեական պատասխանատվությունից և քրեական պատժից ազատվելու ինստիտուտներն ավանդաբար դիտվում են որպես քրեական իրավունքի ինստիտուտներ: Անչափահասներին քրեական պատասխանատվությունից ազատելը քրեական իրավունքի այդ ինստիտուտի մասնակի հարցերից է, թեկուզև ներառված անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկություններին վերաբերող նորմերի համակարգ (ՀՀ քր.օր.-ի 14-րդ գլուխ), ուստի և դրա ընդհանուր դրույթները պետք է ամրագրվեն քրեական օրենսդ-

¹²⁹ St'а, Евстигнеев А.М. Рецидив или повторность? Механизм уголовно-правовой оценки неоднократных преступлений, совершаемых несовершеннолетними // Система исполнения наказаний и общество: проблема взаимодействия в современных условиях: материалы межвузовской научно-практической конференции (6-7 декабря 2012 г.). - Киров: Кировский филиал Акад. ФСИН России, 2012. էջեր 228-233:

րության նորմերում: Դա ակնհայտ է, ելնելով այն բանից, որ քրեական պատասխանատվությունից անչափահասին ազատելը իր բնույթով չի տարբերվում, օրինակ, գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելուց (<< քր.օր. հոդված 72): Այսինքն՝ քրեական պատասխանատվությունից անչափահասին ազատելը լոկ քրեական պատասխանատվությունից ազատելու ձևերից մեկն է, որի էությունն այն է, որ պետությունը հրաժարվում է հանցագործություն կատարած անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելուց:

Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվում է նրա նկատմամբ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելու կապակցությամբ: Բազմաթիվ երկրների քրեադատավարական իրավունքի նորմերում դաստիարակչական ներգործության միջոցներ կիրառելը դիտվում է որպես քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու հիմնական պայմաններից մեկը: Ընդ որում, ոչ մի երկրի օրենսդրության մեջ չեն սահմանվում, թե դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները ինչպես են հարաբերակցվում, օրինակ՝ քրեական պատժի հետ¹³⁰: Ըստ այդմ՝ առաջանում են բարդություններ հենց դրանց բնույթը որոշելու հարցում, ինչն իր հերթին դժվարացնում է այն հարցի լուծումը, թե կարելի՞ է արդյոք դրանց վերաբերյալ նորմերի համակարգը դիտել որպես իրավունքի ինքնուրույն ինստիտուտ: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները պետք է դիտել որպես անչափահաս մեղադրյալի (կասկածյալի) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմնական հիմք:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները ավանդաբար և ոչ անհիմն դիտվում են որպես յուրատեսակ հակապատկեր քրեական պատժին¹³¹: Այդ առումով դրանց հատկանիշները բնույթով ուղիղ հակադարձ են քրեական պատժին հատուկ հատկանիշներին: Եվ դա վերաբերում է դաստիարակչական ներգործության

¹³⁰ Տե՛ս, Калинина Т.М. Принудительные меры воспитательного воздействия: проблемы определения правовой природы // Уголовное право: стратегия развития в XXI веке: материалы Восьмой Международной научно-практической конференции 27-28 января 2011 г. - М.: Проспект, 2011. էջեր 314-317

¹³¹ Տե՛ս, Спивак С. Проблемы применения принудительных мер воспитательного воздействия и исполнения наказания несовершеннолетних // Уголовное право. - М.: АНО "Юридические программы", 2015, № 3. էջեր 86-89

հարկադրանքի միջոցների բուն էությանը, որը մշտապես դիտարկվում է որպես քրեական պատժին հակոտնյա մի բան, այլ ոչ թե որպես պատիժ՝ կատարած հանցագործության համար: Այդ միջոցները հիմնականում նպատակ ունեն ոչ թե պատժել կատարածի համար, այլ ուղղել հանցագործություն կատարած անձին, որպեսզի ապագայում նա կրկին չխախտի օրենքը: Դա է դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների արմատական տարբերությունը քրեական պատժից: Սակայն դրանց միջև կա նաև նմանություն, այն, որ և՛ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները, և՛ քրեական պատիժը հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառում է պետությունը որպես արձագանք ավելի վաղ կատարված հանցագործությանը: Այդ է մատնանշում, մասնավորապես, հենց այդ միջոցների անվանումը՝ հարկադրանքի, այսինքն՝ պետության կողմից ձեռնարկվող:

Բացի այդ, դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներին հատուկ է այն, որ դրանք անհատական բնույթի են: Այսինքն՝ դրանք կիրառվում են՝ հաշվի առնելով կոնկրետ անչափահաս մեղադրյալի անձը: Առանց դրա դրանք անհմաստ կլինեին, քանի որ չէին կարող հասնել իրենց բուն նպատակին՝ որոշակի հանցագործություն կատարած անչափահասի, մեղադրյալի ուղղվելուն: Ընդ որում, հաշվի են առնվում, առաջին հերթին, անձնային առանձնահատկությունները, որոնք նպաստել են հանցագործությունը կատարելուն, որպեսզի դրանք ուղղվեն՝ կանխելով հետագայում նույն անչափահասի կողմից նոր հանցագործություններ կատարելու հնարավորությունը: Ուղղումը միշտ էլ առանձնահատուկ և բարդ դաստիարակչական գործընթաց է՝ պայմանավորված արդեն իսկ թույլ տրված մանկավարժական սխալները հաղթահարելու անհրաժեշտությամբ, որը հիմնվում է կոնկրետ անչափահասի առանձնահատկությունների իմացության վրա: Անհատական բնութագրից դուրս ուղղվելու գործընթացն ուղղակի անհմաստ է:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներին բնորոշ է նաև պարտադիր բնույթը, ինչը նշանակում է, որ իրավահարաբերությունների բոլոր մասնակիցները պարտավոր են ենթարկվել օրինական ուժի մեջ մտած որոշմանը, որը հանձնարարում է կիրառել վերոնշյալ միջոցները: Առաջին հերթին դա վերաբերում հենց անչափահասին, որի նկատմամբ նշյալ միջոցները սահմանվել են: Այլ անձինք չպետք է

խոչընդոտեն նշյալ միջոցների իրականացմանը, իսկ հնարավորության դեպքում նաև աջակցեն դրանց: Վերոնշյալ միջոցները գործադրելու պահանջը խախտելու դեպքում նախատեսվում է դրանք փոխելու հնարավորություն և սահմանելու արդեն քրեական պատժի ավելի խիստ միջոցներ: Այդ մասին մասնավորապես նշված է ՀՀ քր.օր.-ի 91 հոդվածի 5-րդ մասում, ուր հստակ ասված է, որ անչափահասի՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափելու դեպքում որոշվում է նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Դրանով իսկ երաշխավորվում է անչափահասի ուղղվելու գործընթացը և հարկադրական ներգործության կոնկրետ միջոց կիրառելու արդյունավետությունը:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներին բնորոշ է այն, որ նրանք իրենցից ներկայացնում են ոչ թե պատիժ կատարած հանցագործության համար, այլ անչափահասների ուղղվելու և վերադաստիարակվելու միջոց¹³²: Այսինքն՝ դրանք դաստիարակչական բնույթի միջոցներ են, որոնց օգնությամբ պետությունը ձգտում է ուղղել դաստիարակչական գործընթացում առկա բոլոր այն թերությունները, որոնք հանգեցրել են այն բանին, որ անչափահասը հանցագործություն կատարի: Բացի այդ, դա նպատակ ունի օգնելու անչափահասին նրա սոցիալիզացման գործընթացում, որպեսզի բնականոն հարաբերություններ կառուցի հասարակության օրինապահ անդամների հետ: Տվյալ դեպքում ուղղվելը միջոց է, որը կոչված է լուծելու ոչ միայն անհատական մակարդակի խնդիրներ՝ կապված կոնկրետ անչափահաս իրավախախտի հետ, այլև հասարակական մակարդակի խնդիրներ՝ կապված նոր հանցագործությունների կանխման և նախազգուշացման հետ, ինչպես արդեն դրանք կատարած անձանց, այնպես էլ այլ անչափահասների կողմից: Անհրաժեշտ է նշել, որ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների մեղմությունը քրեական պատժի համեմատ արդեն ինքնըստինքյան դաստիարակչական նշանակություն ունի: Այն ցույց է տալիս անչափահասին ոչ թե պետության անհանդուրժողականությունը նրա նկատմամբ, այլ պատրաստակամությունը ներելու նրան կատարածը, բայց, դրանով հանդերձ, պահանջում է նրանից փոխել վերաբերմունքը իր արարքների, վարքի նկատմամբ, դառնալ օրինավոր քաղա-

¹³² Տե՛ս, Позднякова Р.Р. Правовая природа принудительных мер воспитательного воздействия: еще один тезис // Научные труды РАЮН. Вып. 13: в 2 т. Т. 2. - М.: Юрист, 2013. էջեր 699-701

քացի: Դրանով է արտահայտվում դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների սոցիալական նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը իր՝ թիվ ԵԱՆԴ/0094/01/13 նախադեպային որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Անչափահասները, պայմանավորված իրենց տարիքային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով, ունեն հատուկ հոգածության և խնամքի կարիք, ուստի արդարադատություն իրականացնելիս պետք է հաշվի առնել ձեռնարկվող միջոցառումների հնարավոր ազդեցությունը նրանց բարեկեցության վրա: Մասնավորապես, կիրառվող ներգործության միջոցների ընտրությունը պետք է պայմանավորված լինի ոչ միայն կատարված իրավախախտման ծանրությամբ, այլև անձի անհատական առանձնահատկություններով: Հասարակությունից մեկուսացնելու հետ կապված պատժատեսակները անչափահասների նկատմամբ պետք է կիրառվեն որպես ծայրահեղ միջոց՝ հնարավոր նվազագույն ժամկետներով և սահմանափակ ու բացառիկ դեպքերում, քանի որ ի տարբերություն չափահասների՝ ազատազրկման բացասական հետևանքները նրանց վրա ավելի մեծ ազդեցություն են թողնում:

Այսպես՝ հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի (մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն), հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հետ մեկտեղ դատարանը պատիժ նշանակելիս պետք է հատկապես հաշվի առնի՝

1) անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները (ընտանեկան դրությունը, ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ հարաբերությունների բնույթը, նյութական վիճակը, կրթությունը, աշխատանքը և այլն),

2) հոգեկանի զարգացման աստիճանը (հուզական ոլորտը, որոշակի իրադրությունում ճիշտ կողմնորոշվելու և իր գործողությունները ղեկավարելու ունակությունը, ինտելեկտի մակարդակը և այլն),

3) առողջության վիճակը (մտավոր և ֆիզիկական առողջության վերաբերյալ առկա տվյալները),

4) անձի այլ առանձնահատկությունները (հետաքրքրությունների շրջանակը, աշ-

խատանքի, կրթության, իրավական և բարոյական նորմերի նկատմամբ վերաբերմունքը և այլն),

5) նրա վրա այլ անձանց ազդեցությունը (նրանց միջև առկա հարաբերությունների բնույթը, անչափահասին հանցագործության մղելու եղանակներն ու միջոցները՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն, հարկադրանք, համոզում, խաբեություն և այլն)»¹³³.

Բացի այդ, պետք է հատուկ նշել նաև այն, որ չնայած դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների և քրեական պատժի միջև եղած տարբերություններին, դրանք ունեն նաև նմանություններ, ավելի որոշակի՝ այն, որ թե՛ մեկը, թե՛ մյուսը կիրառվում են անկախ այն անձի կամքից, որի նկատմամբ կիրառվում են¹³⁴: Բայց հենց այստեղ առկա է որոշ հակասություն, այն, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին հարցը վճռելիս պետք է ուշադրության առնվի մեղադրյալի գործուն գղջալու և մի շարք այլ հանգամանքներ, որոնք վկայում են անչափահասի ուղղվելու պատրաստակամության մասին: Այսինքն՝ քրեական հետապնդումը դադարեցնելու պայմաններից մեկը կարելի է համարել ինքնին անչափահասի ուղղվելու պատրաստակամությունը: Հետևաբար, ստացվում է, որ նրա նկատմամբ կիրառվող միջոցներն ուղղված են ոչ ընդդեմ նրա կամքի, այլ ընդհակառակը, նրա կամքով են: Սակայն դա հակասում է այն բանին, որ դրանք կոչվեն հարկադրանքի միջոցներ: Թեև իրականում այստեղ հակասություն չկա: Դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների և քրեական պատժի միջև այդուամենայնիվ կա տարբերություն հարկադրանքի չափի մեջ, որը կիրառվում է այն անձնանց նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվում է: Քրեական պատժի դեպքում այն անձի կամքը, որի նկատմամբ այն կիրառվում է, բոլորովին հաշվի չի առնվում, ինչ վերաբերում է դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներին, ապա դրանց հարկադրական լինելը լոկ այն է, որ անձը, որի նկատմամբ դրանք կիրառվում են, դրվում է այնպիսի պայմանների մեջ, որոնցում նա ինքն է այդ միջոցները համարում լավը: Այսինքն՝ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները պետք է դիտարկել միայն պայմանականորեն հարկադ-

¹³³ ՃԺ 1×é³μ»İ ¹³·³ñ³Ýի ÃÇİ ²²Ü./0094/01/13 áñáβումը:

¹³⁴ St'а, Скрипченко Н.Ю. Правовая природа принудительных мер воспитательного воздействия и их место в системе уголовно-правовых мер // Научные труды РАЮН. В 3-х томах. - М.: Юрист, 2008, Вып. 8 Т. 3. Էջեր 422-428:

րական, քանի որ հարկադրանքն այստեղ համադրվում է անչափահասի կամքի հետ, որը, կանգնած լինելով ընտրության առջև, հարկադրված է ընդունելու դրանք:

Սակայն, բացի նշյալ ասպեկտներից, որոնք բնութագրում են դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների բնույթը, հարկավոր է հատուկ ընդգծել, որ այդ բնույթն ունի երկիմաստություններ նաև քրեական դատավարությունում: Նա օժանդակ բնույթի է, սակայն շնորհիվ դրա հնարավոր է դառնում առավել լիարժեքորեն հասկանալու այդ միջոցների բնույթը: Մասնավորապես, այդ միջոցները կիրառելը պետք է ենթադրի դրանց հարկադրիչ բնույթից զատ նաև այն, որ անչափահասը չպետք է մերժի դրանք՝ իբրև ի սկզբանե անընդունելի: Ինքնըստինքյան անչափահաս մեղադրյալի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու ընթացակարգը պետք է ունենա դաստիարակչական բնույթ, քանի որ նման որոշում կայացնելու դատավարական կարգն ըստ էության անչափահասին վերադաստիարակելու գործընթացի մի փուլն է: Չէ՞ որ անչափահասն իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար իրեն պետք է դրսևորի այնպես, որ քննիչը ոչ մի կասկած չունենա առ այն, որ ուղղվելը հնարավոր է: Իսկ նման կերպ ինքն իրեն դրսևորել կարելի է միայն գործողությունների միջոցով, որոնք անչափահասին դնում են այնպիսի իրավիճակի մեջ, երբ ոչ մի այլ բան չի մնում, քան վերաիմաստավորել իր հայացքներն ու վարքագիծը: Դրանով իսկ, ստացվում է, որ ելնելով քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգային առանձնահատկություններից, քննիչն առաջիններից մեկն է նախաձեռնում դաստիարակչական ներգործություն անչափահաս մեղադրյալի նկատմամբ: Այսինքն՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու դատավարական կարգը դառնում է անչափահասի նկատմամբ ներգործության դաստիարակչական միջոց, թեկուզ քրեական և քրեադատավարական օրենսդրություններով ուղղակիորեն չնախատեսված:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում ոչ մի տեղ չի նշվում, թե ինչ նպատակ է հետապնդում դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելը: Դրանով հանդերձ՝ նման դրույթի բացակայությունը չպետք է դիտել որպես օրենսդրության թերություն, քանի որ իրավակիրառ պրակտիկայում այն չի հանգեցնում ինչ-որ սխալների կամ նույնիսկ սովորական թյուրընկալման: Դիտարկ-

վող միջոցների անվանումից իսկ միանգամայն ակնհայտ է, որ դրանք նպատակ ունեն վերադաստիարակելու այն անչափահասին, որի նկատմամբ դրանք կիրառվում են: Օրինակ՝ ՀՀ քր.օր.-ի 91 հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կարող են կիրառվել միայն այն անչափահասի նկատմամբ, որին ուղղել հնարավոր է: Ակնհայտ է, որ նման ձևակերպումը մատնանշում է դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառման նպատակը՝ անչափահասի ուղղվելը: Դա էլ հենց պայմանավորում է այն միջոցների բնույթը, որոնք կարող են կիրառվել նրա նկատմամբ:

Քրեական օրենսդրությունը սահմանում է դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները դրանք թվարկելով: Այսպես, ՀՀ քր.օր.-ի 91 հոդվածի 2-րդ մասում նշված է չորս այդպիսի միջոց՝ 1) նախազգուշացում, 2) ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով, 3) պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում, 4) ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները նշված են քրեադատավարական օրենսդրությունում կա՛մ պատժից ազատելու կապակցությամբ (ՀՀ քր.դատ.օր.-ի 443 հոդված), ապա դրանք հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն քրեական իրավունքի տեսանկյունից, այլև քրեական դատավարության տեսանկյունից: Չէ՞ որ դրանք կարելի է դիտարկել որպես համապատասխան որոշումը (պատժից ազատելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը) կայացնելու հիմք: Նշյալ միջոցների թվարկման հերթականությունը ենթակա չէ որևէ օրինաչափության և հիմնականում պատահական է:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներից առաջին նախազգուշացումն է: ՀՀ քր.օր.-ի 92 հոդվածում բացատրվում է, թե ինչ պետք է հասկանալ դրա ներքո: Այն սահմանվում է որպես անչափահասի պատճառած վնասի, ինչպես նաև հանցանքների կրկնակի կատարման անթույլատրելի լինելու պարզաբանում ան-

չափահասին: Նախազգուշացումը հանցանք գործած անչափահասի մեղավոր վարքագծի պարսավանքի արտացոլումն է¹³⁵: Դրանով է պայմանավորված դրա խորը հոգեբանական ազդեցությունը, որի նպատակը անչափահասին ներշնչելն է, որ նրա վարքը արժանանում է բոլորի պարսավանքին, իսկ պետությունը լոկ նրան է հասցնում այդ պարսավանքը: Ակնհայտ է, որ դա կոչված է անչափահասի մեջ ձևավորելու հիմք՝ վերափոխելու իր հիմնական հայացքներն ու դիրքորոշումները հակաօրինական վարքի նկատմամբ: Նշյալ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցը կիրառելու հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել անչափահասի անձը, որն արդեն գիտակցել և զղջացել է իր կատարած հանցագործության համար: Ընդ որում, պետք է նաև հաշվի առնել բնակության, աշխատանքի, ուսման վայրերից տրված բնութագրերը, բարենպաստ ընտանեկան վիճակը, քանի որ դրանց բացակայության դեպքում դրական դաստիարակչական արդյունք ստանալ հնարավոր չէ: Նախազգուշացումը նաև զգուշացնող միջոց է հետագայում համանման և այլ տեսակի հանցավոր գործողությունների չդիմելու, ուստի այն ունի կանխարգելիչ նշանակություն:

Առանձնահատուկ պետք է նշել այն, որ նախազգուշացում կիրառելու հնարավորությունը որոշվում է դեռ անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական պատժից ազատելու մասին հարցը լուծելիս: Փաստացի արդեն այդ հարցերը լուծելիս հավաքվում են նյութեր, որոնցից արվում է հետևություն նշյալ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցը կիրառելու հնարավորության մասին: Այդ նյութերը հավաքելիս անխուսափելի են զրույցները անչափահասի հետ, որոնց օգնությամբ ոչ միայն հավաքվում է անհրաժեշտ նյութը, այլև փաստացի կանխանշվում է հետագա նախազգուշացումը, քանի որ անչափահասին ներշնչվում է այդուհետ հանցագործություն կատարելու անթույլատրելիության մասին միտքը¹³⁶: Ուստի նախազգուշացումը դառնում է անչափահասի հետ տարվող՝ դրան նախորդող ամբողջ կանխարգելիչ աշխատանքի արդյունքը:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի մյուս միջոցը ծնողների կամ

¹³⁵ Տե՛ս, Горшенин А.А. Виды принудительных мер воспитательного воздействия // Уголовно-исполнительная система: право, экономика, управление. – М.: Юрист, 2011, № 4. էջեր 19-22:

¹³⁶ Տե՛ս, Ожиганова М.В. Применение принудительных мер воспитательного воздействия в отношении несовершеннолетних, не являющихся субъектами уголовной ответственности, как вид особого производства в системе уголовно-процессуальных производств // "Черные дыры" в Российском Законодательстве. Юридический журнал. – М.: "ИК-Пресс", 2007, № 2. էջեր 216-218

նրանց փոխարինող անձանց հսկողությանը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի վերահսկողությանը հանձնելն է առավելագույնը վեց ամիս ժամկետով (<< քր.օր., 91 հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ): Նշյալ միջոցին բնորոշ է անչափահասի նկատմամբ մշտական և ինտենսիվ ներգործությունը՝ նրան օրինապահ վարքագծի կարծրատիպեր ներշնչելու և ցանկացած օրինախախտում մերժելու նպատակով: Տվյալ միջոցը ելնում է այն բանից, որ անչափահասի վարքի համար պատասխանատվություն կրում է ոչ միայն անչափահասը, այլև նրա ծնողները, որոնք պարտավոր են շտկել նրա դաստիարակության այն թերությունները, որոնք հենց իրենք էլ թույլ են տվել: Բացի այդ, դաստիարակչական ներգործության հարկադրանքի նշյալ միջոցը կոչված է վերականգնելու անչափահասի կապը ընտանիքի հետ, քանի որ այդտեղ է թաքնված այն բանի երաշխիքը, որ այդուհետ անչափահասի վարքագիծը պայմանավորված է լինելու ընտանեկան արժեքներով և դիրքորոշումներով¹³⁷: Հենց այդ պատճառով նշյալ միջոցը կարող է կիրառվել միայն այն դեպքերում, երբ ընտանիքում տիրապետում են պետության և հասարակության կողմից ընդունված արժեքները, որոնք ներդաշնակ են գործող օրենսդրությունում ամրագրված արժեքների հետ: Միանգամայն ակնհայտ է, որ նշյալ միջոցը լիովին անօգուտ կլինի, անգամ վնասակար, եթե ընտանիքն ինքը և նրանում կենցաղավարող հարաբերություններն են դարձել պատճառ, որ անչափահասը հանցագործություն կատարի: Դաստիարակչական ներգործության հարկադրանքի այս միջոցը նշանակելիս անհրաժեշտ է նաև համոզվել, որ համապատասխան անձինք ունակ են հասնելու դաստիարակչական արդյունքի՝ անչափահասի ուղղվելուն, սեփական խնդիրները հանցանք գործելու միջոցով լուծելուց հրաժարվելուն: Ցավոք, լինում են դեպքեր, երբ ծնողները օրինապահ քաղաքացիներ են, որոնք մերժում են քրեական արժեքները, սակայն տարբեր պատճառներով ի զորու չեն ազդելու անչափահասի վրա: Ուստի նման դեպքերում անչափահասին նրանց հսկողությանը հանձնելն անիմաստ է:

Սակայն օրենսդիրը ելնում է այն բանից, որ ոչ միայն ընտանիքը պետք է պատասխանատվություն կրի անչափահասի սխալ դաստիարակության համար, ինչի հետ-

¹³⁷ Ст'у, Чокаева И.В. Передача несовершеннолетнего под надзор родителей или лиц, их заменяющих, либо специализированного государственного органа // Восьмые Всероссийские Державинские чтения (Москва, 14 декабря 2012 года): сборник статей: в 7 кн. Кн. 5: Проблемы уголовно-процессуального и уголовного права, криминалистики и криминологии. - М.: РПА Минюста России, 2013. էջեր 261-264:

կանքով նա հանցագործություն է կատարել, այլև պետությունն ու հասարակությունը՝ ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների կամ համապատասխան իրավասու մարմնի: Թերևս նման մոտեցումը նպաստում է վերականգնելու անչափահասի և հասարակության միջև կապը, թույլ է տալիս նրան նայել իր շրջապատի մարդկանց ոչ թե թշնամության ու ատելության ոսպնյակի միջով, այլ բարեկամական վերաբերմունքի՝ տեսնելով, որ իրեն ընդունում են որպես հասարակության արժանավոր անդամի և ակնկալում իրենից հասարակության համար նշանակալի արարքներ¹³⁸: Հաշվի առնելով, որ նմանատիպ ներգործությունը տևական ժամանակաընթացքում կարող է հոգնեցնել անչափահասին, իսկ հոգեբանական ազդեցությունը չափից դուրս շատ լինել նրա համար, օրենքը սահմանափակել է դաստիարակչական ներգործության հարկադրանքի այս միջոցի կիրառման ժամանակահատվածը: Այս միջոցը կիրառելու առավելագույն ժամկետը կարող է լինել վեց ամիս: Դա լիովին արդարացված է անչափահասի հոգեկան զարգացման առանձնահատկություններից ելնելով: Այսպես, թիվ ԵԱՆԴ/0011/01/17 քրեական գործով Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ամբաստանյալներ Արտյոմ Բաղրամյանի, Աշոտ Գրիգորյանի և Հայկ Գրիգորյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և նրանց դրական բնութագրող հանգամանքները էականորեն նվազեցնում են կատարած հանցավոր արարքների և նրանց անձերի հանրության համար վտանգավորության աստիճանը, ելնելով անչափահասների բարեհաջողության որոշիչ գործոնից, ինչը որպես սկզբունք ամրագրված է ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում և Պեկինյան կանոններում՝ Դատարանը գտնում է, որ անչափահասներ Արտյոմ Բաղրամյանի, Աշոտ Գրիգորյանի և Հայկ Գրիգորյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժ կրելու, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գիտի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի միջոցների կիրառմամբ: Դատարանը որոշեց Արտյոմ Բաղրամյանի, Աշոտ

¹³⁸ St'u Магомедова А.М. Передача несовершеннолетнего под надзор родителей или лиц, их заменяющих, либо специализированного государственного органа // Пробелы в российском законодательстве. - М.: Медиа-БАК, 2011, № 3. էջեր 66-167:

Գրիգորյանի և Հայկ Գրիգորյանի, որոնք մեղադրվում էին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով քրեական պատասխանատվությունից և նրա նկատմամբ կիրառել՝ ծնողների հսկողությանը 6 /վեց/ ամիս ժամկետով հանձնելը՝ դաստիարակչական հարկադրանքի միջոցի կիրառելը՝ ազատելով նրանց քրեական պատասխանատվությունից¹³⁹: Տվյալ քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա էին բոլոր նախադրյալները նշված մեղադրյալների նկատմամբ դաստիարակչական միջոց կիրառելու համար:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի նշյալ միջոցը կիրառելու հնարավորության մասին հարցը լուծվում է քրեական գործի նյութերի հիման վրա, որոնք հնարավորություն են ընձեռում պարզելու, թե ինչ չափով է անչափահասը մանկավարժական դիտանկյունից թողտվության արժանացել և ինչ չափով է ունակ ընկալելու դաստիարակչական ներգործությունը: Դա բացահայտվում է նաև ելնելով ամբողջ քրեական դատավարության ընթացքում իրականացված դիտարկումներից: Բացի այդ, անչափահասի նկատմամբ կիրառվող դատավարական ներգործության միջոցներն ինքնին յուրօրինակ փորձություն են նրա համար՝ պարզելու դաստիարակչական ներգործության հարկադրանքի նշյալ միջոցը կիրառելու հնարավորության հարցը: Ակնհայտ է, որ եթե անչափահասը ձգտում է ամեն կերպ հակառակվել քրեական դատավարության ընթացքին, ապա դաստիարակչական ներգործության հարկադրանքի քննարկվող միջոցները կիրառելն ուղղակի անօգուտ է:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի ևս մեկ միջոց է պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը դատարանի կողմից սահմանված ժամկետներում (ՀՀ քր.օր.-ի 91 հոդված, 2-րդ մաս, 3-րդ կետ): Նշյալ միջոցը և՛ տեսության մեջ, և՛ պրակտիկայում ամենաարդյունավետներից է, քանի որ հնարավորություն է տալիս անչափահասին անձամբ համոզվելու պատճառած վնասի չափի, իսկ դրա միջոցով նաև արարքի ծանրության մեջ: Սակայն պետք է նշել նաև նշյալ միջոցի այնպիսի առանձնահատկությունները, որոնք սահմանափակում են դրա կիրառման պրակտիկան: Այսպես, անհրաժեշտ է հաշվի առնել այն, թե ունի արդյոք անչափահասն ինքնուրույն եկամուտ և աշխատանքային ունակություններ: Բանն այն է, որ եթե պատճառված վնա-

¹³⁹ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի «12» հունիսի 2017 թվականի թիվ ԵԱՆԴ/0011/01/17 քրեական գործով որոշումը:

սը հատուցվելու է նրա ծնողների կամ նրանց փոխարինող անձանց եկամտից, ապա դա կարող է նաև չունենալ որևէ դաստիարակչական ազդեցություն: Անչափահասը կարող է համարել դա պարտավորություն և անհրաժեշտ հետևություններ չանել հետագայում հանցավոր կամ այլ հակաօրինական վարք դրսևորելու անթույլատրելիության մասին: Ավելին, եթե կատարված հանցագործությունը հետևանք է ծնողների կամ նրանց փոխարինող անձանց հետ անչափահասի ունեցած բարդ հարաբերությունների, ապա դաստիարակչական ներգործության հարկադրանքի նման միջոցն ինքնին նրա կողմից կրնակավի որպես այդ մարդկանց հատուցելու գործողություն: Պարզ է, որ այդ դեպքում որևէ դաստիարակչական ներգործության մասին խոսք լինել չի կարող:

ՀՀ քր.օր.-ի 92 հոդված 3-րդ մասում նշված է, որ անպայման պետք է հաշվի առնվի անչափահասի գույքային դրությունը:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի նշյալ միջոցի առանձնահատկությունն այն է, որ այն վերականգնողական արդարադատության տարրերից մեկն է, որի գաղափարներն ու սկզբունքները ներկայումս համարվում են առավել արդար ու մարդասիրական: Ընդ որում, դաստիարակչական ներգործության հարկադրանքի այդ միջոցը կիրառելու շնորհիվ վերականգնվում է ոչ միայն հանցավոր գործողություններով պատճառված վնասը, այլև հարաբերությունները հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անչափահասի և այդ հանցագործությունից տուժողի¹⁴⁰: Դրանով անչափահասը հայտնվում է այնպիսի իրավիճակում, երբ հարկադրված է վերանայել իր վերաբերմունքը կատարած հանցագործությանը և դրա հետևանքներին:

Դաստիարակչական առավել մեծ արդյունք ստացվում է այն դեպքերում, երբ անչափահասը հատուցում է իր պատճառած վնասը սեփական աշխատանքով: Աշխատանքը ինքնըստինքյան միշտ ունեցել է և ունի ամենամեծ դաստիարակչական ներուժը մյուս դաստիարակչական միջոցների համեմատությամբ: Այն թույլ է տալիս անչափահասին առավելագույնս լիարժեքորեն գնահատել իր պատճառած վնասը և ամբողջությամբ հասկանալ իր հանցավոր գործողությունների հասարակական վտանգավորությամբ:

¹⁴⁰ St'а, Кондратовская С.Н. Обязанность загладить причиненный вред как мера воспитательного воздействия, применяемая к несовершеннолетнему преступнику // Проблемы исполнения уголовных наказаний, не связанных с лишением свободы, и применения иных мер уголовно-правового характера в отношении несовершеннолетних. Сборник материалов международной научно-практической конференции (Вологда, 7 декабря 2005 г.): В 2-х частях. - Вологда: ВИПЭ ФСИН России, 2006, Ч. 2. - էջեր 60-65

յան չափը¹⁴¹: Բացի այդ, հաճախ պատճառված վնասը հատուցելու նպատակով կատարվող աշխատանքների ընթացքում անչափահասը հնարավորություն է ունենում շփվելու տուժողի հետ, ինչը ևս դրական նշանակություն է ունենում նրա ուղղվելու հարցում: Այդ դեպքում նա հնարավորություն է ունենում տեսնելու, թե ինչ բարոյական վնաս են հասցրել իր գործողությունները և գիտակցել կատարվածի անթույլատրելիությունը: Սակայն պետք է նշել, որ սեփական աշխատանքով վնասը հատուցել հնարավոր է միայն, եթե հանցագործություն կատարած անչափահասն ունի համապատասխան ունակություններ, որոնց շնորհիվ իրոք կարող է հատուցել պատճառված վնասը: Այդ մասին ուղղակիորեն նշված է Հայաստանի Հանրապետության քր.օր.-ի 96 հոդվածի 3-րդ մասում:

Դաստիարակչական ներգործության հարկադրանքի ևս մեկ միջոց է ժամանցի սահմանափակումը և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը առավելագույնը վեց ամիս ժամկետով (<< քր.օր.-ի 91 հոդվածի 2-րդ մաս, 4-րդ կետ): Նշյալ միջոցում առավել ակներև են անչափահասի իրավունքների ու օրինական շահերի սահմանափակումները: Ավելին, նշյալ սահմանափակումների չափը մոտեցնում է դաստիարակչական ներգործության հարկադրանքի նշյալ միջոցը քրեական պատժին, քանի որ նշյալ սահմանափակումներում կարելի է տեսնել նաև պատժի որոշ տարրեր: Սակայն հարկ է նշել, որ տվյալ դեպքում իրավունքի սահմանափակումները այնուամենայնիվ ոչ թե պատժիչ, այլ դաստիարակիչ նշանակություն ունեն: Իրավունքների սահմանափակման պատճառն այն է, որ առանց դրա անհնար է կազմակերպել կոնկրետ անչափահասի վերադաստիարակման գործընթացը: Ընդ որում, դաստիարակչական գործընթացում նշյալ իրավունքների սահմանափակումը կոչված է պայմաններ ստեղծելու կոնկրետ անչափահասի ուղղվելու համար: Դաստիարակչական ներգործության հարկադրանքի նշյալ միջոցը կիրառելու գլխավոր նպատակը, որպես կանոն, անչափահասին այլ անձանց բացասական ազդեցությունից պաշտպանելն է: Կարծում ենք՝ նման պայմաններում է հնարավոր իրականացնել առավելագույնս արդյունա-

¹⁴¹ St'а, Боровиков С.А. Некоторые вопросы возложения обязанности на несовершеннолетнего загладить причиненный преступлением вред // Уголовная и уголовно-исполнительная политика современной России: проблемы формирования и реализации. Тезисы Международной научно-практической конференции (Вологда, 14-15 декабря 2006 г.): В 2-х частях. - Вологда: ВИПЭ ФСИН России, 2006, Ч. 1. - էջեր 280-283

վետ վերադաստիարակումը: Նշյալ միջոցն ընդունվում է այն դեպքերում, երբ նախաքննության և դատական քննության ընթացքում բացահայտվում է անչափահասի վրա սոցիալական միկրոմիջավայրի բացասական ազդեցությունը, որում նա ապրել է, սովորել կամ աշխատել:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ընդգծել, որ թվարկված դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցների կիրառումը ժամանակային առումով սահմանափակ է: Դրանով օրենսդիրը ընդունում է, որ չնայած այն բանին, որ այդ միջոցները քրեական պատժաձև չեն, սակայն դրանք ևս սահմանափակում են անչափահասի իրավունքներն ու ազատությունները, ուստի և չեն կարող լինել անժամկետ: Այսպես, ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց հսկողությանը, կամ դատապարտյալի վարքագծի վերահսկողությունը իրավասու մարմինն կամ տեղական ինքնակառավարման մարմինն հանձնելը (<< քր.օր.-ի 91 հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ), ինչպես նաև ժամանցը սահմանափակելը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանելը (<< քր.օր.-ի 91 հոդվածի 2-րդ մաս, 4-րդ կետ) սահմանափակված են վեցամսյա ժամկետով, իսկ պատճառված վնասը հարթելու համար պարտականություն դնելու ժամկետը որոշում է դատարանը (<< քր.օր.-ի 91 հոդվածի 2-րդ մաս, 3-րդ կետ):

Անչափահասի նկատմամբ կարող է կիրառվել ոչ թե մեկ, այլ միանգամից մի քանի դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ (<< քր.օր.-ի 91 հոդվածի 4-րդ մաս): Դա լիովին արդարացված է, քանի որ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միայն մեկ միջոց կիրառելով հնարվոր չէ հասնել անչափահասի ուղղվելուն¹⁴²: Սակայն պետք է նաև հաշվի առնել, որ վերադաստիարակումն ինքնին չի կարող հանգեցվել միայն դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելուն. դրա հետ մեկտեղ կիրառվում են նաև անչափահասի ուղղվելուն նպաստող դաստիարակչական ներգործության այլ միջոցներ: Սակայն գործող քրեական օրենսդրությունում այդ մասին ոչինչ ասված չէ: Պրակտիկայում դա կարող է ծնել պաշտոնական մոտեցում անչափահասի ուղղման գործընթացին, երբ կիրառվում են լոկ դաստիարակչական ներգործության հարկադրանքի նախատեսված միջոցները, իսկ բուն դաստիարակչական գործընթացը չի լինի, քանի որ նշյալ միջոցները կարող

¹⁴² Ст'у, Иванов П.В. Порядок назначения принудительных мер воспитательного воздействия // Ученые записки ДЮИ. - Ростов-на-Дону: Изд-во ДЮИ, 2006, Т. 30. էջեր 34-42

են կիրառվել չհամակարգված, ձևականորեն: Ուստի ճիշտ կլիներ, որ օրենքում նշվեր այն մասին, որ դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցները դաստիարակչական գործընթացի մասն են, որի իրականացման համար պատասխանատու պետք է լինի համապատասխան սուբյեկտը:

Քրեական և քրեադատավարական օրենսդրության հիմնական խնդիրներից է դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին հարցի լուծմանը անչափահասների հոգեբանությանը խորագիտակ անձանց մասնակցելը: Առավել նպատակահարմար է այդ նպատակով ներգրավել տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների սոցիալական աշխատողների: Դա թույլ կտա, նախ, պարզել համապատասխան անչափահասի մանկավարժական թողտվության չափը, երկրորդ, ճիշտ ընտրել դաստիարակչական ներգործության հարկադրանքի այն միջոցները, որոնք արդյունավետ կլինեն կոնկրետ անչափահասին վերադաստիարակելու համար: Դրան համապատասխան անհրաժեշտ է փոփոխություններ կատարել գործող քրեադատավարական օրենսդրության մեջ, մասնավորապես ներառելով նորմ և՛ նախաքննության փուլում, և՛ դատական քննության փուլում այդպիսի մասնագետի մասնակցության մասին: Մասնագետի մասնակցությունը թույլ կտա ճիշտ գնահատել կատարված հանցագործությունը, դրանում մեղավոր անչափահասի անձը և դրա հիման վրա ճիշտ լուծել դաստիարակչական ներգործության հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորության մասին հարցը: Պետք է նշել, որ 216թ. մայիսի 17-ին ընդունվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը, որի 49-րդ գլուխը նվիրված է պրոբացիայի անչափահասների նկատմամբ իրականացվող պրոբացիայի առանձնահատկություններին: Կարող ենք ասել, որ սույն օրենքով ստեղծվեց այն մարմինը, որն իրականացնում է հսկողություն նաև անչափահասների նկատմամբ դաստիարակչական միջոցների կիրառման նկատմամբ:

ՎԵՐՋԱԲԱՆ

